Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

13593

[illegible]

Հատ. III

891.99
Ս-50

Բագու 1901

№ 2003

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԹՈՎՄԱՍ Ս. ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ:

ՏՄԲԼԱՉԻ ԽԱՉԱՆ

# ՉՈՒՌՆԱ-ՏՄԲԼԱ

[1893—1900 թ.]

ՀԱՏՈՐ III

*(Արտատպուած Նոր-Դարից։)*

391.99
Մ-50

ԲԱԳՈՒ.
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ".
1901.

891.99
Մ-50

ՏՄԲԼԱՁԻ ԽԱՉԱՆ

# ԶՈՒՌՆԱ-ՏՄԲԼԱ

[1893—1900 թ.]

ՀԱՏՈՐ III.

(*Արտատպուած Նոր-Դարից։*)

ԲԱԳՈՒ.
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ".
1901.

3081

222

Дозволено Цензурою, Тифлисъ, 23 Января, 1901 г.

Գոս. Հանրապ. գրադարան
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ССРА
им. А. Мясникяна
Ա. Մյասնիկյանի անվան

4878
41

Զիջանելով մեր բարեկամների շատերի խնդրին, հրատարակում ենք մեր Ֆիլիետոնների III հատորը, որը յուսով ենք նոյն ընդունելութիւնը կգտնէ, ինչ որ առաջին երկու հատորները, որ ծաղկաքաղ հրատարակած ենք:

Դժուարիմաց բառերի բացադրութիւնը ընթերցողը կըգտնէ երկրորդ հատորի վերջում կցած համառօտ բառարանում:

Այսու պարտք ենք համարում մեր շնորհակալութիւնը յայտնելու այն անձանց, որոնք բարոյապէս խրախուսած են մեզ մեր չնչին լուման եւս ձգելու հասարակաց մտաւոր գանձարանի մէջ:

**Կոստանդին Կ. Մելիք-Շահնազարեանց:**

# ՁՈՒՌՆԱ-ՏՄԲԼԱ

[1893 Թ.]

## ԾԱՆՈՒՑՈՒՄ.

1892 *թիւ Մեարգի տասն օխտին Տմբլաչի Խաչանին հետն ու Թեխուալը կորաւ. չատերն ասըմ ըն եր հմբարցուխց, չատերն էլ Թա մեռաւ, Թա զորԹ ինի, ընեցէք աստուած հոքին լիսաւերի։*

*Ոզորմածհոքին ասըմ ըն վէչ մէծ կայք ար Թողալ, վէր իւրան ժեառանգնէն մին մինու կլխաւ լօք տալու երա հւըքուին, ժըղովուրԹ կանչին, զէր գիրացու զաԹար քցած՝ առօք փառօք տանին Թըղին, սըտըստ էլ երա լեաց ինին, էրնն էլ նստին՝ Թալխւ մհալու սուզու ատվալատու չէմբեր մչելու՝ հգեր հետ խեղճին զեօռըազեօռ ընելու՝ խած չիլածը պըժըն պէժին անին, վէչ իւրան օրըմը ըստրա ընգրա խուլխ Թիրան պերանան խըլեւ Թուփ ըրած փազեր ծնար, վէր մընելին երա մին Թուլուֆայի եօր ծնար պարեկործալան պէներու տար, ըրած մեխկերան Թըմըզուար, անըմն էլ աղկի պարերար տխւս կեար, վէչ էլ չնորք ծնար աղկի լիսաւերուԹեան փողբաԹը եօր ունելի, վէր մէծ մէծ պէներա տխւս տար,*

գլամին պոկաւը հինչ վճիռնէ ասիս տինար, մըռնելուց փունջերաւ, ճառեր խուսելաւ, գմըզալ սրքելաւ տանեին թզին, անըմը չրու օխտըինջի երգինքը տիւս պիրին։ Ըտրանից վեչ մինն էլհա լիսահոքին օնար վէչ։ Սուս ու փուս ծնվալ ար, սուս ու փուս ապրալ, սուս ու փուս էլ մեռալ. (մին պէրան էլ ըսեցէք աստուած հոքին լիւսաւերի)։ Թողած էրկու գալամ կայքը ղազիմի զուռնան ար մին էլ տմբըլան իւրան կուպըլնէրաւը, էտ էլ առաչուց կտակ ար ըրալ—թա վէր իւրան նման ուստայ մարթ տիւս կեայ, տան իւրան պընըցնի, թա վէր խափ մարթ չի ճարուի, տինեին կացնեին տակին, փչըին, հացի բուցի մարթոց ըռէխ չընգնի, իւրան անըմը տափաւը տայ։

Խաչանին եր հմբըցվելան ետը, պարեկամնէն հալալ իրեք ամէս ըստեղ ընտեղ չըռ եկին, վէր մին չնորքին մարթ ճարին, Զուռնա-Տմբլան թափչուր անին, ճեանդ չընգաւ, հիւր վէր ճոկըմ ին, Խաչանը ըրազի հթեթայ ար տամ, թա ես զարուլ չըմ, իմ զուռնան էտ չալթուքեասաններին ռեխը մէք քցել։ Վերջը կանչեցին Ուհան պեյուն, (ողորմածհոքին սազիքան նհետը շատ դոստ ար) էս գեօնըմ պէնեըը օնգատը ընգաւ, Խաչանը գեասալի էն գիւնեան թըզըրամ ար ըրալ, շնհաւեր ըրալ, մին զօլլամա պարովակիր էլ թըզըրամին մէչին տիրալ, վէր չիւտ տեղ հանի։ Էտ պարովակիրին զօրութիւնն էս ա։

ԷՆ ԴԻԻՆԸԻՆ ԱՀՎԱԼԱԹԱՆ։

*Սիրելի Ուհան պեյի,*

1893 թվին Մեարգի ամսըմը մին փըսընդիու բչեր խռըփըչ տանը քըն իլած վախտս, մին էլ տեսնամ մինը



կողքըս բշտի-բշտի ա տամ, Խաչա՛ն, եր կայ, Խաչա՛ն, խըրէգ հինչ քըն լինիս, եր քինանք, եկալ ըմ հետատ։

— Ադա հի՛նչ հրմնքըռ վախտ ա, պէլըս, թա կլխտ ծի ա քացի տւալ. վէր քսան մանէթ էլ տաս, կեալ չըմ, վէննը չըմ փոխել ըսելաւ՝ էնա օղըմի եօրղանիս տակը նի խռկըվլիմ, մըծմըծոնաց նման չէշտ քըն տամ, տեսնամ մին լեաւ չեափաքի տրաքից իրեսիս. քեզ ասըմըմ եր, եկ, քանի թակ չըս կէրալ, թա չէ պէնը վէր զոռին ընկաւ, քեզ քամու ըռէխ ընգած թեփուռու նման գեօգդա եօր կօնիմ։

Ես սեարսամից իլած՝ տեղաս ծլոնգ իլի տեսնամ էս զօրբա զօրբա խօսողը հու՛ ա, էս չէափաքի տըըքցնողը հինչ ֆեանդի տեար ա, մին ալխստի պրխտաւ կանչիմ, պրատակոլ չինել տամ, դուսախանըմը նստըցնիմ, մին էլ վա՜յ քու տղիս տըլին, վէր տէսի վէչ Կափրէլ գայլն ա, եկալ ա ինձ էն գիւնեան քուչըցնի, ծվվանս կտրից, վըննը ծեռքըս թիւլացաւ, անսէս լիւզուս փուխեցի։

—Ա՜, տու՛ ըս, բախչի քմմատաղ, ճընընչեցի վէչ, գիդամ թա հրսնընքտանա ըն կանչըմ, բա էս ծիւն ծմեռնը աջար աջար հօրըս եկալ, հշտ՞եղըս քինըմ։

Իստի չգիդալըս տիրած՝ մին հովուր տէս ու տէն էլ ընգի, ամանէքը չըլխկըըլխկցրի, սմավարը թափ տուի, եանի թէ օզըմ ըմ թեադարիք տեսնամ պատիւ տամ, չայ խմըցնիմ (խօսքը մէր մէչը մնայ, վէչ մին քցելի չայ օնինք տանը, վէչ էլ երկու կռոճ չեաքար), տեսնամ ընդեղան ետ տեռաւ թա „Խաչան, հի՛նչ պէնի ըս, ես եկալ ըմ քեզ էն գիւնեան տանիմ, հօրըս մօլաւ—չոլաւ անըմ“։

— Բօ, բօ, ըսեցի, հի՜նչ բէյվախտ էն գիւնխան քինալ ա. բա խօխէքս մեխկ չ՞ըն, վէր գիդան ինձ հի՜նչ կասին. անսէս եա տեռ տեղտ, ասի Խաչանը տանը չար, քեցալ ա սեաֆար, մին էլ գեալաջալ ա տօն կեալու, քեզ հի՞նչ բեզմա անին. ըհ՞ը, ձա էս էլ քու վընըհալսկին, երգինք կէտինք վկայ, ըօրանա իւիլ օնիմ վէչ, օղըմըս ջուբերըս պըտըռի։

Ըհա սիպտակ աբասանուցը էնա օղըմի հափըմը տինիմ, սէրտը չահիմ, վէր եախսա պեց թօղի, (չիւն աթաբաբա լալինք ու տեսալ, վէր ըռըշվաթը մթէն տեղը լիւս կտայ), տէսնամ մին լթնթալաչէլ ուռըցրաւ զըչչալը։ Էտ էրկուինջի թխէլին երայ՝ լափ խտախ նի կայաւ, էնա ուշունցին էն թիւնդ ալերան փանըցնելուի, հօըը կուխկու ճաղերը տիւս տալու, ամմա ըսեցի չէ, տեղը չի, գինքդ քեզ հուքի, հինչ պէնի ըս, տեսնըմ չըս ըտըա չախմուր աչքերը, եկ մհէգ էլ հթեթա տօ, բեալըի վախի ուագ լինի, հունց վէր ըրեվըմ ա ըղըշանքաւ—պըղտանքաւ եա ըռըշվաթաւ հռանօղը չի։

— Կափրէլ դայի, ըսեցի, եկ փխտթուն մննել, եկ ինձ կգնըվցնէլ մէ. թա չէ կըճղըթամ խօխէքս եր կըցնիմ հնգեր հրեանու կանչիմ, քեզ հանց քեօթակ կտան, վէր էլ դալաթ չըս անէլ մին էլ էս գիւնեան կեալ. առանց էն էլ խոլեր տռնեան քեզ երայ էնքան կէռէք գըճըցնօղ կայ, վէր կեալտ գիդան, քեզ պիւըթ կտան պեմբակ կիգին, քթըպռօշըտ արնըփալալ ըրած տիւս պիրին. թա խեղք օնիս, տիւս ծըկի։



Էս ասէլն ու աչքտ պարին տեսնա. Կափրէլ դային թեերին ըրաւ ինձ տակին տիրաւ, հանց պըկիս հարից, վէր աչքերըս չըռուից, քեալըսս ընգաւ. էլ գիդացի վէչ թա ինձ նհետ հինչ պտահից։ Մին խիլա վախտան եաը աչքերըս պէնամ, տէսնամ հի՜նչ, Կափրէլ դային մաննեըին պտկին խըղըցնելաւ, երգինքին ան եըգիրին աըալըգըմը ինձ քշած տանըմ ա։

Եշըմ ըմ տվեր, օշը կլըռվէր, մէր Ղալան աչքիս ճեանչու մչանք ա իրեըմ. տիեր ըմ եշըմ՝ աստղերը մըծմըծանըմ ըն, ամէն մինը մին վըթվըթըմ թռռնու մչանը տեռնըմ. օղըմ ըմ պէրանս պենամ մին քանէ հարցմունք անիմ, լիւզուս պատ չի կեամ, կարըմ չըմ թա խօսիմ, մինակ քաշ զօլան մին պերակ սեաս ա եր ինըմ—ի վերին Երուսաղեմ ի պնակարանս հրիշտակաց,—էն էլ եաւաշ եաւաշ կտըըվըմ։ Հալալ իրեք օր իրեք քշեր եա ու Կափրէլ դային սեարհասար քինըմ ինք։ Խօսքը մէր մէչը մ՚նա, հեալա գեանքըմըս իտի գինջըթունեաւ, առանց ստարըստի, փըգմնչու եա զալը եամչիկլի ռէխ ընգնելու, ինքն էլ ըռէգեան, յղէ չի քէցալ։ Ծնտպին վէչ ըրկաթէ յըըցու մաշիննէ տեսի, վէր օըմէչ զօչի ըն տամ, փչուր փչուր ինըմ, մէչի նստածներին մէծ պատառը անգուճը թօղըմ. վէչ տըոյկէք, վէր գլօգլսկալի, գնգնգալի քինըմ ըն, անգուճնէտ քըըցնըմ, եա շռռ կեալիս մինին ծեռքը, մինին վէննը, մինին քեալլան ագմիչ անըմ. վէչ մեալիբեազըսւի փըգօնի պըտըհեցի, վէր էնքան քշըպեցուր ա անըմ, կլօխըտ ճղերան տամ, վէր կլօխըտ օւշըմ ա բըըբան կտըըմ, փորըտ էլ լըխկըհարըմ, թեարաքեամու թա-

նու պարկ չինըմ։ Իտի տպրաւ ճանապարհ բինալան, էս դեօնըմ ազատ ի, հեալա նաւօղկու փողն էլ մնացալ ար ջուրըմ ըս։

Հա, իրեք օր իրեք քշեր յղէ քինալան խոր (գիւլլու նման ինք քինըմ) Կափրէլ դային տարաւ ինձ մին անտակ անդունդքի հրայ շինած մաղի կարմունջի տէմ ըրաւ ասից. „Խաչան, դէ հինարըտ նշանից տա. անց կաց էն թեարափը“։

—Ա քմմատալ, հանց անց կէնամ, խէ ես քեանդիրբազ ը՞մ, բա իտի պերակ մաղին կլխաւը անց կը կէնձւայ. խէ՞ պալին տակի մաղի կարմունջն ա, վէր ծիաւ, էշաւ եա կիւմշու ըըըրաւ օրը հպէր մարթ անց կէնայ գիւրաւ։ Ղօրթ ա ընդեղ էլ վախ ա, օր չինէլ վէր մարթ չըպըկին, մարթ չմորթին հետն ու թեփուռը կուրցընեն, ամմա հունց վէր էլ չինի, լէն կարմունջ ա, մարթ սրտըվանվըմ ա անց կէնըմ. չէ Կափրէլ, վէր պըկաս կորխ ես կարէլ չըմ ըստըղաւ ընցնիմ, վէր մորթիս էլ ես վէննը չըմ փոխէլ։

«Հո՞ւնց թա վէննը չըս փոխէլ, օմխա թնթոլաշը մուռացալ ըս. վըզըկոթիտ տալաւ ընցնել կտամ. բա արթարն ու մեղաւէրը հշտեղ բեդմա ճօկուին...դէ իրեսիտ արուռաւը անց կաց, թա չէ գիդըմ ըս...դէ։ Ճարըս հե՞նչ, ծեռքէրըս լէանդեառ շինած՝ եաւաշ եաւաշ պըցրացի մաղի կարմունջին կլոխը. բեդմա անդուճիտ ասիմ հու վէր ըտեղան ընցաւ, բեաս արթեար մարթ ա, թուշ արքայութին ա քինըմ, թա չէ վէր շիլ ընգաւ անտունդքնըվիր ընգաւ, էն ա սըրնու փայ ա տէռնըմ, հուր յաւիդենական տժոխկըմը տանջվըմ։



Տուղտուղալի, մազերըս փշըքացած, էնա կարմունջին հալալ կէսը ընցալի, տեսնամ անտունդքան մին գիւռըբշոց ա իր ինըմ, մին ծվվոց ծկըլթոց կեամ, մին ուրոտըմ կծակին անըմ, ջուռա ջուռա թուղեր պցրանըմ, վէր մարթու օչ օղըմ ա թա տանի։ Վխէլաս պոռշըս ճաքալ ար, լիւզուս դմաղաս կացալ, վէնները թիւլացալ՝ էնա ճրնճըպոմբիի անըմ, անձանց մէրոց տեռնըմ, մին էլ գինքըս հւըքեցի, եկեցէ ի վերայ իմ օգնութիւն քո ըսելաւ՝ մին թեահրաւ էն գրաղը ընցի։

Կափրէլ դային ըտեղ ինձ Սէրոփ թա Քերոփ անըմաւ մին էրգեան թեավերի թափշուր ըրաւ, պաշպորտըս էլ հափըռմը տիրաւ, ինքը քեալլա մըալլախ էլհա թխեց բիդի Ղարաբաղ։

Պէլի ջա՛ն, էս Սերոփը թա հինչ տեղեր ինձ ման ածից, հինչ ջուռա ջուռա պեննէր պէնրէր նշանից տուաւ, վէչ պրանաւ կասուի, վէչ ըլամաւ կըկիրուի։

Առաչ ու առաչ կռնաս փռնից տարաւ տրախտին անմահական ախպիւրը նշանից տուաւ. ախպիւր հե՞նչ ախպիւր, մին կռանան կախէթու կինի ա չըռշըռալի թափվըմ, մին կռանան զագրանիշնի խմիշքնէն—շամպանցկի, մադէր, ռոմ, կանեակ, զէլտերըցկի, պիւա, մին կռանան իրեսին էրկու մաննը ղայմաղ փռնած՝ կաթն ա կեամ, մին կռանան մէղր ա ծորըմ, մին ղօլան փափուկ ծիւնի նման սիպտակ լաւաշնէն ա չաթու կապած տիւս կեամ, էն մին ղօլան սմաղը հրա ըրած լիւլաքեաբաբը, հնդիւշկի ժարկոն, բղղօվուրման ու կեառնաւ փլաւը. ամմա

էտքան խմիչկեղէնին, ուտելեղէնին հօւա մհալ քցըմ, հէնց աչք ա երան, եա հօւա լհա մաննը տանըմ թաթախ անըմ, լպըզըմ, տեսնա հինչ համի ա. ետ ու ետ ասըմ ի. հա գիդի մէր վանքերին աչքըծակ վրթըբըրդատէնք, անկըշտըմնը գէրեր ու տիրացուէք, կնդըստորու անխամնէ եա պօլիցխանու միրզէք, հշտեղ ըք, ասըլ ծեր տ.դն ա, մին տես եկէք է...

Էտ ախպուրին տակին կցած՝ ես հղեր վերստ ասիմ, տու տասը հղեր վերստ տեղ գիդա, տրախտին բաղն ա ընգած. բա՞ղ, հէ՞նչ բաղ բալատ մեռնի. վէր նի չըս մննըմ, աչքերըտ շաղվըմ ա, մնըմըս հիւըլա կտրած, տեղըտ մեխուած. աքմմառայ ծառերը վէսկաւ, ըրծաթաւ, ակնեղէնաւ ճըռճամփած, ճղնըկուտուր ըն ընըմ։ Խուտերան, ծղկըներան բուլեանտնէ, մարքարիդ, լալա, մարջան, գիւմրաւտ ու փիւրուզա ա կթկաթըմ. ամմէն մինին երայ հղեր ջուտա զուշեղան թեառ իլած, սեաս սեասի տուած՝ կկլցնըմ ըն, ճվըլըմ, մարթու խելքը տանըմ։ Թոր վէր չոււ ըս տամ, բար բարեղանը ծըծըլըմա, խըտահըտ հինչ պտղի տամ ա, տեսնըմ ըս ինքն իւրան եկաւ պէրանըտ մտաւ. բարերը վէչ կոխ օնին, վէչ քշե, վէչ կոբեղ, հազիր հազրաբաշի հսած փսած. վէչ փթածը կտեսնաս, վէչ խակը, վէչ վէտածը, ըտրա մհար էլ սանիտար, մանխտար, բաղբանից տուուած պէնտրը ըստեղ գիդալ չըն, վէչ պրատակոլ շինող կայ, վէչ էլ չորափու տակ քցող։

Պէլի, ըստեղ վէչ քշերն ա մեռհըմ, վէչ ցիրեկը, սաղ օրը մարմանդ լիս ա, հունց վէր մէր Բաղուա մըծօնաց սալընոցը կանանչ-կեարմիր լիսը, վէր խուխուգիւննէն ակուշկէքը նարօշնի պէցթողած վախտը ընգնըմ ա քիւչոցը երա. թա էտ լիսը հշտըղան ա կեամ, եա հունց ըն շինըմ, սիկրետ ա, վախըմ ըն ասին, Բաղուցուց խըճըր տանող ինի, խարջու տակ ընգնին զավօդնէ սաբբին, վէրշն էլ Նոբէլ քիրվին ու Ռօշիլդ ամուն ծեռքը քցին, իւրանք մաղբուն նստին։



Ըստեղ, պէլի, վէչ ամեռնը կա, վէր խալխը հեապուն հեապունը ընդնին դաչէք փախչին, վէչ ծմեռնը, վէչ կեարունք, վէչ աշունք, վէչ վարուցանք. վէչ հոնձ, վէչ փոնջ, վէչ կոռ, վէչ բէգեառ, ըստեղ լոխճու աչք էլ կոշտ ա, մէր էտ գիւնիին նման առուտուրըմ մին մինու վննատակ չըն քանդըմ, սոտ խըրթըմնը օտըմ, փալշվըլ վէքսիլ շինըմ, վէքսիլ կոլտամ, մարթ մորթըմ, մարթու անըմ բեղնամ անըմ, մարթ կորցնել տամ, խոր պէներ չի կայ. ըտրա մհար էլ ըստեղ ադվակատ, սուդիա, պրիստաւ, եասաուլ, քեօխա ու մոլլով չի կայ, վէր ըռըշվաթաւ սոտը դողըրցնին, ռիր սիպտըկցնին, հշտեղ չաթուքեասաննէ կա, թլակա ըզադին էլհա մէյդան քցին։

Ըստեղ նշըղոթիւն, ազար բէզար, փուրացաւ մէչքացաւ, ծակուց, պըկոռուց, հղեր ջուտա թեազա մօդ ընգած ներվնի ազարնէ չկայ, հունց վէր Բաքվըմը. ըտրա մհար էլ վէչ ապտէկ պահող կա, վէր մինին քսան կին երա տիրած զւարանք ծախս անին, վէչ տատմար հեաքիմնէ, վէր կնանէքը մին մինու կլոխ ճղելու կանչին իւրանց նշանց տան, էքոնէլ պարծէնան վէր փլան հեա-

քիմը իւրան տէսաւ ու խիլա հարից ու լեաւ հեաքեր կոլտալ տւաւ. վէչ հեաքիմբաշէք, վէր իւրանց փըշակին քեամիլ չտեռած՝ կեան իւրանց խեյքին փչած գաւա գեար-մանը հեաքըլիքախտը նչալին փորն ածին էն գինեան ղարկին, իւրանք էլհա պարզիրես խալխին մէչին ման կեան, հեալա մին պատառ էլ միննաթ տինին, թավէր մունք չինինք՝ նաչալը դահի բէթար փուրցանքու կը-պըտահար։

Ըստեղ, պելի՛, վէչ տնատար կա, վէր օխտը կինը երա տիրած տոն քրեհաւը տայ, վէչ քեալվանսարա, վէչ գիւքանըրպար, վէչ ալի ալվան ճոթերի մաղազինէ, վէր ազիզ մազիզ կնանէքը տարին հէնգհարիւր հետ՛նի մ՛նին մօղին եչած խըրիդ անին, մարթօցը տոնը կլլոներին քան-դին, վէչ էլ էտ քեալվասարօցը, տներին, գիւքան բաղա-րին ղարաղավօյնէ, գվօռնիգնէ, վէր կեօզերին նհետ խօսք մին ըրած՝ քչերնէն կեան կտրին, մէչընէյին փայ-փայ անին։ Ըստեղ վէչ դումա կա, վէր գլասնէքը սաղ տարին քինան անխօս նստին, անխօս երկէնան չատ վախտ էլ քնաւ ընցնին երկէնան տեսնան լիսը պէց-ուած, առանց իւրանց մնէնին հրցնէլու՝ կործերը վճըռ-ուած վերչըցրած. վէչ դումի չլէննէ, վէր մին ստակած ղալը չհարան տիւս պերելի մհար չօրս մանէթ կէս խարջ նչանց տան, եա հեարիւր մնըթական ծախսը ևս ևս ա-նելաւ՝ 4700 մանէթի հսցնին ու խտի բուլամա անքննելի պէներ անին։

Ըստեղ պէլի՛, վէչ պատինիցէք կան, վէչ կլուբնէ, վէչ ցիրկեր, վէչ կաֆէշանթաննէ, վէր ջահիլ ջհիւլ հաւք-



ուլին իւրանց հօրանց կապէկ կապէկ թուփ ըրած փողերը հեարիւրներաւ կարտին ան օտէլ խմէլի մէչին տինին, վէչ էլ քիւնջու պուճախում Մատրոնա Վասիլնէք, վէր էտ տղոցը թովլամիշ անին կլլընէն եղին, իլած չիլած-նէն պլոկին, լիւթ թողին, չատ վախտ էլ քեօխա չինած՝ տոն ղարկին։

Մախլաս տրախտ ասմունք տեղը չատ անհամ ընալի տեղ ա. ախր մին տեղ վէր գլմըղալ, թակը մհակ չինի, քթըլպառչ չի ճարթուի, արին չի տիւրիւր կեայ, հի՞նչ տեղ ա, մարթ թամահ կանի խտի տեղը քինա՞։

Ե՛հ պէլի, ղօրթ ա ես էլ չիլ ընգած ընգալըմ էս անհամ ընալի տեղը, ամմա ճարըս հինչ, բեզմա տանիմ։

Չատ ու չատ պարօվ կանիս մէր խուխոցը, պըլ-կնգանը ու մէր անտէս անճանանչ պարեկամներին։ Գէն-գըլխտա էլհա կըկիրիմ, թա վէր Սերօփը եա Քերօփը ռազի կէնան, եա պարօվակիրըս տեղ հսցընին։ Թա կա-րիս կիրիս չօղաբը ըստեղ եկօղաւ ղարկի։ Թա պենա ըստեղ եկօղ չինի, տժօխկ եկօղնէ չատ ըն ինըմ, ընգեղ ղարկի, կարելի ա էս մուտերքըմը, ընգեղէք էլ մին ակը տամ։

Քու ազիզ պէլի
**Տմբլաչի Խաչան։**

*Էն դիւնիա,*
*վէյ օրն ա մեակէլըմ վէյ*
*բարընը։*

# ՋՈՒՌՆԱ-ՏՄԲԼԱ

[1894 թ.]

## ԷՆ ԳԻՒՆԻՆ ԱՀՎԱԼԱԹԱՆ։

*Սիրելի Ուհան պեյի,*

Գիտըմ ըմ ինձանա շատ նիգեարան կինիս, թա էս Տմբլաշի Խաչանը թօրը կորաւ, ախր մին գեարան խաբար եր իլաւ թա Կափրէլ դայուն նհետ սաղ սալամաթ մաղի կլմունջաւը ընցաւ, ընգեղան էլ Սերոփ-Քերոփին նհետ կռնըփռնով տրախտը մտաւ շռւ եկաւ, օղըմ ար աժոխկն էլ մին ակը տայ ընգեղի խըըրներան էլ կիրի, ամմա էսա տարին ընցալ ա վէչ խաբան տեղն ա մեահըլըմ, վէչ էլ մի խաբար ա կեամ. չինի թա աժոխկըմը Սաթայէլը, Պէեղզեպոսը եա հեաճիւճ մեաճիւճնէն խեղճին կլլին մին օյին եկին, ծվվանը կտրցրին։

Է՞հ հի՞նչ ասիմ, կլլիս օյին կեալը եկալ ա. ամմա ըտրա մանին մին ճոխտ օրիշ բաբաթ հեաճիւճ մեաճիւճնէ ին, վէր սաղ տարին ինձ հիւքա հւատա հանած՝ դեադարգին ին քցալ. (մյ դեադարգին ընգնին էտ ճոխտ հեաճիւճ մեաճիւճնէն հա՛), ու կարըմ չի թա աժոխկըմը տեսածնէս եա լսածնէս քեզ կիրիմ, վէր բեալքի խեկքի կեաս տու էլ չի էս խաբաբախանին մղակաւըմնի մննիս։



Պելի՛, տրախտը ակը տալան եար, մին օր Սերոպին ըղաչանք պղատանք ըրի, թա Սերոպ ջան, ինձ տար մի աժոխկն էլ ման ածի էտ դեարդան էլ պրծընիմ, պէն ա հըցնող կինի թա աժոխկն էլ տէսնի՛, ջողաբ տամ, համուլթալի չի մնամ։ Սերոպն ասից, Խաչա՛ն, ինձ հրաման չի կայ վէր ընդեղէք կոխիմ, ամմա թա օղըմ ըս — մյ էն կածանը փռնի, թուշ աժոխկին եքա ա տիւս կեամ. ամմա ինձանիա քէզ ամանաթ, ընդեղ շատ մարթ քեզ ըղաչանք պղատանք կանի վէր քեօմագ ինիս, օմիս թա եշիս, անդուճիտ քամակը քցի, թա չէ կլլիտ օյին կըկեայ։

Սերոպը տրախտին չփարան ինձ թող ըրաւ չոլը, ինքը բաղին մէչին տակ ըրաւ։

Քինըմ ըմ կծանաւը մինն ու մինակ, մտքիս դո՛ն ընգած. Մուղանին չոլին նման մին չոլ ա կեամ առաչըս վէչ ճոնդ օնի վէչ պոճախ, մարթ, ինս, ջինս չի իրևըմ, սեաս սեամիւր չի կեամ. քինըմըմ եա եչըմ եա խըլըչկոտըմ, սէրտս օղըմ ա թա ճաքի, ճեանչու տզվզոց էլ չի կեամ, վէր մարթ էլա սրտըվանուի։ Հալալ տասսը վէրստ քցի, մին էլ տեսնամ մին թափ տրաքից, երգինքը կծըն կէծին ըրաւ, ուրոտաց, վըննեքիս տակը թքացաւ, տափը ճղւից, եա քինաց, մէչան էրկու հեարիւր ա իւիլ կըըհաքի պտղը ճկատան կացած հեաճիւճ մեաճիւճնէ տիւս եկին, վընընծեաքաս փռնեցին՝ քեալըա մղալլախ թխեցին անդունդքին մէչը։ Անդո՛ւնդք, հինչ անդո՛ւնդք մին եքքեայ ծով ա ալալամիշ իլած, աթամա դեավրան հինչ մեղաւեր կա մէչն ածած, էրվըմ ըն մոխէր տեռնըմ, էլհա սղանըմ էրվըմ մոխէր կտրըմ։ Քինըմ ըմ էտ կրա-

1730
4878
41
Гос. Публ. Библиотека ՀՍՍՀ-ССР им. А. Мясникян

կին մէչաւը, խսկի այնըմըս կեամ չի, մին մաղըս էլ խանձվըմ չի, (չինն ես տրախտի պաշպորտ ունի ծոցըմըս), ամմա չորս [թ]րափաս մին ծիվոց ծկլթոց ա եր ինըմ, վէր մարթու սէրտ տկլտիեր անըմ։

Եշըմ ըմ աչ, ծեախ, առաչ, ետ, ջանըս զրզանդըմ ա, փշըքաղըմ. ախր հունց չի փշըքաղի, տեսնըմ ըմ էսա մին սիւրու մարթ ա կեամ, վէնը ծեռքը բխոլած, մին աչկան արինն ա ծըծըլըմ, մինան ըրտասունք, լիւզընէն օխտը կէզ հանած՝ պտկան էլ չեանգեալնեբաւ 20 փութանուցնէ կախ տւած, բըբլցնըմ ըն. Խաչան, քմմատաղ էս չեանգեալնէն հանի, մէզ մին ճար ըրա. ախր ղալաթ չըինք նա ասնավաննի 139 սատաթի (ախ անդէր մնաս ստատիա, տու մէզ էսօրը քցեցիր) սուզըմ, կրօժնըմ, հնգըրմէչի, սոտը զորթըցըինք, զորթը սուտըցըինք, ըստրա ընդրա տոն քանդեցինք, վէր մէր տոնը շինինք, էքսան օրը մէր փոչ իլած խոխէքը մծանան մէզ զորմի տան, ամմա ըստեղան եշըմ ընք տեսնըմ լօթու, փոթու հնգեր տեռած՝ էն գեօզալ փողերը լեփըմ ըն հերիք չի, հեալա մէզ էլ գեօռբագեօռ ըն անըմ. ըստեղ էլ տեսնըմ ըս մէր հեալը։ Խաչան, ասծու սէրին, վէր վէննըտ ընգնի մէր կաւկազ, մեր խուխոցն ասի—թա ատվակատ ըք տունելու մրթըվարի ատվակատ տեռէք, թա չէ էս քսան փութանուցնէն ծէր լիւզվան էլ ըն կախ տալու։

«Բաշխստա կասիմ, խէ չըմ ասէլ, ասըմ ըմ իրեսըս շոռ տամ»։

Էսա տեսնըմ ըմ ըրարու նման սև սև մին սիրու մարթէք ըն կեամ, սև քաֆըմ կրած, 10 փութանուց



պղնձի ղալամնէ անգուճնէն քաղած, պըըններան մախծու պարկեր թփելաւ ըթըններան թանակը ծըծըլլիս ամէն մինին շլակին էլ 500 փութ թողթ պեռնած—վա՜յ Խաչան, մէչկընէս կոտրից, ասծու սէրին մին ճար. ախր ղալաթ չըինք ազկի խմբակիր, վարժապետ եա կիր կիրող տեռինք, սոտեր փչեցինք, լեաւը աջուզու փխըցրինք, փիսը լըըցրինք, չատ մարթու իրեռ նհախ տեղը սևըցրինք, ըստիւր ընդիւր պերանի սազունձ խյած՝ մունք ծամեցինք, ծայն պաղմաց, ծայն աստուձոյ ըսելաւ՝ աչ պէներր ծեախ շոռ տւինք, բղաւեցինք, ճղաւեցինք, ըստիւր ընդիւր երայ քարեր շպըրտեցինք, ուշունց տւինք, վէր հինչա խալխը գիզա մունք մէծ մարթ ընք, մէր խօսքին անգուճ տինի, ըըըշներիս ծռնգր տինի, խոնգ ծխի, մզանայ եան էլ մին եքքեայ արծան պըպըզցնին, մհէգ էտ արծանը պըպըզցնըմ չըն հերիք չի, հեալա թողըմ էլ չըն էս խալաբալխանըմը գինջ վէր ընգնինք մէր պեռնը քաշինք։

Խաչան, տիեր աստուծ տվեր տու, վէր վէննըտ ընգնի Կաւկազ, մէր մին փարայ կաղէթ կիրողներին, պանաստեղծներին, կիրանք տիւս պիրողներին ասի, ա՜յ անգլամաղնէ, խըէգ էտ թղթերը մուռտառիք, մարիֆաթին պէն օնիք, կիրեցէք, թա չէ ըստեղ 500 փութ չէ, վալլահի 5000 փութանուց հակներ կտինին շլըկներիտ, էլ տական կարէլ չըք տմըրհան ինիք։

Մին պատառ առաչ ըմ քինըմ, տեսնըմ ըմ մին թուբուն խալխի խըըվածի թիքի նման չամփուր քաղած հեաճիւճ մեաճիւճնէն կրակին երա շուռտը շոռտու ըն անըմ. վա՜յ մէռինք, Խաչան, զեահրըմար տեռնայ ժամե-

րին, վանքերին, չկոլներին, աղքադանուցնէրին, ևժիմու եա քեասիբ քիսուբու փողերը, վէր ժամահ ըրինք նեստա մին մաննը լպգանցինք, եա չիլ ընգնելուք կոլ ուինք· մհէգ ստեղ քթըծակներաւըս ամըն օր վէր ըն ածըմ· ասծու սէրին վէր մին օր Թիֆլիզաւ տաս Գեանջաւ Ղարաբաղաւ թլսիս Բաքու տիւս կեաս, մեր կանձապետներին, հորեպարծուներին, կործակալներին, ապիկուններին եա գումի չլէններին ասի, օմխա ժամահը ծեղ քուըըցնի մեղաց հացին տիրանաք, ժա չէ օրը տասը հետ կլսընէտ թըկելաւ կպերին շամփուր քաշին, խրաւին, էլհա վէր քաշին կլսընէտ թկելաւ տանին, տըժոխկին սւնգըվըմը կպտոին։

Տասը սաժէն տէնը տեսնըմ ըմ մին բեղուկ մարթուց ըթընէն ծակած՝ ըրկաթի կշէռք ընցրած՝ ծըռքըընէն քմըկներին չուռ տւած՝ եքքեայ ըրկաթէ չոթկերը գինջիլաւ վընններրան կապած՝ քաշըաշ ընելիս, հաճիւճ մեաճիւնէն էլ վէրին աչքերն ըն բիզաւ ծկտըմ, վէրին թքցրած շամփուրներաւ ծեռքերը գզգզըըմ, վէրին սէրտը հանըմ մէջը տիւս տամ զուրզուշում լցնըմ, տեղը տինըմ· վէրին էլ բուզաղըմը ռահաթի տիրած՝ արճիճը հեալըմ բողազնը վեր ածըմ· ա՜խ, Խաչան, մին ճա՜ր, դեահըըմար տեռնա էն առուտուրը, վէր կէզըմ ծիք տալաւ, քաշըմ հըըմութուն ընելաւ, չոթկըմ եա դւթարըմ ծուռ տիւս պիրելաւ, վէքսիլ կոլ տալաւ եա սուտ սուտ կոտր ընգնելաւ, մեր տունը չինեցինք, խալխին տունը քանդեցինք, մեր անգըլմազ խուլսոց մհար փող եա քցեցինք, վէր հինչա կարթին, մարթ տեռնան, մէզ էլ զորմի տան, ամմա սօր ըստեղան պռչկած եչըմ ընք, տեսնըմ մեր խօխէքը կար-



տըմ, բէֆըմ, զօղըմ, մատուշկից ու արֆիանկից եըայ մէր էն գեօզալ փողերը ցրեւ ըն տամ հերիք չի, հեալա մեր օխտը պորտն էլ ըն տիւս տամ, վէր հարիւր հազարների տեղ միլեօննէ չընք կտակ ըրալ։

«Պուպուն պերաւ, ճիւճիւն տարաւ, էշը դադից, ծին կէրաւ», ասըմ ըմ «պատառ առաչ բինըմ· տեսնըմ ըմ էսա հեաճիւճ մեաճիւճնէն մին խիլա մարթուց թէք քցած՝ վէրին մէչըին պուլիզըն տինըմ՝ ալիւն առնըմ, վէրին կռըընէն քեարփաթիւնաւ քաշըմ ըն հանըմ, էլհա տեղը տինըմ պնդըցնըմ, վէրին պերանը վեր վեդրա վեդրա կարբօլկա, կաստորկա ըն թափըմ, վէրին մեռը տնակաւ կտըըմ ըն՝ մխթըսեզաւ էլհա ջանին եըայ կապ տամ· ըտրանք էլ ըն մին պերան հարայ տամ, վա՜յ Խաչան, ասծու սէրին մունք տանջվելը տանջվըմ ընք, ամմա վա՜յ մզանայ եսի եկող հեաքիմներին· վէր պատահիս, ասի օմխա թա նչպին ապարը չիմացած՝ բէցէլ կիրիք էն գիւնեան պարկիք, եա ծէր ջփան խիլ վննւքրէհ ինք օնիք· մին էլ վէր ապտէկ պահողու պատահիս, ասի— սըւիրեն մնաք տուք հունց վէր մէզ սըւիրեն թուղեցիք, մեր կիրած շատ բէցէպներին տեղը ծէր գիւքանին փեասպեանդա ճարերը, պրաշոկնէն նայդեցիք, համ մէր անըմը բիարուռ ըրիք, համ մէզ էս օրին հցըրիք։

Մին պատառ տէնը, տեսնըմ ըմ հեաճիւճ մեաճիւճնէն մին սիրու ինջինէր, պլանչի, զէմլէմէր եա փոդրաթչի շար քցած՝ պերաններըմը փոքս տիրած՝ փչըմ ըն, ռումբու նման ռըըցնըմ, եռնան ցիրկուլին ռէխը քցըմ հափ տամ, պըըկըցնըմ, ազին ծակաւը տիւս պիրըմ,

էլհա փչըմ տըըցնըմ։ Ընդրանք էլ հարայ ըն տամ, վա՜յ էլ դալաթ չընք անէլ փողրաթըմ մեծ թիքայ եօր օնէլ փեսապեանդա պէն չինել, էլ կարմունջի, ժամի, չկոլի եա մէծ տների ծէռք չընք տալ, մինըն քսան ինք օնէլ, քարին տեղ քեարփիչ, քեարփիչին տեղ ցեխ լցնել պատերը, վէր հինչ ա չիտ քանդուին էլհա փողրաթըմ լըլանք. էլ դալաթ չընք անէլ պաւօղներըմ, պըռմխըլըցըմ պըռուլեախուշչի տեռնալ, թամահնէս դըռած վախտը խաղայիննէրին նհետ խօսք մին ըրած սև ու սիպտակ նըթան, արկաթ-ըրկութան, տեսան տէնան կիւղանալ, վէր մին օր էլ մունք խաղային տեռնանք—չէ, չէ, չէ, աստուծ վէչ անի, մին ճա՜ր, էլհա փուքսը պերին...

Ամմա հու ա լողը, ծէր հախն ա, ծէր քէթը աստղերին ար հանըմ, հունց վէր խշտալըք, ընդըհէնց էլ բշտըմ ըն, ասըմ ըմ ու անց կէնըմ։

Մին էրկու վերստ չը քեցած՝ էս ա աչքիս օղտու քեարվանու նման ջարդըլեամա ընգած՝ մին մինու դաթար ըրած՝ հղերա խիլ փեադա, քեօմրա ցեաքրա, քոլա պեռնած մարթէք ըն քինըմ, հեաճխաճ մեաճխաճնէն էլ ցակատա, կացնա, դըգընակա մնընների տալա ճիլըտոտըմ ըն՝ տանըմ սընդուին ծակաը եր հանըմ, էլ հա պիրըմ սընդուին ծակը կոխըմ. ընդրանք էլ հարայ ըն տամ, Խաչա՜ն, մէզ մին ճար. էն օրը սև ինի, վէր թամահ ըրինք մէշարեադի, կոնդուկտոր եա արեշիկ տեռինք, մին քանէ փալչովի սըըմթէն բիլէթնէ ուինք, վէր քինան փեադ կորին եա քեօմուր չինին, համ խւրանք թըքանան, համ մէզ թրցնին, մհէգ էտ անմեղ պէնին մհար



ըստեղ մէզ պէռնալ ըն մէչըընէս ջիդով չինալ, դոթուր էշու օր քցալ հերիք չի, մէր թոփխանին էրգեան անգուճաւերններին մշանք էլ դադր չոնինք, վէր մին հետան մին հետ մէր պեռնը եօր օնին, մին նեաֆաս քաշինք, լհա մին պիծի թեաւիւլ տանք, մէչըընէս գինջըցնինք, էլհա էտ զեահրըմար պեռնէրը եօր օնինք տանինք։

„Վէչի՜նչ, տուք խալխին շատ ըք դդդորալ սոտ սոտ տեղան պրատակըլնէ չինալ, ըռըշվաթ կէրալ, պրատակըլը եա ճղալ—ծեր հախն ա, ասըմ ըմ, վէնըս փոխըմ“։

Մին խիլա քինըմ ըմ ալաններին մէջաւը, առաջըս մին մէծ դալ ա կեամ, կանանչ կեարմիւր կէցուած մին սիրուն նեարմա-նազիւք կնանէք մէջն ածած. վէրին կէցին 12 գիւժինա խիլ 1000 կէզանուց դերիա կա, տնքտնք ըմ ա ճաճը ըմ, օզըմ ա տիւրիւր կեայ, կարըմ չի, մնըմա սեղը մեխուած. վէրին օսուքը 2000 ա խիլ ջուռայ ջուռայ պլիւշի պալտօ, ժակէտ եա բատոնդ կա քցած, թքացալ ա բուզմիշ իլալ, աթինը կլոխը տւալ, հարայ ա տամ, վա՜, ճարեցի մին ճար, էլ մօզնի չորեր չըմ օզէլ. վէրին մէչքը ըրկաթի կարսէտա հանց քիփըմը խեխտալ ըն, մազու նման հանց պրակալ ա, վէր տնակու նման դդադին երայ կըծալու. վէրին կլխին օխնասուն ջուռայ շլապայ կայ, էլ քչըլղակու, էլ բայղուշու, էլ չըլանու թեւ չասիս լշվըծախ մէջը կոխած. վէրին իրեսը էնքան պուդրաւ թամբաշիւրաւ, ալրաւ ծիփալըն, վէր տասը օրաւ ասներկու փեահլա պընըըցնիս, անջախ քանդին եա եա անին կէւը պըծընին։ Մին թուրունու ըռաշի լօտոյի ստըը պէց ըրած՝ աչքընէն էնքան տուղըն տւալ չալած լոքոցն

ու կարտերին, վէր օռալ ըն պլոճիգ տեռալ՝ չրու տափը կախ ընգալ։ Մին գոլին էլ մօղնի մօղնի կորատւող, սկէսվորը եա թըըլնգանը խային աչքաւ մոէգ անող, բամբասանք սիրող եա լսաբաղդան կնանոցը լիւըլնէն հանըմ ըն, ասղաւ ծկոտըմ, ալը տաքտեղը եա դարչի-ցան եռայ անըմ, մին վառած պող էլ պերանը կոխըմ մխթըլսեղաւ լեաւ կարըմ, կուպըըմորթի նեստա տամ, բրախ թողըմ։ Մին քինջըմ էլ հեաճիւճ մեաճիւճնէն մին փարա կնանոց խոըտած՝ պուզըհրեաւ հանց բուլղի ըն կորըցնըմ, վէր գլխան էլ ընդըհենց բուլղի չի կորէլ։ Վա՜յ Խաչան, տու ինիս Հուռուն արևը, մէգ մին ճար, ախր ղալաթ չրինք վալս մաղուրկա, կադրիլ, պոլկա սըըրե-ցինք մէր մարթոց մէր սկեսվորց աջուզու կլուբներըմ, վէչերինկըմ մէր աչքատիրած կաւալէրներին նհետ պար եկինք, մհէգ ըստեղ աջալաման չըն տամ, հինչա եկա-լընք՝ գկըռու նման բուլղի ըն կորըցնըմ։

„Հինչ ճա՛ր, հունց վէր փրթալըք, ընդըհենց էլ կէրէք“, ասըմ ըմ, էն գոլը շու տամ։

Եմնան տեսնըմ ըմ էստ ջեարգ—ջեարգ առաչըս ըն կեամ ջուբգիրնէն, մարթասպաննէն, տոն կորողնէն, պեանիցնէն, չաթուրեասանէն, կարտոժնիգնէն, զումար-բաղնէն, կեառւղնիկնէն. վէրին հեռման ճրըմ խաշ ըն տամ, եօր օնըմ ցորտ ճիւրը կոխըմ, ճմճխըլըմ էլհա խաշ տամ. վէրին ջանսաթին մամառնէ ըն վէր տամ, ծկոտըմ, մամառնէն հանըմ վէքու սախկի նման արճիճաւ լցնըմ. վէրին մաթխաքքեամանաւ ծկոտըմ ըն փիթիլէք անցկա-ցնըմ, փորը մաղութաւ լցնըմ, ճրաքի նման վառըմ. վէ-



րին օցերի, կարիճների, քըլթանթուշների ռեխն ըն տամ. վէրինը բաղի եա կինու կրասըմ թրչոցըն տնըմ, եօր օնըմ մանդեանու տակ քցըմ, էլհա նոր մինա ըրալին կարասը շըլըտըմ։

Մախլաս հինչ ասիմ է, բանի օր չու եկի մին մինա բէթար պէներ տեսի. լօխ էլ էնքան ըղաչանք պղատանք փասպարքնէ ըն ըրալ, վէր տասը տարի կիրիմ, պրծում չինի։

Տժոխկին հալալ կէսը ման կեալան եոը, մոի էն մին կէսը, հշտեղ Պէեղգեպուղ թաքաւերն ա ինըմ ու ըշ-խարքիս մեղաւեր մըծմըծնէքը. աչքտ պարին տեսնա, թամաշա թամաշա ըտեղ ար, պէնէ՛ր տեսի, պէնէ՛ր, վէր վէչ լիւզվաւ կասուի վէչ գլամաւ կըկիրուի. վէր մէտս ա կեամ էն ըլախմը, էն գիւըըրշոցը, էն ճղըցներին մէջն ածած մըծմըծոնաց աղալ, թփըհան անէլը, եա մշաւեն ու չուշտալյա տալը, օչըս օղըմ ա թա քինի։ Ընդրանք էլ ըն փասպարքնէ ըրալ իւրանց խուխոցն ու պարեկամնե-րին, ընդրանք էլ ըն իւրանց մեխկերը մին մին եա պատ-մալ, հեալբաթ մին օր էտ էլ քէզ կպատմիմ. մհէգ պէլի քինըմ ըմ Օսմանլուան եկած մին հայի ակը տամ, ասը-մըն երևելի խաբարնէ ա պերալ, Սուլթանին սէրտը ռահմ ա ընգալ, օղըմ ա Հայաստանը հայերին փէշքէշ անի, ամմա հայերը օղըմ չըն։ Թա կարիս ըտրա մհար մին անհվալաթ կիրի, Օսմանլուի հըյերին եա հաւատըմ չըմ, շատ դուղի-բուղի մարթէք ըն։

Մնաւ ձու ազիզ պէջի

**Տմբլաչի Խաչան։**

# ՋՈՒՌՈՆՍ-ՏՄԲԼԱ

[1895 թ.]

## ԷՆ ԴԻՒՆԻՆ ԱՀՎԱԼԱԹԱՆ։

*Սիրելի Ուհան պեյի,*

Տժոխկը ակը տալան ետը էնա հեաճիւճ մեաճիւճներին ծեւքան պրծած՝ լիւս աշխարք ի ուիւս եկալ, վէր քինամ Օսմանլուան եկած հային հլըհարյում անիմ, համ էլ Բիկոնսփիլդին, Գամբէտաին, Գարիբալդուն ակը տամ, տեսնամ Բերլինում շինուած 61 սիմանի հայերին բախշած սազին մհար հինչ ըն ասըմ, տեսնամ Սերոպը առաչս կորից, կղնըցըաւ, Խաչան, Թարնըս քինըմ, մոկէնըտ գիդըմ ըմ, քինալըտ զուր ա․ էտ սազը էսա 16 տարի ա վէր ճնգճնգցնըմ ըն, ճնճնգցնըմ, թող անըմ․ վէրը սիմերն ա քեօք անըմ, վէրը պիւթակնէն շուտը շուտու անըմ, վէրը փեարդէքը ետ ու առաչ քաշըմ, վէրը թեազանան տաշըմ՝ պիրըկցնըմ իլած ծնգըլ-ծնգըլ ծէնն էլ կորցնըմ, մախլաս էնքան էտ խեղճ սազը խօխա ըրխու ծէւքա ա ընգալ, վէր քիւքըհան ա իլալ սիմերը ժինգոտալ, էլ ածվըմ չի։ Մհէգ Ինգլիզըմ մին փարա մարթէք ըն ուիւս եկալ անըմնէն սազբեանդ ուիրալ,



օղըմ ըն էտ սազը էլհա քեօք անին, ամմա մին զատը պկասըմ ա։

«Հինչը Սերոպ, մին ասի քմմատալ»։

—Եղը, Խաչան, էն էլ տեղէն կարաք եղը, վէր սիմերին քսին ժեանգը վէր կեայ, լեաւ ծէն հանի, մին էլ մի ուստադ մարթ, վէր տըղըհան իլած փարդէքը դիւզըցնի, պիւթակնէն տեղը ուինի։

«Բա Ինգլիզըմ, Ֆռանգիստանըմ, Լէմսըմ խտի մարթ չի՞ ճարվել։

—Ազբաթը խէր, խէ չի ճարվէլ, շատ կճարուի, ամմա հիւր զեարդ ա կորալ, վէր միւհտա միւսալլահ եր կենա մին ժինգոտած սազ քեօք անի էն էլ հըյերին ծեւքը տայ։ Էն վաղ ար, վէր էշը կաղ ար․ բայխեցէք և բացցի ծեղը հայու մհար չի ասուալ․ օղըմըս ըհա դըրվազան կուտրատի, թա վէր տնատէրը գիդա քու կեալան մին օքութ չօնի, տարաւ տուռնը պենալ չի։ Մհէգ մօղան տուք և տացի ծեղն ա, անգուճըտ պեց, լեաւ հսկա՛յ։

«Բա Գլադստոնը, Չեմբարլաբեանդը, Բիսմարկը, Կրիսպին . . .

—Դէ բըլա, Խաչան, ախր քեզ պէն ըսեցի․ ծեւքը պիրանիս ուիրաւ, խօսքս կորից։

Իտի գըլից ընեըլաւ Սերոպին նհետ քեցինք, քեցինք, ուիւս եկինք մին թումբու կլօխ․ եչիմ տեսնամ էտ թումբան լիւսնընգան հանց մօտ ա, հանցա ըհա ընգդան ճըրլանք իլած, կախ իլած։ ըսեցի Սերոպ․ ինձ ըոթուն շատըս ըրալ, էս մինն էլ ըրա․ տրախտը ուէսի, տժոխկը

տէսի, թա ախպէր ըս, էկ ինձ տար մին լիւսընդեան էլ տէսնամ։

Սէրօպը ինձ թեւին պտոկն առաւ մին դաղաղըմը տարաւ լիւսընդին կլօխը մին չհարի թոփխանըմ եր պերաւ։

Էտ թոփխանան վէչ մէր Ղարաբաղին Թոփխանին նման ար, էշը, ճեօրին, մարթը խուխուր խառնուած, վէչ Գեանջու մէյդանին, վէչ Բաքուայ եարմուկին, վէչ Թիֆլիզու սաղդաթսկի բաղարին, վէչ Իրեանա, Դրբանդայ եա Շամախու չէյթան բաղարներին, հշտեղ լօթի, փօթի, պաժարնի, ջուբղիր, համամչի, քեաբաբչի, բախկալ, չախկալ խուխուր կլօխ ճղեկաւ՝ տրութակ ընեկաւ, եա առուտուր ըն անըմ, եա մին մինու կլօխ եղեկաւ, մննատակ քնդեկաւ՞ անասելի պէնհր անըմ։

Էտ թոփխանըմը մարթը մարթին ջեարդըմն ար, տաւարը տաւարին, հէյվանը հէյվանին։

Ասըմ ին, խօսըմ, չէնքաւ չնորքաւ մին մինու ցաւ հրցընըմ, մին մինու դեարդի ճարքեար ինըմ։

Թոփխանան նի մաի քուչէքը. քուչէք, հի՞նչ քուչէք, հեալած եղը վէր վէր ածխս, էլաւ կըհւաբուրի, էնքան թեամիւզ ար. քուչէքը լոխ էլ ըրկաթած ըն, վէր տարին մին փեասպեանդա շօսէ չիշինին, փողրաթչէքը մէչին օղտեր կոլ տան, եա չէ ցեխը, լէլը կոխի վէչ, վէր ըրըւլիսաւ եա ճրըքլիսաւ մարթ ճօխտ վէննուք մէչին հանից բաթմիշ ինի, վէր կարի վէչ թա տիւս կեայ, հունց վէր մեր չհարներին քուչէքըմը։



Քուչօցը էրկու ղօլաւը ծառեր անկտած, ամէն տան ըռաչի ելեքտրեկան ֆանար կախ տւած, կօխկին էլ տաք ու ցուրտ ճրի ախպիւրնէն միւհտա միւսալլահ վըըխկալիս. էլ Թիֆլիզու նման ճիւրը զինջիլաւ կպտել, քիլիդն էլ երա անել, թակը-մհակաւ ճիւր տանել, կոժ կտրել, ճրի գալի տալ, խաի պէնհր չի տեսի։ Քուչօցըմը վէչ եասաղուլու իրես տեսի, վէչ պըխտաւի, վէր պամչաթակ տալաւ, սըրա ընդրա բէյնըմը նստըցնի՝ թա ծէր տները եա քուչէքը թեամիւզ պհեցէք, եա չէ, մթնըժռած վախտը աչքնէտ օրիչի ջուրին քցէցէք, հիշտ ա, մունք սադմուսումը կըչինինք։

Ընդեղ վէչ չհասը հաս անող տէրտէրի ռաստ եկի, վէչ չօրս պօրտը վէց չինէլ տւող եպիսկօպոսի, վէչ «գերը ես ըմ գեցմ» ասող առաջնորթի։ Ընդեղ վէչ սուդ կար, վէչ դիւան, վէչ կրօժնի, վէչ պալատ, վէչ տասսը տարաւ թուղըթաթախ կօծեր, վէչ վէզի, կայքի դաւի դարաբէք, վէր տարին իրեք հետ ախսախկալներին սոտ խուրթիւմնաւը մին թեարափը տանի, էն մին տարին օրիչ վկաների խուրթիւմնաւ չոռ կեայ էն մին թեարափը տանի. ախրը վերչը էնքան ծլքը պուք անին, սուդու տներ մաշին, վէր էրկու ղօլն էլ քանդվին ու էտ կայքին եա վեղերին երայ մին օրիչը կեայ հաքօցն հանդուցելոց ասի։

Ման եկի բեաղաղխանան—մինը տիւս չի եկաւ իգվօտէ, պաժալուստա ասից, եա փեշկաս կացաւ զոռաւ գիւքանը նի քցից, հունց վէր մեր սովդաքեարներին պէնը փէշակն ա։ Մարթ, կնէգ մաղազիններէն լիզը անխօս

անծպտուն առանց չանա թկելի առուտուր ըն անըմ, տխւս կեամ, վէչ նիսիա կայ, վէչ դեաւթար, վէչ բուխալտէր, վէչ փթած ապրանքը սղըցնելի մհար օխտը սհաթաւ թարիֆ անէլ, խաչ պատարագ, երգինք-կէտինք մէյդան պիրէլ, եա իւրան ջանը օրը հգիր հետ մռնըցնէլ, էնհա իւրիւգիւնը սաղ սալամաթ տուն տանէլ։

Բաղաղխանան անցկացի բախկալխանան. մեր վէչերներին սարքած տոլնէն հինչ ա ընդրանց քշտին. թեամիւզ թեաքիւզ ամէն հինչ իւրան տեղը. էլ հէնգ գիրվանքըմը գիրվանքակէս պակաս տալ, եա չոր ու թաց եմչեղէնին լեաւերը թաբաղներին իրեսին շարել, վէր մարթ տսնալուց պրանին ճիւրը ախմիչ ինի, ամմա փթածն ու չխարը քմակին չար քցել ու քաշըմ վախտը մին լեաւ՝ չորս փիս անել մուշտարուն կլխին կապէլ, խոհ պէներ չի կար։

Բախկալներան ընցի ղասաբխանան. մեճը, հինչ մեճը, օխտը մաննը եղ երա կապած. լօխ չիւշու տակ տիրած, կիներն էլ երա կլրտած. էլ վէչ շնաճանչ ա տեսնըվըմ, վէչ քիւչին թօզն ու ցխին ցալքունը երան ծածկըվըմ, վէչ սոխկուռ եա քասուտ չան տիւնչ երա հսնըմ, վէչ էլ մուշտարօցը ծեռքի տակ ճրթմրթվըմ։ Էլ դաւէսկա, մաւեսկա, էքին մէսը վերցի տեղ տալ, էծինը վխչարու, վէտած մէսը լեաւին խառնէլ, եա սուկին չալաղուշը հարուստներին մհար պահէլ, վէզը, հեաքիւմ, կոճիկերը քեասիբներին կլխին կապէլ, եա տաքցին օրը մէչ փոխել, խոհ պէներ չի կայ. ղասաբին մհար ամեանը ծմեռնը մին տաքցի ա. միւշտարին էլ հարուստ եա



ղըքատ ընդրա մհար լօխ մին ըն. հշտղան օղըմ ըն՝ կտրըմ ՝ա, հեալա օխտը հետ էլ կլոխ տամ, ճնապար տինըմ։

Ղասաբխանան անց կացի կաթնը ծախողներին կոչտը. հա՛ւ կասի թա կաթն ա՛. ղայմաղը քեզ ըրէնակ, առնըմ ըս տուն տանըմ լեաղաթ եօրօնըմ, էլ մին սըրքանին իրեք ստաքան ճիւր էրկու ստաքան ՛նիշեշտա՛ եա ալիւր խառնէլ, հալալ կաթնը մուռտառէլ չի կայ, հունց վէր Թիֆլիզ, Գեանջա եա Բաքու մօղայ ա։

Ման եկի ընդեղին կլուբնէն, վէչ կարտի ստոլ տեսի, վէչ լոտոյի, վէր սհաթի վեցան կցած չրու բշերուայ սհաթի իրեքը նստին խաղ անին, սհաթանը տասը հետ տանէլ տարվէլին երայ ռեանդռուշնէն փոխին, մախծընէն խառնուի, քշէրն էլ ըրադի ինը վգեաթկան ծեռքին բէմից ընգնի, եա քնըմը տուզ պիկ, կարօ, սամ-դրուգ տէլը տալաւ քեօրփա խուխոցը սեարսամիչ անին։ Ընդեղին կլուբներին խօսք ու զրուցը իւրանց օրուայ դեարդերն ա, իւրեանց չհարին պակասութիւննէն դիւզմիչ անէլի մըլըհաթը, քեասիբ քխուրու չահէլը, մին մինու խեյք, շնորք, գիդութիւն սվըրցնէլը։

Ընդէղ վէչ ծակ Նոր դարական տեսի, վէչ չճղճղ Մշակական, վէչ էրկու ճոխտ մին կընդ Արցըկընքական եա Մուրճական, վէր մին մինու ռէխ կուրծեալաւ սաղ տարին լիսըցնին. մինին չինածը էն մինը քանդի, մինին դիւզ խօսքը էն մինը ծռի, սևը սիպտըկցնի, սիպտակը սևըցնի, եա քթընէն կոխին իւրանց տուր չեկած շկոլներին վանքերին, ժամերին մէչը, ըստիւր ընդիւր պուզը հարին,

խրտնըցնին, դաւի ղարաբաւ հոքեւէր ու մարմնաւէր կործերի խառնուրին, վէչ իւրանք պէն չինին, վէչ պէն չինոցին թողէն իւրան գիւլացածը անի։

Ընդեղ վէչ նոր ծուան տիւս եկած ղոթուր մոթուր պըըթիած ճտեր տեսի, վէր վրցակու նման դեօշ տան ծուղրուղու կանչէին, խալխին իւրանց երայ ծիծաղել տան, վէրշն էլ իւրանց ծրտըմը էնքան փալփալի անէին, վէր կարին վէչ տըըներան տիւրիւր կեան, քաշ քշեյակ կեայ՝ կլխընէն կուտկուտելու տանի։

Վէչ կեղծաւեր մարթ տեսի, վէր մարթի իրեսի մին խօսք ասի, բմակին ետ տեռնա ճոկ պէն թօխրի. վէչ սոտ մուղդուսիք, վէր ժողովուրթին բռաչին սուրփ սոյան տեռնան, իւրանց տներըմը տուր ու թակաւ խանչալաւ տիւրիւր կեան. վէչ խղճմտանքը քար կտրած հարուստ տեսի, վէր քեասիբ քխուրա, պարի պէն ա իրես չու տայ. վէչ իւրանց խադայիններին քոռ աչքաւ եշող փրիքաշիկնէ, վէչ իւրանց աչքին կերանը թողած, խալխին աչքին ծեղին երայ վրվթող ղըըթորոսնէ, վէչ իւրանք իւրանց առաչադէմ, լիսաւեր աստղ արուսը բմակին կապած թեադա մօղնի ջահիլ ջհոյնէ, վէր եր կէնան քինջ ու սուճախըմ լիսաւերութեան անըմաւ, իլած ճրաքներին լիւսն էլ հնգըցնին, խալխին թողին մթնըմը տիտփալաւ ման կեալիս։

Ման եկի ընդեղի վանքերը. թատրոննէն, ժամերը, պըքատմուցնէն, հիւանդանուցնէն, սումարաննէն, ամէն տեղ էլ կարք, կանոն, փոքրաւերը մեծին հնազանդ, մունթը վարժապետին, վարժապետը վերատեսչին, էլ



տուր ու թակ, կէնդատ, թարուն ու աշկեար մին մինու վնատակ քանդէլ, խնամութիւն, ըռըշվաթ, աչքակպութիւն հզէր ջուռա փեանդ ու ֆիլ, իտի պէնէր աբադուլլա՜ խակի տեսի վէչ։

Ղիսննգին չհարնէն մին մին չու կեալան մխթրվելան ետը, Սերոպը էլհա ինձ թեւին պռոկը կալաւ՝ տարաւ տրախտին անմահական ախպիւրին կշտին վէր պերաւ։ Էտ օրը կլօխս քաշ թմաշայ ի անըմ կանանչ կեարմիւր ճրերին, աւլան աւլան ծաղիկներին, ճվլըմ ղուշերին, լաբադէըը չու կալած՝ քըըպեցուր քինըմ կեամ արթարներին, տեսնամ հրէս Կափրէլ դային պուպուզ կողքիս կաղնից...

„Հ՞ը, խէր ինի, դայի, հշտըղան՞ըս կեամ, հի՞նչ խէր խաբար օնիս, մեր ղարաբաղըմը ըստարի հացը, թացը բո՞լ ա. եյլաղ քեցողնէն թնգոթուն չըքցե՞ցին հա՞ւ...

Հի՞նչ հաց, հի՞նչ թաց, հի՞նչ գեահրըմար. աղբաթը խէր, քեզ պէրինք վէր չուխտ կէնաս՝ տրախտըմը վէր ընգնիս, թա կեաս ըստեղ էլ մաններտ տիւրիւր տաս, ըստեղին անցվածքն էլ կիրիս, ըշխարքաւը մին անիս, կլխընէրիս օյին պերիս. սօր պըրստակով ըն չինալ, վէր քեզ գըըետ ղարաբաղ տանիմ. դէ՞, աչքիրտ հոփ կալ, տեսնամ. բա՞ղ, դվա...

Ղորթ ա աչքիրս հոփ կալի, ամմա օզըմի վէննս պէնդ տէմ տամ՝ թա կեամ չըմ. (ախր փիքր ի անըմ—տրախտին միւհտա միւսալլահ ապրուստը հշտեղ պէդմա քթնիմ. վրթաբէդ էլ չըմ, վէր մին վանք քաշուիմ. սրփըրտէմաւ ըշըհամփիւրաւ, վանքին ծմըկնէն կտրէլ տա-

լաւ, եա վէզերին դախտը ճուբըս կուխելաւ նստիմ, եաւաչ եաւաչ փորըս հստըցնիմ, վէչ քըէհաւ տան դեարդ քաշիմ, վէչ օտէլ խմէլի, վէչ կէնալի, վէչ դօխտուրի եա տեղի, վէչ խօխա ըրխի եա քեասիբու ղէյդ քշէլի դեարդանիմ). էտ պէներին մհար ասըմ ըմ էնի ա վէնընըս պէնդ տէմ ի տւալ կաղնալ, քռանդունճը տիրալ, տեսնամ Կափրէլ դային «տրի» ասից մին հանց թնիթոլաշ էլ տիրաւ՝ վէր անգուճնէս թշլթշաց, աչքերըս պէծին պէծին ըրաւ։

Էտ սիլլին հեարարաթան սեարսամիչ խլած՝ բիրդան աչքերըս վէր պեցի վէչ, եր թռլի, տեսնամ մեր տնացին կողքիս կաղնած՝ ծնգները թակըմ ա.—ատղա Խաչա՛ն, քեզ հի՞նչ ա պտահալ. օրըս քիսօր ա տեռալ տու խտի խռըփըշ քօ՛ն, բա քեզ էլ դեարդ չօ՛նի՞ս, տղամարթը խտի քօ՛ն կինի՞։

«Հո՞ւնց թա քա՛ն, խէ՞ ես քա՛ն ի։

—Բա գեարթուն իր։

«Վա՛, պէլ ըս թա գիժ, խէ՞ ես տաննն ըմ իլա՛լ։»

—Վա՛ քուռանամ ես, էս մարթը սըսադվալա է, բա հշտեղըս իլալ։»

«Ա. կնէգ, խելքիտ քամի ա նի եկա՛լ։

—Քունն ա նի եկալ, վէր տանը թէքը ընգած՝ ասըմ ըս տաննըմ իլա՛լ։

«Ը վէ... բա ես էն դիւնիյըմը չըմ իլա՛լ. բա ես տըախտան չը՞մ կեամ. բա Կափրէլ դային չի պերա՛ւ ինձ։

—Ատղա գիժուալը՞ս. վա՛յ իմ օրին, էտ ար պակաս վէր օր ծերութինաւ մհէգ էլ գիժուխ կլխիս բալահ տեռնաս։



Էս ըսելաւ մէր տնացին տիւս եկաւ, վէր դալլաք Աւանին տղին կանչի կեայ, արիւն առնի, խելքի կեամ, ես լափ օյամիչ իլի, տեսնամ չէ, զորթ վէր տաննըմ իլալ, ամմա տեսածնէս եա լսածնէս ըրազի ա իլալ, հունց վէր իմ էն դիւնիան քինալը ու ընդեղան խաբարնէ կիրէլը։

Մհէգ իմ ադից կրթեցող, աչքտ լիւս, ես էլհա էս դիւնիըմն ըմ, ամմա էն դիւնիյի խաբարնէն, եա մարթէքը կողի ըրազի, լօխ էլ մէտըս ըն. հու վէր օղըմ ա իւրան պապին եա տատին տեղը գիդայ թա հշտե՞ղ ա, հի՞նչ ֆեանդի տեար ա, թող մին պէրան կիրի, ես տեղվատեղ եա կպատմիմ։

Տմբլաչի Խաչան։

# ՁՈՒՌՆԱ-ՏՄԲԼԱ

[1896 Թ:]

## ԿԵԱՐՈՒՆՔԸ ՀԱՆ ԸՆՔ ԻԼԱԼ:

Իմ աչքի լիս կրթեցող, կեարունքը վէր կեամ ա, երգիր աշխարք թեազալամիշ ա ինըմ—սարերն ու չոլերը տեսնըմ ըս կնանչըմ ըն, արտերը ծլըմ, պցրանըմ ըն հասկ փռնըմ. ծառերը ծաղկըմ, բար եօր օնըմ, հաւքերը իրանց քանդուած պինները կրկատըմ, ծիու ածըմ, թօխսը կեամ, ճտըհանըմ. կիւմերըմ քնձմնձած տաւարը լիս աշխարք տիւս կեամ՝ կնընչկոտըմ ըրըծելաւ մըզըմորթի փռնըմ, ծնոտըմ՝ կեառնաւ, վէրթաւ գիւղերը լցնըմ. բարամին վէրթնն էլ պուժուժ աշխնըմ, աբրուշխմեղէնաւ հարս ու ախճիգ զրթարըմ. մըրըճանչերը քթոցան թռչըմ ըն գռգռալաւ, տզտզալաւ ծաղէգներան մեղրը հւաքըմ՝ մըղըրհացերը լցնըմ. մին խօսքաւ սաղ աշխարքը կէնթանանըմ ա, թեազալեամիշ ինըմ, պէնի, կործի կէնըմ, մին պէնու փայգա ինըմ ու էտ պէնը կործը ամէն տարի կտարվըմ ա ու մունք մէր քոռ աչքաւը տեսնըմ ընք, ուրխանըմ, սրտնէս լիանմ ա, ամմա կարըմ չընք, վէր



էտ խուտերան, ծառերան հւքերան, ճնջըմնջեղան մունք էլ ըրէնակ եօր օնինք, տարին մին հետը կլխըներիս տւած, ըհա տասսը տարանը մին թազալեամիշ ինըմ, ծաղկըմ, բար տամ, վէր մզանաւ էլ օրիշնէն ուրխանան, օրիշնէն լիանան։

Ղորթ ա կեարունքը կեալուց մէր հայերն էլ ըն փոխվըմ, ընդրանք էլ ըն թեազալամիշ ինըմ, ամմա էտ թեազալամիշ ինէլը ընդրանըմ չի վէր մահուգի աէրտուկը տէն տինին՝ չէչուչի ու պարուսինին կէնան. կլխներին բուխարա մորթի փափախը եօր օնին, կարտուզ, շլեապա եա գըրաստի—պըռաչչայը նի քաշին. զիմնի պալտոն տէն քցին, լետնին կէնան. եա չէ հարս ու ախճիգ փլանէլի, վլիզոնի ու սուկնոյի գերեանէն ու պլիւշի բոտոնգնէն ծալին զրազ տինին, խաս ու զումաշ, փափաան չօրերը մէյզան քցին, կլխներին էլ ծէտ չասխ, ճնջըմնջեղ չասխ, խուտեղան, ծղկեղան չասխ տինին չոռ կեան ու ոնըմը տինին վէր իւրանք էլ ըն թեազալեամիշ իլալ, իւրանք էլ ըն կեարունքըհան իլալ։

Միամիտ խալխը զորթ ա հեռուզան հեռու եշըմ ա էտ իրըսըհան փոխուած մարթոցն ու կնանոցը, ասծու փառք տամ, վէր հա՛ կեարունքը եկալ ա, ժըղովուրթը առաչ քեցալ, ամմա պատառ մատառ սէր սիպտակյան ճօկոզը, կլոխը թփըհարըմ ա մ՛խ քաշըմ—մ՛խ ըստարի էլ ըստըհէնց, ասըմ ու անց կէնըմ.

Ախր հ՚ւնց չի ախ քաշի անց կէնա, քանի վէր էտ թեազալեամիշ իլած փափաան խաս ու զումաշ չուրերին, կարտուզ շլեապին տակին էլհա հերուայ, մէկալ տարուայ

մարթն ա իւրան բոյաւ բուսաթաւը, խելքաւ շնորքաւը եա խսեաթաւը ու մզաջափ էլա փոխուալ չի հերիք չի, հեալա մին քանէ պէնէրըմ էլ խիլլի արթմիշ արալ։

Ասած ա «օցը իւրան խորխը կփոխի, ամմա խսեաթը փոխել չի»․ մեր հայերը դիւզ օցու օրըմ զատեր ըն տեռալ մհէգ․ տարին մին չէ, տասնը մին հետ իւրանց խորխը կփոխին, հեալա էն ասըմ չըմ, վէր օրը երեք հետ փոխող էլ կայ, ամմա մի հետան մին հետ իւրանց խորխին տակին քոն իլած խելքը, սէրտը եա խղճմտանքը փոխել չըն, զրթնըցնել չըն, վէր եր կէնայ մին հաշիւ տայ իւրան բրարմունքան, պնոթիւնան, վէր միամիտ խալխն էլ տմնալաւ՝ իւրան չարն ու պարին ճնանչի, չառայ փուրցանքայ ազադ մնա։

Էտ խղճմտանքին ու խելքին քոն ինելան՝ սոր տեսնըմընք, վէր մըզանըմ ամէն պէն թըսըպարան ա տեռալ․ էլ սումարան չասխ, ժամ չասխ, վանք չասխ, կազէթ, կիր կիրակոս չասխ, ազքատանուց ու պարեկործական ընկերութիւններ չասխ, ժողովարան, կիրատուն, թեատր չասխ, չօխ էլ աւաշ քինալու տեղ, եա եա ըն քէցալ, լիս տալու տեղ՝ մթնըքշեր տեռալ, ծեռք մկնելու տեղ՝ մէկնողին ծեռքին էլ թխալ չուլխըցրալ, էշը իւրան տեարն ա կուրցրալ, վէշխարը իւրան չոբանը, տաւարը իւրան նախրչին․ զալըոթունը հայասըզոթունը անարուռ ու անխղճմտանք պէները ծով տեռալ՝ երգիրը սողոմ գոմոր չինալ։

Դեարդ հէ՞նչ, հեալա էս ու էն զոլան էլ փասպարք ըն անըմ թա՝ Խաչա՞ն, խէ չըս էտ անարուռ պէները



զուռնիտ ըռըխին տինըմ փչըմ, աշխարքաւ մին անըմ, վէր բեալքի մին պատառ զինքընէն հւաքին, վընըրնէն եա տինին։

Ա․, ծէզ մատաղ, Խաչանը քանի մին ցաւի կեայ, տիերըս թքըմ՝ իրես ա, տվեր ըս թքըմ՝ մրոք ա․ հէ՞նչ էլ չինի մարթ ասմա արուռը իմն ա, ջահիլոթուն ըն անըմ, սոր էքիւց իւրանք իւրանց խելքի կը կեան․ ամմա ըստի սոր էքիւցը քցելաւ, տեսնըմընք խիարը ծուռ ա փսնըմ։

Ախր հո՛ւնց չի ծուռ փսնիլ, քանի վէր Մշակ ապօրը մըռնելան եաը (Աստուած հոքին լուսաւերի, լեաւ ժառանգնէ եա քցից) մէր ժողովուրթը դիւզ Սիւննի ու Շիա ա տեռալ։ Սիւննուն չինածը՝ Շիան ա քանդըմ, Շիին չինածը Սիւննին․ էլ մէջ տեղ հաշիւ տուող չի կայ թա էս հինչու երայ ընք․ ախր վէր թոխրը քաշած մին զրաղան մեր տոնը, ասըմընք փիսա, քանդըմ ընք, տեսնանք լեաւը չինելի էլ խելք, շնորք կա՞յ, թա լհա բոշբողազ տիւս ընք տամ։

Ղորթ ա սիւննոցն ու շիաներին մէջին էլ կան ծանդր, ծնդրեանա, խելքը կլխին մարթէք․ ամմա չաթուքեասանը, մադըրաքաղը հանց շտացալ ա մէջըներին, վէր էտ ծանդըրեանա մարթէքն էլ ըն արալըզըմը կոլ քցալ։ Թա եր կը կէնաս սիւննոցը արարքը չաւ անիս, ասիս ըստըհենց չի ընդըհենց ա, քեզ քըրպըրանուկ կանին կարկուտ թակած տանձու օր քցին․ թա չէ կասիս շիան ղալաթ անըմ, էս պէնըմը ծուռ ա, մհէգ էլ ընդրանք երատ քթը պռօշ կանին։

Մհէգ ծէգ ըմ հրցնըմ, էրկու կրակին արալըղըմը Խաչանը հո՞ւնց անի։

1.

Ախր կը կարի՞ պէրան պենա եա զուռնին փչի թա մէր Էչմիածնա իրեսըհան հիլի, տկըհան ծիլի ախտախկալ շիա ու սիւննի վրժըպետնէն հռնէ աջըղբազարի պէնը էնտեղ հացրին, վէր վացցուն օխնասուն մունթու բշտ-բշտորեցին, կռէւ սարքել ուլին, հեաքինէն քշկած Թիֆլիզ ղարկեցին հերէք չի, հեալա իրանց էտ արաքըն էլ կըլթներըմ, քուչներըմ չաւ ըրին, համ իրանց անըմը բեղնամ ըրին, համ էտ անմեղ մունթերին։

2.

Ախր Խաչանը կը կարի՞ ամբլին թխի թա մէր շկոլներին պարեկործական էս ու էն ընգերութիւն-ներին, կնգտտուրներին եա չհարներին դումերին մէջին մին բանէ չնաճանչ ասիմ, ծիաճանչ, թա պըլթաճանչ բհամ եկած՝ էլ պէն ու կործ չոնին, տղըրմ ըն ըստեղ, տղըրմ ընդեղ, հիւրթու, տռնու, միւսըմուտու նի պը-ծրնմ, ստիւր խըրտըհարըմ, ընգիւր խըրտըհարըմ, էլհա տղըրմ կորչըմ ու մին բտտուծածէրը տխս չի կեամ ընդրանց պիւնը ճխէվլու քանդըմ, եա ծոխ տամ փոխչըցնըմ, վէր արուը իրեսին մարթէք կարին ընգեղէք կոխին, առանց խըրտըհրուելու պէն տեմնան։

3.

Ախր Խաչանը կը կարի՞ պէրան պենա ասի Շիա ու Սիւննին հանց մին մինու հետ ընգալ ըն, վէր ասծու



պարի լիւս, պարի խըրխըգիւնն էլ ըն կտրցրալ ու խոսք կապալ, վէր վէչ մին մինու հացա օտին, վէչ մին մինու ճրա խմին, վէչ մին մինու անա առուտուր անին, վէչ թատրոնըմ, ղոնախըղըմ եա մին պարի պէնըմ մին մինու ռհաստ կեան, վէչ խնամութիւն անին՝ ախճիգ տան, ախճիգ ինք օնին, մախլաս հային չէ ասին, չէին հա՛, սևին՝ սիպտակ, սիպտակին՝ սև, մածնին՝ թան, թա-նին՝ զեահրըմար. էհ—քանէ մինն ասիմ, էտ անխծածնէն հանց լէթուալ ըն, հանց իրես առալ, վէր մարթ վախըմ ա թա խուսըցնի, լակ ծուի նման նստա կէնան, չնա-ւետը եր անին։

4.

Հեալա դեարդ հի՞նչ. մին փարա մարթէք էլ հարերգա հարայ ըն տամ—հա՜յ, եկէք մէզ փռնեցէք, լիւսաւերալ ընք, առաչ ընք քեցալ. քաններորդ դարն ա. ա՜յ մէռնի խոի լիւսաւերուելն էլ, առաչ քինալն էլ, քաններորդ դարն էլ, թա զորթ ա։

Ասած ա, ծառը վէր շատ բար եօր օնի, կլօխը բաշ կը քցի. մէր հայերին կլխին խելքը վէր շատցած ինար, մհէգ կլոխը դոշին երայ ճըղանք իլած պեղմա ինար. ամմա հաղարաւեր իւրանք իւրանց ուսումնական, լիւ-սաւեր, խելունք ըմ գիդըմ, վէր կլխընէն փոչ ու տերտակ ինելան, գիրքի խզատակն ա քինըմ, քթընեն էլ պցրանըմ աստղերին հսնըմ։

Էհ, էնքան խտի ցաւեր դարդեր կա, ես վէր մինն ասիմ. ճխէւլու հաւքած լիւսաւերներան մին էլ էտ ջուռա կեարունքըհան ինելան Աստուծ ըզադի մէր երգիրը։

## ԽՈՒՐԴԱՓԱՐԱ ՊԷՆԵՐ:

*Ինգլիզի պարլամենտըմ խօսած պղնձռեխ Ռուհանին վերջի ճառը 72 նումեր մին կզեթըմ, վերի անըմը մունք յայեղ չընք անըմ տանք:*

### ՄԵՆՔ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՏ, ԴՈՒՔ ԿՂԵՐԻ ՀԵՏ, ՄԵՆՔ ԿՂԵՐԻ ԴԷՄ, ԴՈՒՔ ԺՈՂՈՎՐԴԻ ԴԷՄ:

Մեծապատիւ, կիսապատիւ և փոքրապատիւ տիկնայք և պարոնայք. կար ժամանակ և այդ ժամանակը շատ հեռի չէ, երբ մեր նախորդը կռւում էր կղերի դէմ (ծախից—շատ նհախ ար անըմ ծէր նախորթը), իսկ մեր հակառակորդները—յետադէմ, խաւարամիտ ամբոխը պաշտպանում էր. կղերին, իսկ յետոյ փոխուեցին հանգամանքները (քամին տեսնաս հշտըղան ար փչալ) և մենք լուսադէմ և յառաջադէմներս պաշտպան կանգնեցինք կղերին (կործը ուզալումնի ար, ի հարկէ պաշտպան կը կաղնիք), իսկ նրանք, այո նրանք այդ խաւարի ծնունդները, մեր հակառակորդները կռիւ մղեցին նրա դէմ. այժմ կարգը մերն է, մենք կռւում ենք կղերի դէմ, (ընդրա մհար վէր ծէր օղած կղերը էլ տեղը չի). իսկ նրանք պաշտպանում են կղերին, բայց եթէ վաղը, միւս օրը նրանք դէմ կլինին կղերին, մենք կպաշտպանենք, այո կպաշտպանենք նրան. (աշխից—բրաւօ, այո, կպաշտպանենք իշալլահ, թա վէր մէր արազը ի պարին կտարի)։

Այժմ տիկնայք և պարոնայք, alea jacta est—վիճակը ձգուած է—մենք բանում ենք մեր դրօշակը (դօշակը) և կռիւ ենք մղում (էլհա կռիւ, խալթաբալա



էլի). կռիւ, անվերջ կռիւ (հ՚ի՞նչ փիս զուշունլուղ տարի ա տէր Աստուած, հերիք չար Զինմաշինին ու Ճապոնին կռէւը, Սասունի կոտորվուծքը, մհէգ էլ ըստեղ ըն օղըմ արիւն անին), մենք կըկռուենք, անվերջ կըկռուենք խաւարի դէմ, իսկ նրանք լոյսի. մենք հնազանդութեան դէմ, նրանք ըմբոստութեան. մենք կրօնի, նրանք փըրկչի. մենք դոլմայի, նրանք շիլափլաւի. մենք քամու ջրաղացների, նրանք մարդ-գազանների և գիտէք մեզ հետ կլինի ժողովուրդը, որովհետև մենք ենք նրան երես բացանողը, նրա միակ պաշտպանը. նա աշխարհիս սկզբից մինչև ջրհեղեղ, ջրհեղեղից մինչև Զօրաբաբէլ, Զօրաբաբէլից մինչև Արծրունեաց վերջին շառաւիղը մեզ հետ էր, մեզ հետ էլ կլինի մինչև յաւիտեան։

Մենք նրա առջևից, նրանք մեր ետևից. մենք նրա ըթից բռնած, նա մեր պոչից կացած՝ կգնանք կռուի դաշտը (Միլլին չոլը) այո՛ կջարդենք թշնամու բանակը (մժեղն ու մոծակը), կտանենք յաղթանակը, իսկ այժմ հայ ժողովուրդ, դէ, մեզ հետ, օն անդր առաջ, մի ձա՛խ, մի յա՛ջ, հապա՛ն առա՛ջ, առա՛ջ... (ձայներ. բրաւօ, բրաւօ Ռուհան. օն անդր առա՛ջ)։

Դէ ես հ՚ի՞նչ ասիմ, հայ ժողովուրթ, վէր մին քանէ քեանդիրբազնէ քեզ օղտու տեղ ըն տիրալ, նոխտան քցալ ճիտդ, ման ըն ածըմ, օղած վախտն էլ դեաւա, եր՛ևս, ասըմ չուքըըցընըմ, պեռնըմ, իւրանք էլ կլխաւը եր ինըմ սալլանա, սալլանա հշտեղ ասիս քշըմ ու տու սուս ըս անըմ, մին վզաթակ չըս տամ էտ քեանդիրբազ Ռուհաններին, վէր իւրանց ասմունք օղտը ճնանչին, էլ հա-

մարծակուլին վէչ քեզ եր ինլին, հեալա պարլամէնտըմ էլ զզմիշ իլած՝ ճառեր ասին։

## ՉՈԽՈՆԻՆ ԹԼՂՐԱՄՆԷՆ

1.

*Մաստւա*. Ձեպքի փաշին։ Աֆֆարիմ, մալադէց, վէր մարթ կուտրելու մհար մզանըմ էլ աստղեր եա լևանըն-գէք պըժէնին, հւստաս մեր հեպքիմներին մհար էլ երգինքըմը ասող չմնար։

2.

*Զինաստան*. Թու-չէ-փու-Տին-Ցին-լեան-Ծան-լինգ-Զու-լի-Հունգ-Զինգ-Զանգլին։ Ա՜յ փոչ ինիս տու հա՛, խսկի հըմանչըմ էլ ըս անըմաստ. տեսյն ա վէր փիախիտ ղազի թեին էլ պուք տան, հեալա ծամիտ կէսն էլ կորին. բա իտի աննամուս պէն կփունին։ Ձեպքի փաշին մչանք էլ չըկիր, վէր քսան հազար զուշունաւ իրեք հզեր մարթ էլա կտորիս, համ անըմըտ պցրանիա, համ էլ ծամիտ պտկան կեարմիւր բանդ կախ տա՛ն։

3.

*Թիֆլիզ*. Թեմական վերատեսուչներին։ Աստու աչքին վէր սեկտեմբերին մէր չհարնէն վարժապետնէ զարկիք, հանց ըրէք, վէր լոխ մին զալիբ իննասուն իննի պրօբի չիտ ինին եա սւննի, թա չէ խատն իլած վախտը, էն էլ քաշ պրօբի, էնքան մին մինու աէխ ըն կործըմ, վէր էլ մչալ չինըմ ուսնթերին տեսս տան, խեըք չնոլք ավըրցնին։

*Խմբակիր-հրըպրակիչ*

**Տմբլաչի Խաչան։**

---

# ՋՈԽՈՆԱ-ՏՄԲԼԱ

[1896 թ.]

## ՄԷՐ ԱՀՎԱԼԱԹԱՆ։

Իմ աչքի լիս կրթեցող, էսա մին սաղ տարի կա, վէր տոն ընգած, սէրտս կտրած, մէտքս մեալիւր զուռնա-տմբլիս իրեսը սև քաշած՝ ախ ու վիշաւ սիրտըս մաշըմ ըմ, անզուճնէս համեշա ծէնի, թա հշողան ա մին խէր խաբար եր ինէլու, վէր օրախ սրտաւ եր կենամ հինի կօպալնէս եօր օնիմ եա տմբլիս դաւըցնիմ, եա զուռնիս ծիվանը քեօք անիմ տրխտխտին նի քցիմ, ամմա քանի մթնըմա լիսանըմ, էնքան չառ խաբարնէն չտանըմ ըն, դեահի բէթար կռներըս թիւլըցընըմ։

Սօր էլ մէր համքեարներան մինը ղաւալ Պոլին ափալթս կտրալ ա— թա ուստա՛, ախր վէր սաղ տարին իտի չլա ըս մտալ, տանան տիւս չըս կեամ, փեշակտ պընըցնըմ, էքսան օրը հում քու խօխէքտ պհելու։ էս ա պարեկնթան ա. հզեր տեղ հրանէք, փսականչ, խնըմականչ, նշանտիրիք, քէֆ ու զօղ ա ինելու, վէր քինաս վէչ չահի բիտտա ծեռք քցիս, բա մեծ պասան չրու վըլթեկուռ հնոնց ըս զոլամիշ ինելու. հնւա քու դէյդըտ

քաշելու։ Ե՛ր, ուստա՛, ե՛ր անսէս քինանք Ամիրջանանց հրսանէքը եօր օնինք, սօր իրեք հետ փասպարք ըն ըրալ, թա Խաչանը կինի, կինի, թա չէ մէր հրսանէքը պլկովի մուզիկաւ պետմա անինք։ Խէյըռ խէրը ջուբատ քցըմ, խտի համիա տոնը ծեռքատ տամ։

Ա., Պուղ, ըսեցի շատ լեաւ ըս ասըմ, խօսկըտ հախկիա. ամմա Աստուծ, երգինք, կետինք վկայ, էլ ծեռքս կասխ պատ չի կեամ, վէր եա տմըլխ կուպընէն եօր օնիմ եա զուռնիս ծվվանը քեօք անիմ, էլհա իմ փեշակը պնըցնիմ։ Վէր իրես ընգած եօր էլ օնիմ, գիդա փաշոմի զատ տիւս կը կեայ, խալխին մէչին բիարուռ կըտեռնամ, էսքան տարուայ անըմըս տախաւը կտամ. չէ, ա Պո՛ւղ, լեաւն էնա ես ու իմ խօխէքը տիւղնը ծարաւ կուտըրվինք, քանըզ իմ փչակին քոռ աչքաւ եշիմ, չէ, ես կեալ չըմ։

1.

Ախր ասըմ ըս քինանք Ամիրջանանց հրսանէքը եօր օնինք. լեա՛ւ, բա ես հե՞նչ սրտաւ ընկրանց զուռնոնի բալկոնան սհարի փչիմ, զուռնին ծվվոցը Ղալան քցիմ, մին քանէ արսըզ մարթոց ուրխըցնիմ, քանի վէր էսա էրկու տարիա Օսմանլվըմը արիւնխաղաղութիւն, կուտորվուծք ա. օր չի ընցնըմ վէր հեարիւր մարթ չի կախ տան, օր չի ընցնըմ, վէր հեարիւր տոն չի կրակ տան սիւնգ անին, օր չի ընցնըմ վէր հեարիւր ջեահիլ ջւանի սըրի, թրի փայ չի տեռնա, մեարը խուխին ըռաչին չը մորթին, խօխան՝ մորը, քւերը՝ ախպօրը, ախպօրը՝ քուրը, նշանածը իւրան սիրական փըսին, փսին՝ իւրան սիրական նշանածին, մանուկը ուրուրոցան չհանին, տէր-



տէրը ժաման, պառաւը պուճախան զինար զինար կուտորին, կիւլու կէզանու ռէխ տան, շնըռքներին չհարներին ծոխն ու մոխը չըռւ երգինքը հանին։

2.

Ախր հե՞նչ սրտաւ ես քեօչարի ածիմ մակարներին քէֆաւ զուլաւ ժամ տանիմ, քանի վէր ընդըրանց նման հզեր հզեր ջահիլ ջւան տղէք սօր բնոված զարզամբէքը քցած, սոված ծարաւ տանջվըմ ըն, չըշարվըմ, իւրանց սրտի խորհուրթը անկատար, օրը տասնաւ, քսանաւ հուքինէն տամ, թա հինչա թօղալ չըն իւրանց մօր ու քըւորց արուռն ու պատիւը շան կիւլու ռէխ ընգնի։

3.

Ախր հե՞նչ սրտաւ նստիմ իրզէյի ածիմ, նեանամ, սեանամ խանըմներին պար ածիմ, քանի վէր էտ խանըմներին նման շատ ազիզնէ սօր օրին հացին միւհտաջ, վէչ կլօխ տինելի տեղ օնին, վէչ մին փոր հաց, մին սիւրու եթիմնէ կլխներին հւաքած՝ Իրան, Ռուսէթ շաղ եկած՝ էս ծիւն ծմեռնը տռնը տռնը ընգած՝ մղկտալաւ ըստիւր ընդիւր վէգ ըն ծըռըմ, ծեռք տէմ անըմ։

4.

Ախր հե՞նչ սրտաւ շախշախի ածիմ եա ահմադի ազիզ-մեազիզ ըխճըկօրանց պար ածիմ, քանի վէր ընդըրանց նման շատ ազիզ ըխճըկէրք իւրանց մօրը հօրը ծեռքան խլած՝ հում գիդըմ, վէր քիւրդի եա թօրքի ռըխի գեանքընէն մաշըմ ըն, մահին երանի տալիս։

5.

Հի՞նչ սրտաւ ղոնախըղըմ նստիմ սիլի բիլի անող ջահիլ ջհուլու թմաշա անիմ, քանի վէր հղեր ջահիլի սրտի եղ սօր հեալւալ ա, աչքին իշեղը խուարալ, ումբրը սլացալ, գիլակը փորըմը մնացալ․ ճիւրը հարամ, հացը հարամ, նստել եր կենալը հարամ, ապրելը հարամ հու հարամ։

6.

Բա խոր սև օրեր տեսնողը եա լողը հի՞նչ սրտաւ հրսնքատոն մննի, զուռնա փչի, քեղ ըմ հրցնըմ։ Օրից պէն ա թա վէր էպքան կուտորվուծքան եոր մին ըստուծաւէրը տիւս կեալ հային աչքին ըրտասունքը սրփի, իւրան վեաթանը, տօնը, տնատեղը եա օջաղը ՝նշանց տա, քինա երա կշոռ անի, էլհա իւրան արևւն քրտնընքաւը համ իւրան տօնը պահի, համ մին սիրու բոշբողաղ քիւրդու, թուրքու, նասրանու փոր կշտըցնի։

Ամմա հօ՞ր ա, ինձ տո՛, քեղ տամ, հային Աստուծը ծեռք ա քաշալ, ղրաղ կացալ, թուրքին էլ Աստուծ չոնի, հի՞ւր կոշտ քինա, հի՞ւր փէշէք փռնի, եա հի՞ւր իւրան ցաւը դեարդը ասի. եա վէր ասի, կը կարի՞ արնախում թուրքին ծեռքան պրծընի՞։

Ըսողներին կլխին հռնի խրէգ օյին եկյին.—կէս մին զարգամբուռացըմը փթըցրին, կէս մին գեամու տարին ծուվերըմը բաթմից ըրին, կէս մին էլ զըընդարան քցեցին սաղ ըշխարքաւ մին ըրին։ Հի՞նչ վէղը տա կլխին հայը, ընդրա անտիրական ճկատին սև օր ա կիրուած, սև օրաւ էլ պեղմա չրու վէրչը քինա. ճկատին կիրը



փողմից անեկը վէչ իմ ծեռքին ա, վէչ քու, վէչ էն Եւրոպու հեաքիմ-սհարներին, վէր էսա քանի տարի ա Ստամբուլ նստած՝ քշեր ցիրեկ կռիւ ըն կտրըմ թա հունց անին, վէր համ ըրնաքամ իլած հայերին սէրտը չահին, համ ըրնաքամ անող կեարմիւր կատարաւերներին։ Հէնց ըտրա մհար էլ հային խնթիրքը հանցըն չինալ տըկողնէ չամփուր քաղած մսի թիքայ, եա կրակին թիժին ըն տամ, եա մուրմուտին քցըմ, աչ պըտնըմ, ծեախ պըտըտնըմ, մուխրաթաղ անըմ, մոխրան հանըմ նոր մինա ալուին տամ, ոժոժցնըմ, ընճրնաւէտը եր անըմ, եա քաղցը սոհրաթի փռնուած վախտը՝ հեալա թիքեն կէսը չխրուած՝ չամփուրը պցրցնըմ, եա առէ ղրաղ քաշըմ, կրակին երա ճիւր չաղ տամ․ մին խօղքաւ հանց տիւրիւր ըն կեամ; վէր վէչ չամփուրն էրվի, վէչ խըրուածը։

Մինակ զեարդը էտ չի․ էս մուտերքըմն էլ առըմ ըն էտ չամփուրին մին բանէ մսի թէքէք էլ ըն քաշալ, հեաքիմ սհարներին լափ չաշմից ըրալ․ խեղճերը էլ գիղըմ չըն վէր թիքան չիւտ խրաւին, վէրը թողին, վէրը չամփուրան հանին ղրաղ տինին․ էլ խելըընէն կտրըմ չի թա վէր խոր էրգեան չեաշմից իլած մնացին, չամփուրին կողքին պըրզած եա մարաղ կացած չալչալ կատուէքը էնա չտահնէն զիլած՝ եչըմըն, թա հիրըն մին ըշկաթող ըներու, վէր համ չամփուրը թացնին, համ խրաուածը։

Հի՞նչ ասիմ, Աստուծ խեղճ կեալ հայոց ազկին, վէր էտ խըրվածին թիքէքը հեաքիմ սհարներին եա մէր ջահիլջհուլներին ծեռքին վէչ հում մնա, վէչ առի չուրանա ողեր կտրի, վէչ էլ չալ եա բող կատվու փայ տեռնայ...

## ՊԱՐԵԿՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՀՈՒՆՑ ՊԵՏՄԱ ԻՆԻ

Ղազանչեցունց ժամին ողորմածհիւքի Խոտըցի դէրը գեահտանքիր ըլըտարանին կողքան խօսելուց, կասար «Պօղոս առաքեալը ասըմ ա, թա ըղքատին ողորմութիւն տալուց՝ զուռնա չի փչիլ տաք. եա չէ հանց ողորմութիւն տւէք, վէր ծէր ձախս ձեռքը գիդա վէչ թա աջը հի՞նչ ա տամ»։

Թա ըտրա մանին հի՞նչ ա ըլալ, վէր խոհ ա ասալ Պօղոս առաքեալը, եա գիդըմ չըմ, ամմա իմ կարճ խելքալը շատ նհալս խօսք ա։ Ախր հանց թա զուռնա չի փչէլ տաք եա պուբլիկացի շանիք, բա վէր պուբլիկացի չինի, ազքատը հի՞ւր կուշտ քինա, հի՞ւր ծեռք տէմ անի, եա հի՞նչ գիտա հու ա էտ ողորմութիւն տւողը. եա չէ հանց ողորմութիւն տւողը շտւողան ճոկուի, մին նշան պէտմա ինի՞ թա վէչ։

Ըտրա մհար էլ եա իմ Աստուած, շատ լեաւ ըն անըմ Բաքուայ, Թիֆլիզի եա օրիշ տեղերի նեանամ-սեանամ խանըմնէն, եա համխա-համխա մարթէքը, վէր մին ըղքատու ողորմութիւն եա հաց տալու մհար, մին քանէ օր առաչ պուբլիկացի ըն անըմ, վէր համ աղքատ ըղքուդ իւրանց երայ հւաքուին, համ հնդեր հրեան գիդան, վէր սօր Կնձմնձուկանք ըն ազկին պարեկործ, էքուց Խնչըլօզանք, ալօր Կուտեմտխեմանք եա Պապակընձանք։

Հեալա եա էտ պուբլիկացուն ռազի չըմ, թա օզըմ ըք հայերըմը համ ողորմութիւն, պարեկործութիւն անողներին թիւը համրաքը շտանայ համ ողորմութիւն օզողնե-



րին (ըտրանց թիւ ու համրաքը չի կայ) եա խորհուրթ կտամ մին թեազա կազէթ տիւս պիրել անըմ տինել

## „ՊԱՐԵԿՈՐԾՆԷ-ՈՂՈՐՄԱԾՆԷ“

Էտ կըզէթըմը սաղ տարին իրեք լիզուաւ պեատա տեաձել էն մարթոց անըմնէն, վէր մին չեահա փանած չըռւ մին մանէթ պարեկործութիւն կանին, ամեն մինին անըմին ըռաշնին էլ անդպատճառ իրան շէքիլը քաշած տիւս պիրէլ, վէր բոյը բուսաթը իմնա, թա հինչ մարթ ա էտ ողորմութիւն տւողը, վէր օրիշ մարթի նհետ փոխըը չընդնի։ Թա չէ տեանըմ ըս կըզէթըմ կիրեցին Սերգէյ Պետրովիչ Ղաչղադանովը վեց շահի ողորմութիւն ըրաւ, չէ՞ն կէնայ, չէ՞ն կէնայ։ Խէ՞ էլ Սերգէյ Պետրովիչ Ղաչղադանով խըէգ մարթ կա ըշխարըըմ. ամմա վէր պատկերը անըմին կողքին պըըզըրած կինի, էն վախտը կարթողը քառ չի, կըտեսնա վէր էս մին Սերգէյ Պետրովիչ Ղաչղադանովին փորը հանց քիւլլամա տիւս պրծած ա, վէր օխտը հեարիւր քեասիբու վէքսիլ ածիս մէչը, երկու հզեր խաղընխտեընի լիտեր, տասը հզեր կլեաւուզնի թըղթեր կտանի, իսկի այնըմն էլ քցել չի, ամմա էն մին Ղաչղադանովին փորը հանց նի պրծած ա, վէր կասիս մէչքան եափուշխանա՝ նեստա տւած ինի, ու իրան օրըմը բուղազաւը մնանա չի անց կացալ։ Տիքիլան բաշխա, լեաւ կինի, վէր պարեկործնէ—ողորմածնէրին մին քանէ ահվալաթնէլ կիրուար. օրինակ իւրանց փեշակը, հարստաթունը, առւտուրը, ազափ ու փսակուած ինէլը (եաշը պէտքը չի, հարսնացուէքը կխրտնին) շըռւ սօր ըրած պա-

պերկրծութիւննէն ու աչքի ընգնելու համար կանաչ կեարմիր թնակաւ մեծգա տէնը անէլքընէ։ Զին մեծ նիսիա պարեկործութիւն անելն էլ ա մօդա. վէր մօդա չինի նհակս տեղան ըն Գեանջա, Թիֆլիզ եա Ղարաբաղ չատերը իրանց մրգըներին երա առաջնորթին եա վրթըպեռին պրանաւը ճառեր անէլ տամ, զօրբա-զօրբա պէներ խուստանըմ ու վասն հոքոյն հանգուցելոյն ժողովուրթին իրեք հետ եւկ ծանդր տինէլ տամ, վէրջն էլ անգուծին քամակը բըլմ, կանդխտորներին նխուց գեաթեարը հատըցնըմ։ Մախլաս հինչքան տեղուատեղ կիրուի պարեկործներին ահվալաթը, էնքան խալխ տես կըկեան էլ մէչ տեղ շըլըմադլի պէներ չի կօյանալ։

# ԶՈՒՌՆԱ-ՏՄԲԼԱ.

## ՊԱՐԵԿՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԻՆ ԼԵԱՒ ՁԵՆՆԱ.

Սիրելի կըթեցող, հունց վէր Պարիժու մօդէքը մէր կնանոց խելքա տանըմ ըն ու մին մինու աջուցու հեաբեաքեաթ ըն անըմ, վէր իրանց շորերաւը խալխին բըմըցնին, իրանք էլ ճաքուած, տրաքուած ման կեալու փառաւերուին, ընդըհէնց էլ բատարի Օսմանլուան փախած հայերին հաց տալու պարեկործութիւն անելն ար մօդա տեռալ ու մէր Բաքուայ կնանէքը մին մինու կլխու լօք ին տամ, առաչ իրանք ադկին պարեկործ տեւս կեան։

Թա էտ պարեկործութիւնը հունց ջուռայ ար ինըմ, օզըմըմ տու էլ գիդաս, բեալքա քուադադինա տու էլ չիլ ընգնիս պարեկործ տեռնաս, բեզ էլ փառաւէրին անըմըտ կըլթներըմ տեաճին։

Զը՛նգ, զը՛նգ, զը՛նգ տիլիֆոնը ընգուծին զընգըլնգցնըմա Բեարավուզանց Սառա բաջին։

Զը՛նգ, զը՛նգ, զը՛նգ մին դադաըմը մին օրիշը ծէն ա տամ—հա՞ւ ա խօսողը։

«Ես ըմ Սեանամ»։

—Հը խէր ինի, հի՞նչ կա։

«Սեանամ, քմատայ էրխուց ինձ քեօմագ պէզմա անիս։

—Ելնա թեազա չորըս կարել տամ Խլփեցին հա՛․ մաղազին պեզմա քինամ։

«Չէ, չէ էրխուց նօբաթն իմ՛ն ա, օզըմ ըմ էն Ստամբուլայ փախած ախկատ հյերին հաց տամ։

—Ախճի գէյդա կորի, տու էլ ալ՛ն չօնի՛ս։

«Ախճի բա էրէգ էն կլխիս մատաղ խլածը տեսնըմ չի՛ս հինչեր ար անը՛մ․ բա ես կթօղիմ վէր լինդի չոնը ինձ երայ հաշի՛։

—Սառայ քմատաղ, վէր հացըս տամ, լեաւ հաց չինի, թող էն մին բաղինին էլ մին լեաւ ճիճինի տրաքի պիրինք, վէր էն օրը խալխին մէչին պարծէնըմ ար թա իրան անա լեաւ հաց տուող չիյալ։

«Ը՛մ, քիւլիմ ընդրա կլօխը, ատըմ ըն էրկու ջուռայ սընգի զատ ար խփէլ տւալ, իսկի էն հայերը կէրին մէչ․ վախէլ մէ ես հանց հաց տամ, վէր լօխճու ռըխի մնա։

—Հ՛ինչըս իփելու։

«Ախճի գէ գալուսկեղէն կինի, խաշած ծիւկնը կինի, սուպ կինի, լօբու բրանի կինի, ֆիլէ-սոտերն եա անգէրկոթ կինի, արաղ—կինի կինի, առէ վէրչն էլ օզըմ ըմ մին բուլանժէ եա պլօմբիր ուտըցնիմ, թող էտ կլխիս մատաղ խլածնէն գիդան, վէր ես իրանց անա պակաս մարթու կնէգ չըմ, եա պակաս մարթու ախճիգ։

—Սառայ էտ լօխ լեաւ, բա էլ հ՛ուրըս ատա՛լ։

«Ախճի գէ Հուռումին էրկու ընճըկէրքը կինին, Մանուշը կինի, Ջեառին կինի, Մաքթաղը կինի, Ծագէգին ընճըկերքը կինին, մեր Մաղրաֆինան ու Ֆլո-



րէնցան կինին, մին սիրու էլ ինջինէրնէ, ջահիլ ջհիլնէ, բօլ չի՛։

—Բոյ՛, բոյ՛ բա հինչ ա՛․ արխային կաց, էքիւց չօկոլադին վախտին քշտխտ հազըր ըմ, ամմա Տազզազըր-զանին էլ կանչի հա, ընդրա նհետ ես չատ պէն օնիմ, տու գիդըմ ըս էլի․․․Ց՛ը։

Զը՛նգ, զընգ՝ զընգ․ Սառայ բաշխն Սեանամին թողըմ ա, տիլիփոնին զնգըցնըմ Բալախանի եա Զօրնի գորող։

—Զը՛նգ, զը՛նգ, հ՛ալ լս․ Բալախանա հրցընըմ ա ինժիներ Կալպազովը։

«Ես ըմ պարուն Կալպազով։ Սարա Կարաուզովեան։»

—Ախ տիկին տաք ըք․ պարօվ, խէր ինի, հի՛նչ կայ։

«Խէր ա, պարուն Կալպազով, քմատաղ էքուց պեզմա կեաս ինձ քեօմագ անիս»։

—Խէ հի՛նչ կա, բեալքի կլօւխ ըք քինըմ կաւալէր չօնիք,

«Չէ, չէ, օզըմ ըմ էն Ստամբուլցի հայերին հաց տամ, նոբաթն իմ՛ն ա»։

Օրխորթնէն էլ կինին։

«Կինին, կինին,

—Բաշխւստա կը կեամ։

Զը՛նգ, զը՛նգ, զը՛նգ Սարա Կարաուզովեան կանչըմա Գըդըլովին, վէր չփրծակու նման հչտեղ վէչեր, քէֆ, զօղ ա ինըմ մէչին նի պրծած ա ինըմ․ կանչըմ ա Ֆալատովին, վէր բուլամանժէ ուտելու մհար աւելի ա մէտք անըմ, քան չոր հացու էտ Ստամբուլայ փախածներին

փորը քշտըցնելի. կանչըմ ա Գարաաշըլլին, վէր՝ աչք ընդ-նելու մհար սաղ տարին ինժիների զնակը դեօշան ուած-ման ա կեամ հերիք չի.. քշերմէն էլ հանըմ ա պկան կախ տամ, եոնան քուն ինըմ, վէր կիւզանող չինի:

Եոնան կանչըմ ա ինժիներ Տապզապզանին, վէր պըրիգեանուէր ըսճըկորանց սխահին օրը հէնց հետ հա-նըմ ա, ինքը իւրան ճուկճուկատըմ, մըքըմը—50 հզերա պակաս օզողը իմ փայըս չոն տեռնա ըսելու՝ էլհա ծոցը տինըմ:

Կանչըմ ա Ծակաչեանցին՝ վէր քշեր ցիրեկ չրու ը-րազըմ՝ն էլ իւրան ապակայ վիչկաներին, փանտաններին գաւօղներին պլանն ա քաշըմ, եա էտ ապակայ ֆանտան-ներան տիւս կեալիք նօթին կինը ընգնելին երա թն-թորըմ:

Խոփ մին քանէ չէչիգ ինջիներներին, ջահիլ ջհիլներին կնչեյան եոր, Սառայ բաջին արխայինը ընգած, իրեք տրեկան զեանգին տամ ա՝ պովըրին կանչըմ:

Պովըրը սիպտակ կարտուզը կլխին, սիպտակ շորերն ու սիպտակ փըչաթկէքը քաշած՝ ըլըքըստըրակու նման խըրշած նի ա մ՚նըմ, սաղ տարուայ մէջ առաչին ան-քամը իւրան խանըմին իրեսը տեսնըմ:

«Է՜յ, ասըղա անըմըտ հի՞նչ ա»:

—Քեասպար ա, խանը՛մ:

«Քեասպա՛ր, էրիկց շիտ եր կը կենաս, էրկու հեա-րիւր մարթու թեազարիք կտեսնաս. ամէն հինչ տեղըա տեղ կչինիս, սուպ, լօբու բրանի, անդէրկիթ, ֆիլէա-տերն, զակուսկեղէն, վէրշն էլ մին բուլանժէ եա պլօմբիր•



—Խանըմ, բարըշնին նշանը՞ք տամ:

«Հի՞նչըս սարսաղ սարսաղ տիւս տամ. էն այսօրիք ըն հայըն հինչ ըն, ընդըրանց ըմ հաց տամ: Սհաթի մինին հանց ըրա լօխ էլ պատրաստ ինի. հսկացի՞ր:

Հսկացի, հսկացի, առի բէթար ըրմացած պովըրը օսերը եր քշելու հռանըմ ա, ինքը իւրան մըթմըթըմ—պլօմբիր այսօրի, այսօրի պլոմբիր, հի՞նչ ընդըրանց ուտե-լու խորաղն ա:

Համին էտ օրը Սառայ բաջուն տիլիփոնը հզեր տեղ զընգզընգըմ ա, հզեր տեղ խմաց անըմ, վէր էքսը ադըքադ-ներին հաց ա տալու, շատ լեաւ թեազարիք ա տեսալ, թա հւատըմ չըն կեան իւրանց աչկաւը տեսնան:

Էքսը Սարա Կարաւուզովնան սհաթի տասսին տն-քալու ճուռալու քէթը փռնած նի ա մ՚նըմ կուխնին, ադեկալօնին շուշան շիտ շիտ քթին օնըմ ու սուպին քափը քաշելին երա սրտմ՚նա իլած՝ տիւս կեամ, պովըրին էլհա պատվիրըմ, վէր ամէն հինչ սհաթին մինին պադ-րաստ ինի:

Սհաթի տասներկուսին հւաքվըմ ըն կանչուած նեար-մա նեազլիք ըսճըկերքը, լեաւ կեցուած, զըթարուած, վարթընէն գօշընէն կոխած. կեալիս ըն ընջիներնէն, կաւալերնէն ու լօխ շոկոլադ խմէյան եոր՝ մին մինու կոմպլիմենտ ըսելու, մին մինու աչքեր օնքեր կուլելու, թուքուն կապած՝ յղէ ըն ընգնըմ այսօրոցը հաց տալի:

Մէր այսօրիքն էլ, Հայաստանցի էն փախստական հայերը, վէր իւրեանց տուն, տեղ, միւլք, կալք թողած՝ սարին էն զոլացու նման «քիւրդը կիւլ ա, դըրխկոնը

կլոկցէք» չրու ճիւղին կիշճին խլանց գըլխկոնը կե-
գալ, ասոա պաշան նամարդ տըր ըսելու ռուսէթ փախալ,
մէգ մէծ սրտաւ (ասիս ըհա Դարոը երկալած ինըն) սուփ-
րին եռա չար ընգած՝ մոկըներըմը «ես մէռնիմ էլ խոռի
գինչ ալըոււոտ չինել ըսելու, փառուեր մաքրագրթըմ
ըն մին մինու հետա եկող ղակուսկերանը, սուպը, լօքու
բրանին, անդերկոթը, լեռւ կոնձըմ կեարմիր կինին
ու արայը. եռնան էլ պլոմբիրին իրա մաթ մնացած՝—
աս խաթունը ինչ լաւ խալխա կուռեցնէ մըզի, ատոր
խոքուն զուրբան կինանք. ինչ ալւոր ալւոր ախճիկ ու
մանչեր ալ ունի, սուրփ Կարապետ խոռնց մուրազ խառ-
ցնի—ուրհնելու, հանց ըն գիդըմ թա էտ ծըռքընէն
չրու արմունգը իր քաշած, անոլի սիպտակ փարտուկնէն
կապած, ալւոր ըլճըկէրքն ու գնակուեր ու անդնակ
լեռւ քիֆըմը կեցուած ալուլիկ ջահիլ ջհուլնէն, վէր էտ
ալւոր ըլճըկորանց էշխաւը հեաքի տեռած՝ չափ ա չափ
ըն անըմ, աման տանըմ, աման պիրըմ, քինչ պուճախըմ
էլ ծիրտի պիրտի կուտըպատըմ, լօխ էլ մին ծեռքին չի-
բեփը էն մին ծեռքին ալեկալօնին շուշան փունդ Սառա
խաթունին ճժեր վժերն ըն։

Մախլաս հացը հաքիլըմ ա, հայաստանցիք սուրփ
Կարապետի օրհնութիւնը Սառայ խանըմին տանը, տե-
ղին, ճժեր վժերին երայ թափելու, հայա հայ ընգած՝
պարկընէն օսին տիւս ըն կեամ, էքսն էլ մին օրիշ խա-
թունի դեահի քէթար լեաւ խորաղնէն ուտելի ումեդաւ,
մնըմ էլհա տները, գիւքաննէն, ծեռքընէն մէկնըմ ըն-



ցու տեարդ անոյներին, վէր կէսատ թողած պարտուլթիւ-
նին օրուայ պորցին չրու մթնըժուկը թմըմցնին։

Մէր Քեարասուլանց Սառան էլ օխտը կէգ փիլան
բոյան պըցրացած, ճժեր վժերի նհետ հացի ա նստըմ,
քացր ճառերու, կոնքրու, ստաքան չըխկըցնելու օրը
մնթնըցնըմ, գիւշանին աչքը հանըմ, պարեկոբձներին
թիւը շոըցնըմ։

## ԵՒՐՈՊՈՒ ՊՈԼԻՏԻԿԱՆ

(Եանի քա ըլկը կապուկի տաղը)

Սիրեկի կըթեցող, էս ա քանի հեարիւր տարի կա,
վէր օսմանլուին մէշքին մին եաման ղուզ ա տիւս եկալ,
վէշ խըրան մէշին հեաքիմնէն, ջառահնէն ըն կարըմ դիւ-
զըցնին. վէշ Եւրոպու էն խալխս դօխտուրնէն—հեաքիմ
ահարնէն։ Էտ ղուզը մըծընալու, մըծընալու էս վերջին
տարիներին հանց չիգալթ արալ, վէր քշտաւը ընցնողը
սրտաճանք բաղըխար ա տեռնըմ։ Էսա էրկու տարի ա
շատ հեաքիմնէ փըլմ փըլմ ըն անըմ, կլօխը եղըմ, վէր
մին թեահրաւ կըկցնին ղուզը օպերացի անին կորին,
վէր մարթու շնորք ընգնի, ամմա օսմանլուն թեարսուալ ա
վէնները ատփին կեամ, թա օղըմ չըմ. ասմա վէր ղու-
զըս կորին, ես էլ սաղ չըմ մնալ։

Հռնէ Ինգլիզին մէծ հեաքիմ ահարը ալէսաւ վէր խօ-
շաւ օսմանլուին ղուզը գիւզըցնելի հնարք չի կայ, կիրից
Եւրոպու լօխ հեաքիմ ահարներին, վէր ըտրա մհար մին
կոնսուլտացի անին. մին հնարքաւ էտ ալէնը կլօխ պիրին.

թա չըռ սօր 1897 թվու մեարդի 25-ը հի՛նչըն ըրալ, սրա-նա հո՛ռն էլ չըռ 1900 թվըը հի՛նչ ըն ընելու, լօխ ոնգուա-ռեղ Զուռնա-Տմբլին Թըլըրամներըմը շարըմ ընք։

## 1896 ԹՎԻԻ ՅՈՒՆԻՍ ԱՄՍՎԱ ԹԼՂՐԱՄՆԷՆ

*Ինգլիզի մէծ հեաքիմ ըհար Սալըբրին սաղ Եւրոպու հեաքիմ ըհարներին կանչիլ վէր կոնսուլտացի սաքըին օսմանլուին ղուզը գիւլըցնելի մհար։*

*Իտալիան օլըմ ա էտ կոնսուլտացին ինի, ամմա Հէմսին աչքը օնըին ա եչըմ։*

*Աւստրիան օլըմ ա կոնսուլտացի ինի, ամմա վէր առաջ իրան գօգըան չի տիւս եկալ էտ ալէնը, չըմըխամի ա անըմ։*

*Լեմայ.– հի՛նչ ալէն օնիմ կարմուճըմը, վէր պառտուիմ խափընջըմը ըռելու, ծեառը ըանըմ ա ղըաղ կէնըմ։*

*Ֆռանցիստանը ասմա թա Ռուսէթը էտ ալէնըմը կխառնուի, ես էլ կխառնուիմ, թա չէ վէր գիդամ հաղար մանէթ վիդիտի փող ա ընդնելու ձեռնըըս, էհա չըմ քինալ։*

*Ռուսէթն էլ գիւղ գիւղինա օլըմ չի, վէր կոնսուլտացի ինի, չինն վախըմ ա հեաքիմահարնէն ղուզը տկակըհան կարէլ ռան, օսմանլուն հիւըին տալ, էն վախտը իրան 1877 թվի վիդիտի փողերը ռաւնին կիրուի։*

## ՍԱՂ ՅՈՒԼԻՍ ԱՄՍՈՒԱՅ ԹԼՂՐԱՄՆԷՆ

*Եւրոպու սաղ տէրութիւննէն խորհուրթ ըրին, վէր*



*ռաշ ու ռաշ Ստամբուլըմ նստած իրանց հեաքիմնէն կոնսուլտացի անին, եանան իրանք հեաքիմ ըհարնէն։*

## ՍԱՂ ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍՈՒԱՅ ԹԼՂՐԱՄՆԷՆ

*Ստամբուլ նստող հեաքիմնէն խորհուրթ ըրին թա հունց ջուռա կոնսուլտացի անին. ռանըրպէց թա ռանըվիճի։*

## ՍԵՓՏԵՄԲԵՐ ԱՄՍՈՒԱՅ ԹԼՂՐԱՄՆԷՆ

*Ստամբուլ նստող հեաքիմնէն ռանըփակ կոնսուլտացի ըրին, ամմա էտ թաղը մին չըրհաչուց ընգաւ, կոնսուլտացին կէսատ մնաց։*

## ՀՈՔՏԵՄԲԵՐԻ ԹԼՂՐԱՄՆԷՆ

*Հեաքիմնէն քչեր ցիրեկ խորհուրթ ըն անըմ, ամմա գիդըըմ չի թա Օսմանլուին ղուզին մհար ա, թա օրիշ ալէնի. ասըմնէ կա, վէր հեալա իրանց քեօհնա հեսաբնէն ըն օլըմ քաշին։*

## ՆՈՅԵՄԲԵՐԻ ԹԼՂՐԱՄՆԷՆ

*Շատ թվինդ խորհուրթ կայ, հանց թվինդ, վէր օսմանլուն օլըմ ա ռուշվաթու եա ռոզկի տալու էտ կոնսուլտացի անող հեաքիմներան խօսք տիւս քաշի, թա ղուզին մհար հի՛նչ ըն օլըմ անին, ամմա կարըմ չի, ըտրա մհար էլ ղուզը տիկըին ա կեամ։*

## ՍԵՔՏԵՄԲԵՐԻ ԹԼՂՐԱՄՆԷՆ

Հեաքիմնէն իւրանց կոնսուլտային վերչըցրին, մնըմ ա կոնսուլտացու սիլը սալթլըջամը կիրին, տակին ծեռք քաշին իւրանց հեաքիմ սհաբներին զարկին։

## 1897 ԹԻՒԻ ՍԱՂ ՅՈՒՆՎԱՐ ԱՄՍԻ ԹԼՂՐԱՄՆԷՆ

Ամսի մինան չրու 25-ը—օրը վեց հեա թըլղրամ. հեաքիմմնէն կոնսուլտացուն կիրին ծեռք քաշեցին. 25-ան չրու 31-ը օրը տասսը հեա թըլղրամ. հեաքիմնէն կոնսուլտացին վերչըցրին, ծեռք քաշեցին զարկեցին հեաքիմսհաբներին։

## ՓԵՏՐՎԱՐԻ ԹԼՂՐԱՄՆԷՆ

Եւրոպու հեաքիմ սհաբնէն Ստամբուլա հեաքիմնե-րին կիրը տացին։

## ՄԵԱՐՏԻ ԹԼՂՐԱՄՆԷՆ

Հասցէ կիրըս այս խալիչին տակին, չրու վէր Բեր-զէններին փիած քիլընդեօշը կտաւչի։ Պէնա ա թա վէր էտ քիլընդեօշը չիտ սաւս՝ էն փախտը էս թըլղրամնէն պեդմա տիսս կեան։

## Ա Պ Ր Ե Լ Ի Ն

Խալիչին տակը տիրած կոնսուլտացու կիրը հեաքիմ-սհաբնէն կըլթեցին։



## Մ Ա Յ Ի Ս Ի Ն

Կիրը կըլթելան ետը, հեաքիմ սհաբնէն խորհուրթ ը-րին, թա հունց ջուղայ կոնսուլտացի անին, վէր զուզը կտրելուց՝ օսմանլուն կենթան մնա, իւրանց վիզիտի փողը մէչտեղ կորչի վէչ։

## Յ Ո Ւ Ն Ի Ս Ի Ն

Հեաքիմ սհաբնէն մին տեղ հըլքվելու մհար խոր-հուրթ ըրին։

## Յ Ո Ւ Լ Ի Ս Ի Ն

Խորհուրթ ընելի մհար խորհուրթ ըրին։

## ՕԳԸՍՏՈՍ—ՍԷՔՏԵՄԲԵՐԻՆ

Լօխ էլ խօսք տւին վէր անպատճառ պեդմա խոր-հուրթ անուլի։

## ՀՈԿՏ. ՆՈՅԵՄ. ՏԵՔՏԵՄԲԵՐԻՆ

Հեաքիմ սհաբնէն թխունդ խորհուրթ ըն անըմ։

## 1898 ԹԻՒ ՅՈՒՆՐՎԱՐԻՆ իշալլահ կկարթինք

Հեաքիմ սհաբնէն իւրանց խորհուրթը վըրչըցրին, տակին ձեռք քշեցին, տուին իւրանցա լափ մեծ հեաքիմ սհաբնէրին։

## ՓԵՏՐ. ՄԵԱՐՏ ԱՊՐԷԼ

Վասն խաթրջամութեան հասցէ կիրըս այս խալիչին տակը, չրու աշունքը։

Աշունքին էլ չրու 1899 թիւը տխս կըկեայ—լափ մէծ հեաքիմ սհարնէն օզըմ ըն վէր օսմանլուին դուզը կտրին մին հետան պըծըցնին, ամմա տնըկնէն քու ա, սրող չի կայ։

## 1899 ԹՈՒԻՆ իշալլա՛ կկարթինք

Ինգլիզի հեաքիմ սհարը սաղ տարին յօխչու տէնակ սրեկան եոր առաչ ա ընգնըմ Ստամբուլ, վէր զուզը օպերացի անի կտրի, ամմա օսմանլուն վէնները տափին ա կեամ սըռըմ, թա ես օզըմ չըմ, վէր իմ զուզը գեւզըցնիք. հունց վէր մօրա խտի իլալ ըմ, խտի էլ պեդմա մէռնիմ։ Հեաքիմ սհարն էլ տեսնըմ ա, վէր պէնիրը դիւզմիշ չի ինըմ, իւրան հնգերուքն էլ բժըպռոշ ըն անըմ երան, անսէս տէնակը տեղն ա տինըմ, նոր մինա կոնսուլտացի սարքէլ տամ։

Թա էտ թեազա կոնսուլտացին հընց կանց կէնա, էտ էլ 1900 թիւի Զուռնա-Տմբըլըմը կկարթիք*)։

*) Էս կիրը կիրէլին իրեք տարին թմամալ ա, ամմա կոնսուլտացու սեաս չի կեամ. Ասուծ մին ալլամա քար քցի բերզէններին կլխին, վէր հանց բիլընգեօշ չփիեցին համ իւրանք օտին՝ ադու անին, համ էլ խալխը նեսա մին ժաննը լպզնի. սոր օսմանլուին դուզը էլիա իւրան տեղն ա ներիք չի, հեալա եղ էլ ըն քսըմ, փորսը տինըմ փչըմ, վէր դեաճի բեթար մըծանա:



# ԶՈՒՌՆԱ-ՏՄԲԼԱ

[1898 Թ.]

## ՏՈՒՔ ԵՒ ՏԱՑԻ ԾԷՋ

Իմ աչքի լիս կրթեցող, մզանա կախուած թա անկախ պատճառաւ «Զուռնա-Տմըլին» լիս աշխարք տխս չի կեալին երայ, շատերը քթը պռոշ ըն ըրալ, ըստեղան ընդեղան փասպարք ըն անըմ, թա խէյըս սուս ըրայ, խէ չըս կազէթըտ տխս պիրըմ. քա էպան վախտ համփերել կինի, վէր մունք ընք համփերը՛մ. էտ մարթէրը հանց խօսըմ ըն, լհա ասխս ինձ վէքսիլաւ փող ինին տուած, սրօկը ընցըցրալ ըմ, եախալամիշ ըն իլալ թա փողըս տո՛։

Կազէթ տխս պիրէլը իմ աչքի լիս տժեր պէն չի, վէր տժեր պէն ինար՝ Մլումանց Խչատուրը սօր Մշակի խմբակիր չար տեռնալ, եա Ալաքպեար դային՝ Վրցըկանքի, եա խէ հեռու ընինք, մէր Նէյանց Տիմը իրեք կազէթը մին հետան չար տխս պիրիլ. ամմա պէնը ընդրանըմ ա վէր կազէթ տխս պիրօղը կիդա վէր իւրան ժմազը չըլը չընդնըմ, կազէթը մինակ կըրթելու, օր մթնըցնելու մհար չի կիրվըմ, ընդրա մէչին մեահզարն էլ պեդմա տեղ հանի, մին էլ կազէթ կարթօղնէն մին հետան խլքըներըմը պեդ-

մա նստըցնին, վէր աշխարքըմըս միւհտա միւսալլահ պէն չի տիւրիւր կեամ, նիսիա կացէթ չըն կարթըմ։

Ախր չէ վէր կըսեթին թօղթը թանաքը փօղան ա առնվըմ, տիպարանը միւհտա չի տեաճըմ, փօշտխանան միւհտա չի կացէթնէն Թիֆլիզա Կաւկազ, Իրան, Հնդստան, Զագրանիցա տանըմ, հեալա էն զրազ կէնա, վէր էտ կացէթ կիրօղնէն էլ ծէգ նման մարթէք ըն, ընդրանք էլ տռն, տեղ օնին, օըլուշաղ օնին, քիւլֆաթի տեար ըն, ընդրանք էլ օտէլ, խմէլ, կէնալ, մանկեալ ըն օզըմ։

Ես գիդըմ չըմ մանին հի՞նչ ա, վէր մէր հայիրը ցիրկլի, արփիանկլի, լօթու, փօթու, խաղ ասօղու, կարտի, ցիթի փիթի պէներու մհար հարիւրնէ կխարջին, իսկի այնըմ՛նէն էլ քցէլ չըն, ըհա վէր պէնը օրական իրեք կապէկ կըէթի փօղ տալին ա կեամ, ծըռքընէն կոչ ա կեամ, սրտնէն հայ անըմ թա ճաքի։ Ես գիդըմ չըմ էս հի՞նչան ա վէր մին փուխընհաղի կլօունի, ցիրկաչկի, աքտրիսի եա աքտեօրի բէնէփիսին մէր հայերը հեարիւրնէ կշպրտին, վէսկեղէն արծաթեղէն պաղարկէք կտան, ծի կտեռնան փայտոնին լծուին էտ աքտրիսցը ուռռայ, կեցցէ, բրաւօ կնչելու կանանչ կեարմիր բենգալսկի ճրաքնին վառած՝ տոն տանին, ըհա ասիս ազկի փրգութիւնը ընդրանց աչի թեաթուն ա եկալ, ըհա պէնը վէր կընգնի իւրանց ու իրանց անգլամաղ խուխացը երա ումբըընէն սըըցրած, աչքըներին լիսը խըըցրած, փօրնէնմէչքան կացած յօյսերու ապրօղ մէր վարժապետներին, կիր կիրօղներին, կացէթ տիւս պիրօղներին, ծեռքընէն կչուրանայ, աչքընէն կօրէկ չըն քցիլ հերիք չի, հեալա վէր ճարըներըմը



ճար ինի, քըըպրանուկ կանին, քարկոծ անին, վէր էլ իւրանց մածնին թթոյ ասօղ, իւրանց փուչ ու կեղտոտ պէները լիս աշխարք քցող չինի։

Ախր ասի տեսնամ, էս այամին հո՞ւ ա միւհտա մինին մին պէն տամ, վէր կացէթն ու կիրանքը միւհտա ինին. օըըմ ըս բաղաղխանան քինի, օըըմ ըս ահտեարխանան, օըըմ ըս բախկալխանան, ապտեկխանան եա պօլիցխանան, չըու քասկըտ ռէխը պէնըմ չըս, մին կօրէկ էլ ա տամ չըն, վէր տանիս աչքըտ քցիս։

Էս ժամանակը, ա քմաադ, էն ժամանակը չի, վէր ասըմ ար «ծրի առէք և ծրի ուէք» մհէգ ածու պարիսիս պարի իրիւգինն էլա փօղաւը առնվըմ եա ծախվըմ։

Ողորմածհօքի խօտըցէ դէրը (Աստուած հօքին լիսաւերի խէ չատ պըտիստիս խօսող մարթ ար) մէջլիսներըմը նստած վախտը, բռնութժամնը թափի տալ քչեղան եօր՝ կասար՝ «Դաւիթ մարքարէն (իմ իրեսըս ընդրա վէտանը տակը) Սաղմուսումը մին տեղ ասըմ ա — «Տուք և տացի ձեզ», եանի թա հինչ վէր տուք օրիշին կտաք, օրիշն էլ ուսայցը ծէգ կտա»։ Ամմա հօ՞ր ա, ինձ տո՞ւ, քէզ տամ. մհէգ տուքը կա, տացին Աստուած տայ, հո՞ւա հիւր ըռըխի եշըմ, լօխչու օչ ու մէտք էնա թա հինչ փեանդ ու ֆիլ պընըցնին, վէր հնգերին, հրըւանին իլած չիլածն էլ պըոկին, լիւթ թօղին։ Վալլահի Դաւիթ Մարքարէն չէ, (իմ իրեսըս ընդրա վէտանը տակը) վէր ընդրա պապ Սաղթէլ եա Մազաքէլն էլ կեան, ժըմընակիս ուստաբաշիքը հանց կթեփուին, հունց վէր չլղանու ռէխ ընգած քչեղակ։

Ղոլթ ա հղերանց մին տուք տուք անողնէն, տացի էլ ըն անըմ, ամմա վայ էն տացուն. էլ մռնըքշոթուն, ձև, վէշ, քըմսոտալ, կակուղ դամար քթնել, վննըծեաք լուղ տալ չի մնըմ, վէր մէչ տեղ չի կեայ, ընդըհենց վէր տացին լափ զեահրըմար ա տեռնըմ, չրու տեղ ա հսնըմ։

Ու ըտրա մանին գիգըմ ըք հինչ ա, էնա վէր մունք ախարաբա սվէրալընք Դաւիթ մարքարէին տուքին, ամմա ընդրա տացուն վննըկլխան փռնալ մին խոր վէրըմ թաղալ։

Մհէգ ծէգ ըմ հըցընըմ ա կաղէթ, եա կիրանք կարթողնէ, վէր մէր տուքը ինէլու ա, ծեր տացուն իրեսը արադուլլա տըսնելու չընք, էլ հինչ սրտաւ ես եա մին օրիշը կաղէթ եա կիր տիւս պիրի, խալխին լըցնի, մուհտախտռներին թիւր շոըցնի։

«Վէր ունիցի ականջըս լսելու, լու իցէ...

։

# ՀԱՅՈՑ ՃՈԼԻՆ

Ճոլի, ճոլի, ճոլ չիկայ,
Խուէծ անիմ եղ չի կայ,
Ճոլին ընգալ ա ծոլը
Ծովան տիւս օնող չի կայ։
Ծու պերէք թաթին տինինք,
Եղ պերէք վարսը քսինք,
Մեր ճոլու փայը տուէք
Ուտինք, խմինք, քէֆ անինք...



Սիրելի կըթեցօղ, տմէն դեօնըմ վէր հայոց կործեբան խօսք զըրուց ա ինըմ, համէշա էտ ճոլու խաղն ա մէտս կեամ։ Գիգըմ ըք ճոլին հինչ ա։ Արաշտ տարին Ղարաբաղըմը մին սովորութին կա, վէր խօխէքը մին փաղի տիկին ըն շինըմ, կլխին փափախ տինըմ եա չարղաթ քցըմ, տնըտոն ման կեամ, եղ, ծու հւաքըմ, էտ խաղն ասըմ, վէր հինչ ա Աստուծ ուահմ անի, անձրև կեայ, ըղանձուած արտերը տիլարին, հասկ փռնին, քեասիբ բխուբ ցամաք հացի կարօտ չի մնա։

Հայոց կործերը հարիւր չէ, էրկու հարիւր չէ, հէնգհեարիւր տարի ա, վէր ճոլուն օրն ա ընգալ՝ Ստամբուլա ծովըմը բաթմիշ իլալ։

Ղըրթա բանի տարի ա հայերը շատ հեարաքաթ ըրին շատ տէս ու տէն ընգլին, ինգլիզ, լէմեց, ֆռանցուզ ինչիներնէ պերէլ ուխն, վէր ճոլին ծովան հանին, ամմա ընդրանց թեաթին վէչ ծու տինող տիւս եկաւ, վէչ վարսն ու պոըտը եղ քսող, ըտրա մհար էլ սօր էրեւցը քցելու՝ պէնը էն տեղը հօցրին, վէր հռնէ քեալլադեօզ Բէրլինի էն ... զէններին եօղուրաւը Ստամբուլ ըլալիս ընգաւ, ինչիներնէն իւրանց չեանդալնէն եր կալած՝ քուչեցին Հնդստան, Չինմաչին, վէր ընդեղի ծովերըմը բաթմիշ իլած ճոլեքը տիւս քաշին. ըտրա մհար էլ հայոց ճոլին էլհա մնաց իւրան առաչուա տեղը վէր ընգած։

Թա մին էլ հիբ պեդմա էտ ճոլին լիւս աշխարք տիւս կեայ, յայտնի չի. ամմա ասողնէ կա, վէր էտ էն վախտը կինի, հիբ վէր անծէնը կծնուի, անտատալը կը-

կայնի, օղոլին հեաքւին տափաւը քաշ կլնի, եա մարթու հափըըմէշի մազ կըկնանշի։

Աստուած ռեահմ անի էտ պէնիրը չիտ ինին, թա չէ վէր հայոց ճոլին մին բանէ տարէ էլ մնա ծովին տակին, տէր մի արասցէ եա աւազը պետմա կոխի վըրըփարտակ անի, եա Յունան Մարքարէին կոլ տւող ձկնին ռէխը պետմա ընդնի, հուր յաւիտենական կոլ քինա…

---

## ԵՐԵՒԵԼԻ ՄԱՇԻՆ

Տփլիս թխըմ ըմ, Զուռնաս տինըմ անդուճխս ղազգրանիցս մին խըար ա կեամ թա ընդեղ Ռեօնդկէն անըմաւ մին մարթ (եամխկ հինչ ֆիս անըմ ա) մին հանց մաշին ա քթալ, վէր շափաղ ա քցըմ, հունց վէր ըռըքնակին, եա իլեքտրեկան լիւսին շափաղը. ամմա էտ շափաղին զօրութիւնը ընդրանըմ ա, վէր հզեր ու մին ջուռա ըրմնալի պէներ ա անըմ. քեզ ըրէնակ վէր քոսի, շումի, խօլերի եա օրիշ ազար բէզարի բուրուդուլուց երա ա քցըմ, զեասստի կտրըվըմ ըն, նաշաղը սաղսալամաթ եր ա կէնըմ նստըմ։ Վէր քցըմ ա շափաղը մըրմը գիւլլա, ասեղ բաթմիշ իլած եա շամփուր, տէնակ, չեանդալ կոլ տւած մինին ջանսաթին, էն սհաթը էտ գիւլլան, ասեղը եա շամփուրը իրերըմ ըն թա հշտեղ ըն զարխմիշ իլած։

Մին մարթ եա մին կնէգ մին զատ ա ինըմ կլուղացած, ջուրը եա զարիին տակը կոխած, շափաղը ծեռաց տեղը նշանց ա տամ, կեօղը փռնըվըմ ու խտի շատ պէներ։



Մհէգ կասիս լեմւ, ըտրանա հինչ։

Ըտրանա էն, վէր մհէգսատէնը Պուղոս առաքեալին ասմունքին նման և «եղիցի լոյ և զրճզրճել ատամանց»։ Էտ շափաղը բոլա վէր քցին մէր կւկաղին չհարներին եա շնըռքներին երա, վէր շրու մին տարին մէր չհարնէն տրտակուին, ծոխու հասըաթ մնանք, չիւն լօխշու կեօզութիւն, ալլամղլամոթուն պեղմա պէց ինի, եա գուսախանըմ նստին եա սիբիրական տէռնան։

Բոլ ա վէր էտ շփաղան մին պիծի շողք քցին մէր հաքեխուչ եա մարմնաւոր գէրեքին երա, վէր էն սհաթին ընդրանց կոլ տւած ըշըհամփիւրներին, ծըռքը փուլերին տեղը մահըմ ինի։

Բոլ ա վէր մին պիծի շողք քցին մէր ժմերին կնճռպետներին, դումի չլէններին, եթիմների ապէկունններին պրոմխոլոց ուպրաւեաշշոց, եա փըքաշիգներին երա, վէր ծեռաց ընդրանց մթնըժուաւ եա քշըրխսաւ ծկըթած փողերին ճոնդը պեց ինի։

Մալխաս էլ կոլ տւած վէքսիլնէ, վըրըփարտակ ըրած կտակնէ, տակաւն ըրած մեծ ու պիծի կսմարնէ չի մնալ, վէր իւրանց վէտուքը լիւս աշխարք չի կեան՝ իրես իրես չինին։

Էն վախտը մին պէն պտըհելուց մարթ ասէլ չի «վայ հախին, վայ նհախին, եա հինչ պէն օնիմ կարմունջըմը, վէր պտասվիմ եափընջըմը» իրեսը շոռ տայ անց կենա. շափաղը ինքը հախը նհախան կճոկի, կմնա վէր նհախին եախան փռնին, հարկս հարկաւերաց անին, պատիւըս արժանաւերաց։

Էտ հեալա կիրլին մին իրեսը։

Էն մին իրեսն էլ էս ա, վէր էտ անըմը կտրուածին շափաղը վէր տարի մննի Կաւկազը ամէն հինչ տկըտիեր պեդմա տեռնա, շատ մարթու տոն քանդլի, շատ մարթու ռուղի կտրցնի։ Աւի խէ՞։

Ընդըրա մհար վէր—էլ պարի քչեր մ՚յ ադլդ-բղլղ հեաքիմնէ, վէր խինդի սոլ եա լուծողական տալի մհար իրեքանուցի, հէնգանուցի երայ քթըպուռշ իք անըմ, էլ վէչ տեսանէք գՏկլիպլտոս, չիւն էտ շափաղը համ նշաղին ցաւը նշանց կտայ, համ իւրան դեարմանը։

Էլ պարի քչեր մարթու վէրսկան ատվակատնէ, վէր քչեր ցիրեկ անդուծնէտ ծէնի ար, թա հշտեղ մին կլեաուզնի կործ կա, եօր օնիք՝ մէշլին լըլաք, Մհէ՞ պետմա տանը նստիք ճեանջ փանիք, նա սանավանին էս հինչ ստատիի ընեւլու տեղ՝ վանքերըմը մեղէթի ասիք, չիւն կեօղերը, կլեաուզնիկնէն իւրանք իւրանց ըն վանըվիլու։

Պարի քչեր չտպար դատաւերնէ, սիլեատչիք, պրիկուլ՛ուլ, կրօժնու չլէն, պրիստաւ, նաչալնիգ, չիւն Ռեօնդկէնին շափաղին եօղուրաւը ծէզ էլ պէն չի մնում ընելի, մնըմ ա վէր դինջ օտիք, դինջ խմիք, քոռըա եռ էլ ճինջի ածիք, կերածնէտ մարսիք։

Ծէզ էլ պարի քչեր, մ՚յ եասաղուլնէ, տարչինէք, իւզբաշիք, քեօխվէք, շափարնէ, վէր մէր կւկազըմ կեօղութինններին, մարթասպանութիններին կծէգը թուլուլ իննելուց՝ առաչ ծէր չէմքաւն ա անց կէնըմ...

Ա՜յ էրգեան ումրըաւ կէնաս Ռէօնդկէն, վէր իտի մաշին ըս քթալ, իտի զուրաւեր շափաղ ա տամ, թա վէր



կարիս մին հանց շափաղ էլ քթնիս, վէր մարթու սրտին քցեխիս, սրտինն էլ գլխուա, մտքինն էլ, էն վախտը աֆարիմ կասիմ, իմ իլած չիլած «Զուռնա-Տմբլան» էլ փէշքէշ կանիմ։

---

## ԶՈՒՌՆԱ-ՏՄԲԼԻՆ ԹԼՂՐԱՄՆԷՆ

*Լեմալուստան*, Ռեօնդկէնին։ Քէզ նհետ շատ պէն օնիմ, ամմա անըմըտ մին անըմ չի, փոխի։ Մըզանըմ հու վէր անըմը փոխըմ չի կըըմէստի անըմնէ տինըմ, մարթու հաշվըմ չի։

Մինէլ քըզանա շատ ու շատ խնթըըմ ըմ ջաֆա քաշի շափաղտ քցի ստամբուլա ծովը, ընդեղ մին ճոլի օնինք բալթմիշ իլած, տէս տե՞ղն ա, իրես ա թա խոր, եա հ՞ինչ հեալի ա, մէջին ջան կա, թա ջանը տալա անձանց մէրոց տէուալ։

Մին էլ տիեր Աստուած, տվեր տու, ինձ մհար քու շափաղըու մաշինան մինը ղարկի, հինչ կլինն ա կտամ, ամմա նիսիան սաւնին կիրի, թա խէ, կարթի մէր ռաշնորթողը։

*Զուռնա-Տմբլի խմբակիր*
**Տմբլաչի Խաչոն։**

# ՋՈՒՌՆԱ-ՏՄԲԼԱ

[1899 թ.]

№ 1.

## ՄԷՐ ԵՐԳՐԻՆ ՀԱՒՔԵՐԸ

Սիրելի կրթեցող, կեարունքը վէր կեամա, Իրան—Թուրանա, Չինմաչինա հցեր ու մին տղերա ջուռա ջուռա հաւքեր ըն կեամ մէր երգիրը եյլաղ, վէր հինչա պխեն տինին, ծիռ ածին, ճտեր անին, մինը երկու տեռած՝ էլհա աշունքին եա տեռնան իւրանց վեաթանը, իւրանց ապրուստին, իւրանց խէր ու շառին կէնան։

Էտ հաւքերան չեչնա եր կալած՝ թըրղաս իծծուն եա հեարիւր տարի առաչ, մէր Կուկալին Քոլանիքը, Մոլթանիքը, Ղարափափախնէն, Քիւրդերը չըռ սոր եյլաղ ըն քինըմ իւրանց ուարաւը, վչխարաւը, ալաչուխաւը, քեչա կարպետաւը, կոտրած քիլըրէնքաւը, ծրտոտ ճուարաննէն ածած հաւ ու ճուաւը եա մօրը քմակին չարսաւում կապած, կլխընէն լընգըլանգու տալիս հեաճիւճ-մեաճիւճներաւը ու սարերին գեօշերին, ծմըկներին պերաններին վէր եկած՝ հշտեղ մին սեարին տեղ եա քարցր ճիւր կա հշտեղ մին ալեան ծաղէգ եա խոտ կայ երան չնթռնած՝



Ածու պարկընէն թժըղցնելան եաը՝ ընգեղէք բէյզավուլ ուէխ ընգած մարթոց ջուըընէն էլ թժըղցնըմ ըն շատ վախտ էլ ումբըընէն սիըցնըմ, էլհա աշունքին եա տեռնըմ իւրանց տեղերը, մհէգ էլ ընգեղէք եաւաշ եաւաշ իւրանց փչակին հաստատ կէնըմ, չըռ էն մին եյլաղ տիւս կեալը։

Էտ ասըղացա հաւքերան ըրէնակ երկալած՝ էս ա մին քանէ տարի կա, վէր Կուկալին նեանամ-սեանամ խանըմնէն, նեարմա-նեազլիւք հարս ու ախճըկէքըն էլ ըն եյլաղ քինըմ. ամմա ընդըրանց եյլաղ քինալը վէչ երգինքին հաւքերին նման ա ինըմ, վէչ էլ քոլանոցն ու մոլթանոցը. ընդըրանք վէչ հաւ ըն տանըմ, վէչ ճու, վէչ քեչա, վէչ ըլաչուխ. ըտըրանց պէռնը էրկու իրեք սանդուղ տրաքըմ ալեան ալեան չոլեր ա ինըմ Թիֆլիզ, Մոսկով եա Պարիժ կարէլ տուած, 10—12 չլարէք ա ինըմ կարօրկացըմ պնդըցրած, մին էլ մինքանէ հցեր մանէթ ջուըխաշլըխ։

Եյլղատեղն էլ վէչ Ղարաբաղու սարերն ըն, վէչ Տամախու, վէչ Դիլիջանու, վէչ Ալաղեազն ու Դարաչիչաքը։ Ըտրանց քուչատեղը Պետիգորսկի ա, Ժելեզնավէսկի, Կիսլավէսկի, Էսէնտուք, Բորժամ, Աբասթումանն մին էլ ղագրանիցու հանց տեղեր, վէր վէչ իւրանց պապերին անգուճուն ա ընգալ ընդըրանց անըմնէն, վէչ էլ տատերին։

Թա մէր երգրին էտ հաւքերը, Ղարաբաղի նեանամ սեանամ խանըմնէն, Բաքուայ նեարմա նեազլիւք խաթուննէն, Թիֆլիզու, Նախճուանու հազրաբութա սնդոխչա գիւլըոխչա հարսներն ու ըխճըկերքը հունց ըն իւրանց օ-

ըը նյլաղըմ անց կըցնըմ, ըտրա մհար թող իւրանք խօսին, մունք անգուճ տինինք։

I

Հրէս էրկու գըլթարուած նախշուն հարսներ Պիտիգորսկի բուլվարըմը. Ղարաբաղցի ըն, պարտնիխին մկրատին տական նոր տիւս եկած փուփուան դերեան կէցըներին, մէչքնէն քիֆըմը խնխտած, վէր դերխան դաշանդ իրեա, բանդերու լինտէրու, կրօժվոցու ճաճոմփած՝ կլխներին էլ էրգեան պուպուղ շլապա, ծաղկըներու, թեփուռներու գըլթարած. տեն հանց ման ըն կեամ, լհա ասիս իւրանց հօրը վէսկի պիհրը ըտեղ ինի թաղուած ու Պիտիգորսկը առալ ըն մէչին նստալ. հուհըմ ըն, բէհայա, բէհայա խըլըշկոտում ու մարթահեսաբի չըն տամ էն հազարուեր հաշաթքը, վէր աչքընէն տուղ տուած իւրանց ըն եշըմ, իւրանց երայ քափըմ։ Ամմա լեաւ լսի տես էտ ջանըներին երա քըքըլածնէն հինչ ըն կլխըներան տիւս տամ։

—Ախճի Աննա Պետրովիչնա, սօր Պրօֆեսօրը ցուխտ մհար հի՞նչ ասալ։

«Ախճի հի՞նչ ա ըսելու, հալալ կէս սհաթ շռտու շռտու ըրաւ, սրտաս, մէչքաս անգուճ տիրաւ, հըցը փորձ ըրաւ, ասից վասպալէննի եախշնիցի ա մին էլ նեբվէննի ազար, հունց վէր էն օրուայ կարճլիգ պրօֆեսօրն ար ասալ։

Ախճի ցուըս քաղին ըտրանք, հինչու ինըմ ա ասըմ ըն նեբվէննի ազար ա եա վասպալէնի եախշնիցի ա. Էրէգ էլ իմ էն հասալիգ գոխտուրին ասըմ ըմ վէնըս



ցուըմ ա, ըշտահըս կապ ա, ասմա նեբվէննի ազար ա, էրկու ամէս պետմա ճար խմիս, ամըն օր էլ վաննա նստիս։ Հրէն մէր Մարքարիդին մհար էլ ըն ասալ նեբվէննի ազար ա, ամմա ինքը կլխան ա հալայ տամ։

Ախճի փողի թալակ ա էլի, ծնդըցնըմ ըն վէր հինչա վիզլիտի փող շատ տիւս պիրին, գիտըմ ըն, վէր ըստեղ եկողը տէրտակ ջուբու չի եկալ, իւրանք էլ վընըընէն պէնդ ըն տէմ տամ։

—Էհ՞ կլինէն քարը, թեաք լհա մհանա ինի, վէր մէր մարթէքը ամէն տարի մէզ դաշչա պիրին, փողի մհար հմ ա դեարդ անըմ։

«Ախճի Աննա Պետրովիչնա, իսկի տանան կիր էլ ըս ըստանը՞մ։

Հա՛ էրէգ մեամանն կիրալ ար թա արխային կաց, ըրախէքը լեաւ ըն, ամմա Սէրօժըս ա ծաղկան ընգալ։

«Վա՜յ իմ իրեսըս ընդրա շռածողին վէտանը տալը, պարի ինի, պարի ինի։

—Էհ՞ պարի չիլած հինչ պեդմա ինի, մեաման թեաք քշտին ինի, ընդրանեւ արխային ըմ. ախճի էս հմւա էս մուալը քցած կնէգը, հինչ լեաւ դերիս ա կէհմւա ցինը, հունց էլ լեաւ նստած ա երան, տէմնաս հմւա կալալ, 100 մանէթ նստած կինի։

«Ախճի խէ ճնանչը՞մ չըս. Փափուկ պռաւին քւար հարսն ա, Սաղաթէլանց պըըկաշչիկին կնէգը։

—Ը՞մ քիւլիմ ըտրա կլոխն էլ, ես էլ ասիմ հիւր կնէգ ա։

«Դէ էտա ըտըհէնց ըն անըմ, վէր քեասիբն ու հարուստը ճոկվըմ չի է՞։

—Հա, էլ հօրըս ասըմ. ախճի էս հնւա բեղը կծուտնելաւ ման ա կեամ։

«Էտ էն սարին էն ղոլացին ա էլլի, Համամշունց բուլախտէրը, ասըմ ըն կարտըմ լեաւ փող ա չինալ, իւրան խաղայիններին ախճիգն էլ օղըմ ա օղի։

—Հըմ, ընգոր ա ամըն օր բուկէտր ծեռքին Համամշունց ըխճկան հեաքի տեռած՝ ըստեղան Եսէնտուք, Եսէնտուքան Կիսլավոսկ, Կիսլավոսկան Ժելեզնավոսկ չափըմ է։

«Աննա Պետրովիչ, հրէն Բարխրախը կեամ ա. տեսնըմ ըս սոր էլ հինչ չիկըմն ա, հունց ջուա ա կեցուալ ու քանէ կաւալէրնէ օնի հետան քյած. քէֆ քէֆ նա ա քաշըմ է, մէր մեար մեռնի, մունք էլ ընք ասըմ գաշա ընք եկալ, նա էլ։ Ասըմ ըն քշեր ցիրեկ տան իրես չի տեսնըմ, մին սիրու ջահիլ ջհուլու նհետ ամըն օր եա Կիսլաւօդու պարկըմն ա ինըմ, եա Մաշուկ, եա Վադապատ։

—Եարար բա ըտրա մարթը հինչ ասըմ։

«Վէյլիմ ըտրա մարթին կլոխը. փալաս գատ ա, հինչ պետմա ասի. հինչ ա եկալ ա, հեալա իւրան կնգան նհետ մին հետ ցվետնիկը չի տիւս եկալ. ասըմ ըն հմանչըմ ա, համ էլ սրտըմը ուրխանըմ, վէր կնէգը համ նախշուն ա, համ գիֆունանց անա մօղնի ա կէնիլըմ, համ էլ շատ կաւալէրնէ օնի։

—Տրա մարթին սփալթը վէր քինի, էրէգ մէր գեադան ասմա էրկու եալլուխ սողանաւ, կարտոփլաւ, մսաւ, պամիդորաւ, հացաւ ծւաւ տրաքըմ՝ ծեռքին փռնած՝ քըտնընքըմ կորած՝ եօխուշն իեր գարբ ար անըմ տօն. կնգան



խռի բասլամիշ անըմ, ինքը պտըծական թմաշա անըմ։

Ախճի մին եշի տես հունց էլ դերեան պցըցրալ ա տակի աբրուշումի կրուժիւոցաւ կարած եուբկան պէց ըրմլ է... եուբկան հուատաս դերխան թեանդ աժի։

«Դէ էտ եուբկին թմահան ա, վէր էտքան ջահիլ ջհուլ հետան ըն տեռալ, վէր էտ չինար, հեալբաթ իւրան քէթն էլ քաշ կինար, հունց վէր իւրան քվորցը, վէր օրին հացին մուհտաջ՝ վէչ գաշի իրես ըն տեսնըմ, վէչ կաւալէրի...

—Աննա Պետրովիչնա, Էլէնա Նիկիտիչնա, պարօվ, պարօվ։

«Սօրի ըմ եկալ, բանի օր ա Ժելեզնավոսկ ըմ։

—Հինչ կա, հինչ չկայ, հինչ թեազա խաբարնէ օնիս։

«Խաբար չըմտ, հիւր մհար ասիմ, մհէգ մօղըմ անըրմաւերանց հարսն ա, վէր եխսապետին եռա նստած՝ գիմնազիստնէն հետան՝ բաղերը, քուչէքը չափըմ ա։

—Վա՜յ վարսըս կորիմ, բա մարթը հինչ ասըմ։

«Հինչ ասելու, վէր խօսըմ ա, հանց լանթ անըմ ճկատան կէնըմ, վէր սեասը փորն ա ընգնըմ։

—Աչքըն էլ ա հանըմ. մաղաղիններըմը հշտեղ լեաւ ապրանք ար ինըմ Խէյֆէցին մկրատին ռէխն ար տամ, մհէգ էլ ասըմ ըն Ղարաբաղին քիւրսին մտան ընգած՝ պարխժան ա մօղնի մօղնի տան սարք պիրէլ տամ, էն էլ տարին մին փոխըմ։

«Ախճի, խէչի պիրէլ տալ է, փանտալնէն թխըմ, մաղաղինը ապրանքաւ տրաքըմ, փողը բանկումը տեար-

սած, տու մէզ ասի, վէր տարին մի՛ն դիւժի՛ն գերխա էլ չէ՛նք կարըմ դիւզըցնի՛նք մէզ մհար։ Երկու հզեր մանէթ ըմ պէրալ հզեր կուաժմունքաւ, էն էլ մարթըս ամէն օր կիրըմ ա թա հթըեաթ ըրա, էլ փող չըմ ղարկելու։

Ախճի իմ մարթս էլհա լեաւ ա, հի՛նչքան օղիմ պորտմանան եօր կօնիմ, խակի ինքն էլ համբարքը գիդալ չի։

«Ախճի Լիզա, տու լեաւ կըգիտաս, գո՛րթա վէր Ֆալանդուզանց տղան մհէզ մինին տեղ էրկու կնէգ ա պահըմ ու աֆաշկարա կխալավոսկում կռնըփռնօկ ման կեամ։

—Բա հի՛նչ ա վէր գործ չի, էրէգ ըհա իմ աչքաւը տեսի։ Ծըմընակիս մարթոց խսեաթը Աստուծ կտրի, հինչու ասիս անըմ ըն։ Հըէն էն Բաքուա եկած թուրքունը, ընդրանց հի՛նչն ա, հո՛ւ կասի վէր ազար օնին, իւրանց կնանէքըը, խօխէքը թողած՝ ըստեղ իւրանց քէֆը արամիշ ըն անըմ։

Եանի կնանէքը պակաս ըն արամիշ անը՞մ, թա՛ղ մարթէքն էլ անին էլի, աւայգ, աւայգ բաղդա ղեաղար...

II

Սիրեկլի կըթեցող, մի՛ն սհաթ թողինք մէր նեարմանեազլեւք խանըմնէքին Պիտիղօրսկու ցվետնիկըմը իւրանց էտ երեելի մասլահաթնէն անին, նարդանի, էսէնտուկի № 4, № 17 ճրերան խմին, լրեանէս չու տանք էն ղոլը պատառ էլ էս տըըմարթոց խօսքին անգուճ տինինք։

—Պարօվ Իլիա Պետրովի՛չ, հո՛ւնց ըս, քէֆ, ահվա՛լ, հրցնըմ ա մի՛ն պերվի գիլդի կուպէց վտօրօյ գիլդի կուպեցի։



«Այ հազար պարի, Կասպար Դանէլի՛չ. քէֆս խարաբ ա, հեաքիմըս սօր էլ օրիշ քամի ա փչըմ։

—Խաղըրի՞ն գիլաւար։

«Երկուսան էլ կայ. ասմա ցաւըտ շատ խաթալու ա, պէտմա Մուսկով կեաս օպերացի անիմ, էս կլեան էլ 200 մանէթ զաղաթկա եր կալաւ, մի՛ն ըէցէպ կիրից ինձ տւաւ։ Ասմա էսէնտուկի № 4 ճրան առաւօտը խմի, իւրիկվնն էլ № 17-ան. կնդաս էլ, վէր խակի վէչ մին տեղը ցաւըմ չի, ըհա ինդի մաշխուլաթի մհար եր ըմ կալալ դաչա պերալ, տեսաւ, ասից ներվէննի ազար օնի, լեաւ կինի, վէր մի՛ն իրեք ամէս իւրան բալնիցըմը մնա։ Մհէզ վալլահ մնացալըմ մաթալ, գիդըմ չըմ նաչալը ես ըմ, թա իմ կնէգը։

—Լեաւ, խէ էն հայ դօխտուրին կըշտն էլ չըս քինըմ, ասըմ ըն շատ լեաւ մոէգ ա տամ։

«Բա իլալ չը՞մ, նա էլ օրիշ քամի ար փչըմ. իրեք պրօֆեօրի կըշտ ըմ քեցալ, հէնգ դօխտուրի, էրկու հետ կոնցուլտացի սարքէլ տւալ, ամէն մինը մին ջուռայ պէն ասըմ. մարթ գիդըմ չի վէրին հւատա, վէրին վէչ։

—Թա ինձ հրցնիս, խակի վէչ մինն էլ ա մին զատացու չըն, ախպէր փողի թալակ ա ես իմ աստուած։

«Բա փողի թալակ չի հի՛նչ զեահըլըմար ա, վէր էս ճրերըմը նչազա իւիլ պրօֆէսօր, դօխտր, ֆէրշիլ, մասաժիշտկա կա։ Էլ տօն չի մնացալ, վէր տուանը ճխտին ըտրանց վիզիտկան կըրած չինի էն էլ եռան հազար ու մի՛ն թարիֆլամա կիրած, թա ֆլանքեասին մունթն ա, (կասի լեաւ վարժապետին չկօլան խակի փիս մունթեր չըն

տիւս կեամ) եա կուրսը զագրանիցա ա վրչըցրալ (ըհա ասիս Երուսաղէմ չոն չի կայ). եա չէ շատ մէծ դոխտուր ա, իւրան ֆէշակը շատ թեամիւզ գիդըմ ա։ Մախլաս պլոկըմ ըն էլի։

—Մէր Բաքուա դոխտուրնէն եանի պակաս ը՞ն. ընդեղ պլոկըմ ին հերիք չար, ըստեղ էլ կարըմ չընք թա ընդրանցա եախա թափինք։ Երէգ մինը քիւչին մէչին փռնալա հեարբայ ա կեամ՝ թա եա ծէր տան դոխտուրն ըմ, խէ՞ էշու նման ինձ թօղած՝ օրիշ դոխտուրի կոշտըս քինըմ։

«Ասըմ ըմ դոխտուր ջան, նըղանալ մէ, խէ հինչ կինի, վէր մին օրիշի էլ մէր ցաւը նշանց տանք։—Չէ, ասմա, էտ պատիւ չի պիրըմ ծէզ, ծէր ցաւը եա լեաւ ըմ գիդըմ, ըստեղի դոխտուրնէն հինչ դոխտուրնէ ըն, լօխ բայթալնէ ըն. թա վէր օրիշի կոշտ էլ քինաս, էլհա ինձանաւ պեդմա էտ պէնը ինի։ Տեսի վէր ճար չի կայ, հանեցի մին հարիւրանուց տւի, ասեցի դոխտուր, առ էս քու վիզիտի փողերը, թո՛ղ օրիշի կոշտ քինամ։ Ըտրանաւ անջախ եախաս թափեցի։ Ախպէր, մինը ասող ինի, թա վէր իմ ցաւը հսկանըմ իր, էրկու տարի ա կեամիր-քինըմ, կողըցնիր էլի՞, մհէգ ըստեղ խէ չըս թօղըմ մէր ցաւին մին ճար անինք։

Երէգ էլ համին էտ դոխտուրը ասըմ ըն մին օրիշին ա հարբա եկալ, եախան փռնալ, նա էլ վխեցալ ա Բաքու կլխին մին օլին չի պիրի, հանալ ա 25 մանէթ տւալ։

—Մադալուն էն ա վէր էտ դոխտուրնէն ըհա վէր ջուբըներին փողին պլադուսը թմամըմ ա, թօղըմ ըն



փախչըմ. իւրանց նաչալնէն օրիշ դոխտուրի թափչուր անըմ, ըհա ասիս իւրանց հալալ ալրանքը ինին, վէր մհէգ էլ ընդրանք ծծին։

Դոխտուր կա, վէր օրուայ իրեք սհաթը Կիսլավոսկ ա. իրեք սհաթը Եսէնտուք, իրեք սհաթը Ժելեզնավոսկ, իրեք սհաթն էլ Պիտիգորսկ ու թեփռըմ ըն կէռէք կորած տեղան։

«Տու դոխտուրներին ըս ասըմ, բա ֆէրշիլնէն, մասաժիստնէն վէչի՞նչ. ինձ մօտ մին ամէս ա մին մասաժիստ ա կեամ կռնըս մասած անըմ, դեօնըմը մին մանէթ ինք օնըմ։ Առաչ վէր ասըմ ին մասաժ, եա էլ ասըմ ի տեսնաս հինչ պօղաւեր զատ ա, տակաւ տիւս եկաւ, վէր մաններին պտկաւը կռնըս եր ա թակըմ, հունց վէր մուզիկանթչէքը պօրտուպիանը եր ըն թակըմ ու քթին տակին մռմռըմ, քինըմ. թա եա ըտրանա մին թափաւուզ տեսած ինիմ, կլօխըս մէռնի. բարը կլոխ էլհա վէր ճմըռի, դամարնէն պէնուա, էլհա մին զատ ա, բա ախտուս չըն մէր Բաքուայ համամներին քիսաչէքը, վալլահի ընդրանց ճըմըռելը հազար փայ ըտրանց մասաժան լեաւ ա։

—Հա՛, Սերգէյ Միխայէլիչ..էտ կէ՛նա, բա հիբը՞ս մին քեաբաբու դօնաղ ընելու։

«Հիբ վէր օզիս աչքիս եղա։

—Ախպեր չէ, եկէք փոմ վէր կեանք, մէր ծեռքաւը մին լեաւ պրիպաս առնինք, քինանք Մաշուկ։

«Էտ էլ ըս լեաւ ասըմ. քինա՛նք, քինա՛նք, ըստեղան ընգեղան կամպանիան շտանըմ ա ու մին սհաթան եառ լօխ էլ իւրանց աղարը մուռացած՝ տկաւ տկճօրաւ, գիւր-

գնր ու գօշաւ, հաւաւ, ծւաւ եղաւ, մսաւ փայտմններըմ նստած՝ յղէ ըն ընգնըմ Մաչուկ, խըրանց հետան էլ պատկերահան Ցիգոսկը քաշ տամ, վէր ընդեղ քէֆընէրին էն գիլ վախտը խըրանց գամերին նհետ 15 ջուռա չիբըլնէն տիւս պերի։

Էտ կամպանին թօղինք Մաչուկի ճանապարհին, պատառ էլ էս ջահիլ ջհուլներին եա պառաւներին անգուճ տինինք։

III

«Պետրուս, ես մէռնիմ քեզ քինանք Կիսլավոդսկ, ասըմ ըն Սիւնէնօրերգը էս քշեր օպեր ա ըսելու։

—Այիշի պէն չոնիս, թա ցիրկ կըքինաս, կըկեամ, օպերըմ հինչ խաղալթ պետմա տեսնանք։

«Ախպէր չէ, ես կամ վէչ, ես խօսկ ըմ տւալ մինին, վէր էս քշեր Կիսլավոդսկու պարկըմը փարէլ օտինք։

—Ըլխին եշի, փարէլ, հւատաս ռուսէթու սէլօդկան ռըխտի լայեղ չի։

«Անց-կաց լեաւ ա. ախպէր ես մին զատ ասիմ, եկէք քինանք կարտի տանք, հեալա հացի վախտ չի, խուրուգինը պէնը պէն նշանց կտայ։

—Ա՜յ սաբի խօսք։ Կամպանիան կարտին անըմը տալուց սրտախաղ իլած, քինըմ ա նստըմ կանանչ ստոլին չորս դոլը ու չրւ էն մին ըռուօտ վինտ, վէրտուշկա, բակառա տըըքցնըմ ու մին քանէնին կլօխն օռած, մին քանէնին ջուբը թըըմոշկած՝ ցրև կեամ, վէր խուրուգինը էլհա հւաքուին վէրտուշկա եա բակառա տըըքց-



նին։ Էտ կամպանիին ազարը կարտըն ա, ամմա հեաքիմնէն մօտ չըն թակըմ, վէր խըրանք էլ չընգնին էտ ըզարան։

1.

Հրէս մին իծծուն տրեկան ջահիլ թաշախուստին կեցուած, եղօնից կորած, մին քանէ գամերի ու ըխճըկորանց նհետ մարաքայ ա սարքալ. ասըմ ըն ամէն տարի էտ ջահիլ-պառաւը ճրերն ա կեամ, վէր հինչ ա մին հարուստ տեղա խըփըվէրի եա ազափ ախճիզ փռնըցնի, ամմա պընեըը կլօխ չի կեամ, չիւն թաշախուստին գեօրա, խեըըին դըրագուսը տեղը չըն քթնըմ։

2.

Հրէն մին ջահիլ, լափ փռանգու սայաղ կեցուած, բեղերին պոկան փռնած՝ ծիք ծիք անըմ, կլոըեր սղաըըմ, տրոստն էլ ծեռքըմը խըլըցնելու բոլթա ա տամ. սպասըմ ա, վէր դաման կեա եօր օնի ման կեալ տանի, ամմա դաման նազը քեօզ անըմ, չիւն ընդրանիս լեաւ մին օրւշ կաւալէր ա քթալ ու օզըմ չի պէց թօղի.

3.

Հրէն մին ջահիլ թարիֆ անըմ, թա հունց ա հեաքիմը խըրան տոկազ ըըալ, վէր թըթու, կծու, մսեղէն, ծխկնեղէն չուտի, ամմա ինքը անգուճ չի տինըմ, ռէխն ա տամ, ըտրա մհար էլ ազարը թիւնդվալա, ղազրանիցա պետմա քինա։

4.

Հրէն մին ջանավար մարթ, չանին տական օխտը գըվանքա մէջ կախ, տօտա տօտա ման ա կեամ, քըտ-

նոնքը չեարքեագուն թիքաւը սրփըմ. ասըմ ըն եկալ ա վէր ըղարի. օրը չորս եմիչ ստըմ, էրկու հաւ, օթ գիրվանքա հաց, վէց ճոխտ խիար, էրկու ղարփուզ, ծիւկնը, եղ, իրեք աման խփած կերակուրն էլ իւրան կարքաւը ու կէնգատվըմ ա, թա հեաքիմնէն իւրան չորու ըն կապալ ու ինը փուլթըլէս ջամդաքան մին չափթըմը էրկու գիրվանքա պկասալ ա։

Սաղ ճրերըմը մինակ էտ մարթն ա, վէր համ իւրան փորին հոքսն ա քաշըմ, համ ջուրին։ Ջիւն օր չինիլ, վէր էն մհալնէն չընգնի, հշտեղ խժընակին մեղրը, ծէթ, եա օրիշ պէն ինի, առնի Բաքու ղարկի, վէր իւրան ծախսը մէչան տիւս կեայ, մային երա էլ մին գատ իւլանայ։

Էտ մարթին մհար ասըմ ըն չատ պարի հոքի ա, եթիմների, աղքատների հանց լեաւ եշըմ ա, վէր խրէգ ա մնըմ ընդրանց մսան էլ կտրի իւրան մսին երա տինի, վէր չպըրակի։

Թա վէր խտի մին մին մեր հաւքերին արարքնէն շարելու ինինք, չատ հեռու կըքինանք, լեաւն էնա կարճ կտրինք, ասինք աստուծ յօխչու կործքաւ իւրանց պարի տա, սուս անինք, թա չէ տական չատ պէնիր տիւս կըկեայ։

IV.

Մէր Կվկազին խալխան ուայի, էտ ճրերը Ռուսէթա խալխն էլ ա գաչա եկալ, ամմա ըտրանք վէչ էն չիկն օնին, վէչ էն թարախկան, վէչ էն սիփիլիքը, վէչ էն հոհաոց-քաքաոցը։ Ղորթ ա ըտրանց մէչին էլ ծամ կտրածնէ կան, ամմա ըտրանք մերունց կշտին փուստ։



Տէս էն պառաւ մարթը վէննը թափուղ տալաւ քիքինըմ ա վաննա նստի. տէս էն ջահիլ ստուգէնտը կալեասկըմ նստած, քուրն էլ կալեասկին րուչկան փռնած՝ քաղըմը ման ածըմ. տէս էն ջահիլ տղան հունց ա մօրը կռնատակը մտած՝ պատմութիւննէ անելաւ՝ հեաքիմին տանըմ. տէս էն ջահիլ հարսը հունց ա մարթին վէնները եօրղանըմ պտատալ, կողքին նստած՝ կիր ա կարթըմ, վէր հինչ ա մարթին օշը ցաւին երա չինի. տէս էն տղին էրկու կւազան կռնըտկերին՝ հունց ա զօռաւ քաշ կեամ, մարն էլ ապուն կթեալաւ՝ հետան քինըմ։ Տէս էն կնանէքը հունց ըն ճարին բութուլնէն ու ստաքաննէն ծեռքըներին՝ մին մինու ցաւ հրցնըմ, մին մինու սէրտ տալիս։ Տես էն նեմկան հունց ա համ խուխոցը խըղցնըմ, համ գիւլբան ծեռքին պէս անըմ։

Մախլաս գիփունանք էլ կլնէն քաշ իւրանց ցաւին երա ըն մտածըմ, եա չէ եկալ ըն հաւան փոխին, էլհա իւրանց տօն քինան։ Էտ ճրերը եկողնէն լոխ էլ բախտաւեր մարթիք ըն, չիւն եա իւրանց իլածաւն ըն եկալ, եա պարտքաւ. ամմա վայը ընդրան, վէր վէչ իլած օնի, վէչ էլ պարտքովլի փող ըն տամ, վէր կեայ էտ ճրերը եա չէ լհա մին ճար ինի իւրան տանը տռանը հեաքիմ ընգնի, ջան սաղութիւն ստանայ։

---

Աշխարքիս պէնըրը թըրըպարան ա, մին տեղ հազարնէ ըն խարջըմ քէֆ արամիշ անըմ, սաղ ջանաւ դաչա քինըմ, ազար քթած տօն կեամ. մին օրիշ տեղ կա-

*պէկ չըն քթնըմ գոխտուրի եա ճարի տան, ջահիլ ջւան կորչըմ ըն, եթիմնէն չոլը քցըմ։*

*Մին տեղ փարթամութիւնը հանց քուռըցրալ ա մարթոց աչքերը, վէր տասը չեչմակաւ էլ աղբադ ըղբուղու տեսնըմ չըն, եա օղըմ չըն վէր տեսնան, մին օրիշ տեղ հանց տասը վիրստան հեռի ընգած եղըպատաուխն նրա զարբ ըն անըմ, վէր ասխ աչքնէն ըրծեւ աչքեր ինի։ Մին տեղ տասը ջուռայ գէյիմ ըն փոխըմ, օրը մինը շպրտըմ, տէն քցըմ, մին օրիշ տեղ՝ մէտակ հալաւ էլ չըն քթնըմ, վէր պէց լաշընէն ծածկին։*

*Մին տեղ մարթէք ամէն հինչին բոլլուղութինան հանց քիւքանըմ ըն եղըկալըմ, կլխնէն, փորընէն հատըցնըմ, վէր հեաքիմ ըն ընգնըմ լղարին, պլրակին, մին օրիշ տեղ՝ ամին հինչան զուրկ հալըմ ըն, մաշվըմ, փորընէն մէչկընեռան կէնըմ, վէննի երա չուրանըմ։*

*Թա էտ տանջւող, անտէր անտիրական մարթոց հոքսը հո՞ւ պետմա քաշի, հո՞ւ պետմա սովածին հաց տա, ծարաւին ճիւր, տկլորին շեօր, չոլըմ մնացածին օթեան, էտ էլ թող մէր հազարնէ խարջող, գաչաներըմ քէֆ արամիշ անող, պորտընէն եղըկալած հայերն ասին։*

## ՋՈՒԽՈՆԱ-ՏՄԲԼԻՆ ԽԱԲԱՐՆԷՆ

### 1

*Բաֆու: Մանիշակ բաչուն. ըստրի վէր գաշա քինաս, 20 ջուռա գերիա տար, թա չէ տնազ կտան, ներվէննի ապարըտ դահի բէթար կթխնդուի։*



### 2.

*Հուռում ախոր: Հարսիտ կապը քաշի. վէր դաշա դարկիս նհետը էրկու դարաւուլչի տիր, վէր քշեր ցիրեկ դարաւուլ քաշին, թա չէ շատ ա արթմիշ ըրալ, տական պէն տիւս կըկեայ։*

### 3.

*Այամաթիկ թոռանը. ա՛յ փոչ ինիս տու հա՛ ա, դաչերըմը հանց պէն փռնի, վէր բոյիտ ու բուսաթիտ սազ կեա. տափան հեալա էրկու արշին չպցրացած (ա՛յ վէչ պցրանաս տու հա՛) վէր հազարնէ ըս խարջըմ, բա իրէք արշին պցրընալուց՝ հի՞նչքան պեդմա խարջիս։*

*Խմբակիր-հրըպրակիչ*

**Տմբլաչի Խաչան։**

# ՁՈՒՌՆԱ-ՏՄԲԼԱ

(1899 թ.)

№ 2.

## ԲԱՔՈՒԱ ԿՐԻԶԻՍՏԸ

Իմ ագլիզ կրթեցող, էս ա մին տարէ ա, վէր զուռնա-տմբլաս գրաղ տիրած՝ քչըքուչի անըմ, վէր ինձ մհար մին հանց փեշակ ճարիմ, վէր էքսան օրը ես էլ մըթամէշ ընգնիմ, տոն տեղ տինիմ, էլ տռնը տռնը չընգնիմ։ Շատ քըըքար ընգնելան ետը, մին օր հշտեղան ար գիդըմ չըմ խելքիս մին քամի փչից՝ թա խէյըմ շատ մէտք անըմ, եկ քինամ Բաքու, ընկեղ մէր Շուշվա Ղլան եա զըըքաղին չնըտքներան հղեր խուրդափարա ինձ նման գեւզգեւնը ծռված մարթէք ըն քեցալ, մին քանէ տռնըմը հանց իւրանց չինալ, վէր սօր համ զաւօղներու տեար ըն, համ նոթու բուրուլներու, համ 3—4 ատաժանցի տներէ, պըխտինու ու հղեր ջուռա կուրծերի, մին խօսքաւ, համ փողի փողրաթն ըն ծեռք քցալ, համ խէլքի, թոր վէր օղըմ ըն ծին չափ ըն թողըմ, աշխարքը մին տմակ տեռած՝ իւրանք մին տենակ, վուր հա վուր կտըըմ ըն, էլ լէմս, պալակ, ինգլիզ զալաթ չըն անըմ մօտ թակին, մէյդանը մնացալ ա մէր զըըքաղան բոչած հըյերին։



Օխտը օր օխտը քշեր մէտք ընելան, եր տիր վէր տիր ընելան ետը, խլած չխլած զուռնա-տմբլաս խուրջինըմըս տնըըցըրի, Ասծու անըմը տւի, յղէ ընգի պիդի Բաքու։

Ես հանց ի գիդըմ, վէր Բաքվըմ իմ զադիմի պարեկամնէն ինձ տենալուց՝ մեղըու նման լիզ ըն տալու, սալուհձու նման նեստա կէնան, վէր ես իւրանց կուրծերըմը պըաւլիակուչչի եա մէծ փըըքաչիգ տեռնամ, եա չէ աշխադանքը կըըվէ իւրանց նհետ առուտուր անիմ։

Ամմա տու եկ Ասծու պէնին եշի, վէր մին չափթըմ հարիւր մարթի կոշտ քեցի, լօխ էլ ինձ տենալուց՝ քթըընէն կախ տւին, մին մին մհընաւ կլխա ռադ ըրին, չատերն էլ օղընէն հանց եր ին քաշըմ, երաս հանց քթըպռոշ անըմ, վէր ասիս խոկի իւրանց օըըմը վէչ ինձ տեսալ ըն, վէչ ճնանչըմ, վէչ նհետըս նստալ կէրալ, խմալ, չուլամիշ իլալ. մին խօսքաւ տեսի վէր Բաքուն մինակ էտ պարեկամնէրիս ջուրը, գէյիմը, նստէլ եըկէնալը չի փոխալ, ընդրանց սէրտը, պնոթիւնը, վարք ու պարքն էլ ա թըսըպարան ըրալ. թա չէ էն եօղօնիգու նման Կիւքին, Վանին, Թեաթին եա Պէտին, վէր իմ անըմաւըս իւրթիւմնը կուտին, խէյին պող պող անըմ, գըըըներին թքըմ, ինձ անա փախս տամ։

Մին օր էլ ես ու ես լսեցի, Խաչան եկ փորցի մհէգ էլ մէր Ղլըցէ համփա մարթօց կանտորնէն քինա, լօխ էլ քէզ ճանանչ ըն, լօխ էլ թիւնդ պարեկամ, հեալբաթ լեաւ ա փխսա մին կործ կտան, բա ընդրանք մարթէք չը՞ն, բա ընդրանք բու ցաւը գեարդը գիդըմ չը՞ն, բա

վէր էսքան տարի ա տու ընդրանից եօղուրին ջանըս տւալ, խէ՞ ընդրանք քէզ տափին կժողին։

Մին օր էրեսիս խչը՞նեցի քեցի. ամմա վայ էն քի-նալին, աբուըս լափ վէր եկաւ, մինը կանտօրըմը նս-տած՝ փըրքաչիգին ասալ ար, վէր աւի ինքը կանտարըմը չի, մինը թա տասըը օրան եար են, մհէգ մջալ չօնինք խուսէյի, վէրը թա ես չատ օրախ կինիմ, վէր տու մէր կօրծըմը ինիս, ամմա հնգերուներս պաբուլ չըն, հնգերունցն էլ ավըցրալ ար, վէր ասին իւրան հնգերունքը չըն պաբուլ, խաղի մին մինու անաւ քցին, կլխա ռադ անին։

Տեսի վէր էտ համփէնան փայգա չի կա, մին օր էլ քեցի մէր Պելի Անդրիասին կուշտը. նա էլ պրանին պրա-ղաւը մին կէսատ հըրցըպարով ընեկան եար, ասից Խաչան, նհախս ըս եկալ, Բաքու էս սհաթիս կրիզիս ա, մէծ կրի-զիս. ինձանա քեզ ամանաթ եա տեռ տեղըտ, տու էլ չի կրիզիսին ռէխը ընգնիս։

Մին գեարան ուզեցի պէրանըս պինամ հըցնիմ էտ կրիզիս ասմունքը հինչ ազար ա, ըհա էտ գեարըմը մէր խնամի Քեասունց Վանին նի մտաւ հանց ցուփլէգ կե-ցուած, հանց կոխուած լուռւած, վէր թրափան եչիր, ըհա ասիս օղունչի Քեասուն թոռնը չի, մին ինգլիզ եա ֆռանգ ա ըռաչիտ կայնած։

—Պարով Վանի՛, ծեռքս տարի վէր պարեվիմ, տէս-նամ Վանին խէթ խէթ եչի՜ց, չոռ տւաւ պատն իեր կաղ-նից, ըհա ումբըրըմը ինձ տալըճանանչ, ինձ խնամի չի-նի, տանըս հեարիւր հետ չայ լակած չինի։ Ընդըղան էլ քոռը փէշման տիւս եկի գիրի մէր ղադիմի զոնչի Կեա-



լուսոին կանտորը, վէր առաչ պալըմը ահտարու գիւքան օնար, մարն էլ կուռնը չափէլաւ. կեարի քցեւաւ կօպրար, մհէգ ստեղ ղաւօղնէ, բուրուղնէ, տափիր, տներ օնի, սաղ օրն էլ հղեր մնըթական ծիանքը լծած՝ կըէթաւ ա ման կեամ։

Սհաթի 12-ին թանկօղանց Կեալուստը տանձիկի տուզ կտրած՝ նստալ ար ստոլին քմակին, մին սիւրու մարթէք էլ ըռաչին կայնած, վլվլեւաւ սպասըմ ին թա հնչ հրաման ա տիւս կեալու աղա Կեալուստին պրանան, վէր կըրկոնձի տալաւ կդարին։

Ինձ տսնալուց, քթին տակըն մին պատ մռմռաց, չու եկաւ մին կէռ զուռնա տիրաւ ընգուճին զուզին մինն էլ իւրան պրանին, ինքն իւրան մին խիլա տական կլ-խան տիւս տւաւ, ըհա էն հսկացի վէր ասըմ ար — հը՛, հը՛, հա՛, հա՛, հա՛ւ, չէ, հա, չէ՛, չէ՛, չէ՛, կրիզիսա ա, հա՛ դէ կրիզիս ա հունց պեզմա անինք։

Կրիզիս խօսքը, վէր հսկացի վէչ, ռանդըռուչս թռաւ, ա՛, չի՛նի թա էլհա էն գեահըրմար խօլերը եա չուման ե-կալ ա, ինձանա կեղըմ ըն, եա բեալքա դալատանը վէնն ա կացալ, ալան-թալան ա. էնա օղըմի անսէս տիւս կեամ, Կեալուստը մին քանէ հ՛ը, հ՛ը էլ ըրաւ, վէրչն էլ յ՛ը, զուռնան պրաղ տիրաւ, անջախ անջախ ծեռւք ըրաւ վէր մուտանամ։

«Հը Խաչա՛ն, աջար աջար էս ծիւն ծմեռնը, էս կրի-զիսին վախտը։

—Կեալուստ, ըսեցի, եկալ ըմ վէր ինձ մին պէնու

կլոխ տընիխ, տիեր Աստուծ, տվեր տու, ինձ մին քեօմագ ըրա։

Բա քու ադբամը խէր ինի, խալխն օղըմ ա էտ կրիզիստին ռխան Բաքուա փախչի, սա նոր ա կեամ, չէ Խաչան, խեղճ ըս, կրիզիստ ա, ըստըհենց կրիզիստ հեալա տեսալ չընք, մէր եալխն լափ շըզվըցըրալ ա, հախ միան տէրը քանդի Մաննըկոլին տունը հա, էս ազարը առաչ նա քցից Բաքու։

Էտ խօսքին երա լափ հիւլլա կտրեցի, մին գեարան ուզեցի տիւս ծլկիմ, էտ ըզարան փախչիմ, մին էլ ես ու ես սրտըվննուեցի, ասեցի Կեալուստ, վէր խտի թիւնդ ազար կա, բա խէ կըլթներըմը կիրըմ չըն, եա Բաքուա հեաքիմնէն կտորվալ ըն, խէ չըն ըտրա մհար մին դաւա դեարման անըմ։

«Էտ ըզարին դաւա դեարմանը էնա, ասից Կեալիւստը, վէր սանդուղըմըտ 100 անուցնէն տարած ինի, պլատոժ ամին ու դային վէր կեամ ա, ռխան տաս յղէ տընխ։

Ես ու էս մաքխ դոնը ընգած՝ քնէնքի անըմ թա եարար էս պլատոժ ամին ու դային հի՞նչ մէծ հեաքիմնէ ըն, վէր հեարխրանուց պետմա տաս վըննըհախկի, Կեալուստը կլխու ընգաւ, քմըըծէծաղ տւաւ ու գեջգանը դէջ հսկըցրաւ, վէր կրիզիստ ասմունքը փողի բեասադութիւնին ըն ասըմ ու էտ կրիզիստը հիւր պկա վէր փռնըմ ա, դեաստի փուրը հարէնք ա քցըմ։

Հալալ էրկու ամէս Բաքու չու եկի, սաղ կանտորնէն, իմ քեօհնա ու թեազա պարեկամներին ակը ուխ, տեսի



վէր չէ, վէչ մինան մին փայդա չի կա, լօխ էլ կրիզիստը մհանա փռնած՝ ինձանա փախս ըն տամ, լհա ասխ ես խւրանից օսերը եր ինելու ինի, էլհա իմ ղաղիմի զուռնան ու ամըլան եր կալի։

1

Մհէգ զուռնիս փչըմ ըմ, ամըլխ թխըմ սաղ ըշխարքին իմըցնըմ, վէր կրիզիստ, մէծ կրիզիստ ա պըլգալ Բալախանու, Սաբունչու, Բոզբոզու բուրուղչօցը, ու զաւօդչիգներին փողին սանդուղներըմը, չիւն էրկու կըպըկանուց նօթին կինը 12 կապէկ ռռնալին երա, հու վէր չահի բիստի ա ունեցալ, երա կալալ տրուբու տւալ վէզին տակը կոխալ, մհէգ էտ Բալախանին, Սաբունչին, Բոզբոզան նօթ տալին տեղ ճիւր ըն տամ հերիք չի, հեալա պկըներան փռնած՝ բըըզդնըմ ըն, պլատոժ ամին կեալուց, փուրը հարէնք քցըմ։

Ամմա կրիզիստ չի, հեալա մէծ բըլլուղա էտ զաւօդչիգնէրին, բուրուղչօցը մօղին եախան փռնօղ 30—40 մնըթանուց չլապա տինօղ, վէչէր սաբքօղ, կարտի ւուօղ, աչքաւ օնքաւ խօսօղ, կաւալէրներին նհետ մշըմաննի ւուօղ, սիլիբիլի անօղ նեանամ սեանամ խանըմնէրի։

2

Կրիզիստ չատ զօրբա կրիզիստ ա պիւն տիրալ մէր սովդաքեարներին դախըլըմը, չիւն մինին տասը փայ ապրանք ըն կապ տւալ, դիւքաննէն լցալ, մհէգ վէր կրիզիստ ա, բասպրապաժա ըն անըմ մուշտարի թովլամիշ անըմ, կըըկինի ապրանք տամ, լեաց չիւան անըմ, վէր տունընէն քանդվըմ ա ու սհաթի էրկուսնը կեալուց հեապուն հեապունը ընդնելան լափ հեալաք ըն տեսալ։

Ամմա տու եկ տես վէր բոլուղ հի՞նչ բոլուղ ա Բաքուայ կլուբըմը ամէն խրխցխւն կարտի տւող, հազարնէ տանէլ տւող համին էտ սովդաքեարներին ու իրանց փըքաշիկներին ու չրու լիս գաստինցոցըմ, ղրալ բուջաղըմ քէֆ զօղ անող հեարիւրնէ խարջող ջահիլ ջհուլների։

3

Կրիզիստ, մին երքեա կրիզիստ ա թաղնալ մէր Բաքւա մէծ ու պուճուր հնգերութիւնների կասսըմը, էն հնգերութիւնների, վէր չլէններին կալէկ կալէկ թուփ ըրած փուլերը կառավարիչնէն ճրմըտանգին էն թիւնդ վախտը՝ հեաբ ըն չինալ կոլ տւալ, կլխին ցորտ ճիւր խմալ, չլէնհեաբ ըն չինալ կոլ տւալ, կլխին ցորտ ճիւր խմալ, չլէն-
նէրին փուըրհարէնք քցալ հերիք չի, մհէգ էլ խալխին ե-
բայ մինինաթնէ ըն տինըմ, հթեթա տամ, վէր էլհա փող
տան, կոլ տան, պարապ սարապ չմնան, իրանք էլ փու-
ընհարէնք ընգնին, խալխին մեխկու տակու անին։

Ամմա տու թմաշա րրա, վէր համին էտ խալխին փուրուհարէնք քցող կառավարիչնէն հունց ըն սորնու ֆեանդ ու ֆիլաւ իրանց պէնը տըրհան տէսալ, տների, զաւօղների տէր տեառլ, օրիշի անըմի կիրալ, իրանք արխային թեամիւզ խղճմտանքաւ ման կեալիս։

4

Կրիզիստ, մէծ կրիզիստ ա Բաքուա գումըմը, վէր հեարիւր հազարնէ ա խարջըմ էս ու էն ինջինարի քաշած եա քչնիք պլաններին մհար, ամմա կարըմ չի մին քանէ հեարիւր մանէթ խարջի, իրան քթին տական պատառ հեռու ընգած քուչոցը ցեխը, լեղը հւաքէլ տայ, վէր



մէչին խօխա չի բաթմիշ ինի, եա չէ տիեր, տվէր քեցող չափ ընգած փայտոնների շպրտած ցեխը խանըմների ուխաւը տայ խաս ու զումաշ շորերնէն մաղրուն անի։

5.

Կրիզիստ, մէծ կրիզիստ ա իւրան զուլլուղին հաստադ քիւչոցըմը կաղնող զարաւուլչիների, բազազխանոցը եշող հեասասներին, տանը մզայիթ կէնող դվորնիկների, ամմա բոլուղ, մէծ բոլուղ ա խազէյիններին գալլին քռեշող փըքաշիկներին, քչերը տոն կորող, կտերնէն ծակող, խանչալ թխող, ջուբգիր, շառլատան հայի, թուրքի, գիւրջու, չի՞ն սհաթի մինան տէնը մէր զարաւուլչէքը չիբախանոցը ըրազին ու կինուն երայ ըն զարաւուլ քաշըմ, եա մին քինջըմ պըլըզած՝ չրու լիս խռըմփըցնըմ, վէր կեօղերը իւրանց օյազ չի տեսնան, համութ քաշին, կիւղացած ապրանքը թաղին փախչին։

6.

Կրիզիստ ա նի եկալ Բաքուա հայոց թատրոնին, ըտրա մհար էլ թամաշաչէքը սէյրըկանըմ ըն, ակտրիցէքը իւրանց տեասը մուաանըմ։

Կրիզիստ ա նի եկալ մէր ժամ քեցողներին, ըտրա մհար էլ ժամին պատերը չփթըմէչի ժմըվէրի հասրաթ ըն մնըմ։

Կրիզիստ ա նի եկալ մէր ողորմած ու պարեպաշտ ժողովուրթին ջուբին, ըտրա մհար էլ սօր ապրադ ըլքուղ, եթիմ, ալամ եսիր խօխա, կնէգ, ախճիկ մըչէմնու նման քիւչէքաւն ըն ընցալ ու տեար ու տիրական չի կայ։

Կրիդիտ լեաւ բաբալթ կրիդիտ ա նստալ մէր հայոց կըլթններմը, ընդրա մհար վէր նիսխա կարթողը շտացալա, կըէթու փող տալը մահացու մեխկ տեւալ, մէր խմբակիրնէն էլ տեսնըմ ըն, վէր ըղաչանք պըղատանք ընելու կազէթ չի պահուէլ, մտկըններըմը տիրալ ըն, վէր էտ կըլթներան ծեռ.ք եօր օնին, ագկին լափ խաւար թոլին, կրիդիտըն երա մին էքքեայ կրիդիտ էլ խըլըցնին։

Է՞հ քանէ մինն ասիմ, մհէգ հու վէր տեղան եր ա կէնըմ՝ կրիդիտա ա խօսըմ. տանտէրերը իւրանց հօրը օխտը կինը երա տիրած քրեհնէ ըն առնըմ, մանին կրիդիտն ա. մարթէքը փայտոնի, կոնկի տակ ըն ընգնըմ ճարթըփշուր տեռնըմ, մանին կրիդիտն ա, հացը, մէսը, եղը, փեադը բեօմուրը մինամին թնգացալ ա, մանին կրիդիտն ա. բուրուղնէն էնքան քաշալ ըն, վէր էլ տափին տակին նոլթ չի մնացալ, մանին կրիդիտն ա. մարթէքը ջշերը ցիրեկ ըն շինալ, ցիրեկը ջշեր, մին մինու թեփռըմ ըն եա ազար բեզարը շտացալ՝ մանին կրիդիտ ա, կնանէքը շատ թթուեզէն ուտելան ախճիկ ըն պերըմ, անփիշ անփթըռոկ ըխճըկերքը տանն̈ըն մնըմ, պռաւըմ, մեղաւերը կրիդիտն ա, մին խօսքաւ օտել-խմէլը կրիդիտ, նստել-երկենալը կրիդիտ, մեռնելը հու կրիդիտ ու կրիդիտ։

Թա էտ ջուռաբաջուռա կրիդիտնէն հունց կվերչանան. եա ըտրանց ճարը հունց կինի, ըտրա մհար Զուռնա-Տմբլան թեազա տառնին կխօսի, թա վէր սաղ սալամաթ մնա, իւրան էլ մին եաման կրիդիտ չի նի կեայ։

**Տմբլաչի Խաչան։**

---

# ԶՈՒՌՆԱ-ՏՄԲԼԱ

(1900 թ.)

№ 1.

## ԷՍ ԱՅԱՄԻՆ ԿՆԱՆԷՔԸ

Իմ աչքի լիւս կրթեցող, եօ կլրալի, վէր թեազա տանին եա ճրօխնէնքին թա զուռնա-տմբլա կրիդիտ չի նի կեայ, էլհա մին կզառըցնիմ, մէր Բաքուայ ալամեաթ ըլէներան քեզ խըըրնէ հայնիմ։ Ղարթա էտ կրիդիտին շուրշուփը մըզ էլ նի եկաւ. ամմա տեսնաս հիւր ինք մին կուտուր հաց տալ, էս գեօնըմ լեաւ պըծինք. մինակ ծվվանըս պատառ խարար իլաւ, ըտրա մհար էլ կրախչիս, վէր զուռնիս զաղեմի ծվվոց ծկլթոցը եր չինըմ, մհէգ խռխռոցն ա ընգալ, անզուճնէ ա ճըըցնըմ, շատերին էլ զահլան տանըմ։

Ա. քմմատօղ, հմւնց չի խռխռոցն ընգնի, քանի վէր այամը փոխուալ ա, մարթէքը փոխուալ ըն, հնգեր, հրեան, պարեկամ մին մինու անա զըաղ ըն բաշուալ, համուլթ, պատիւ, սէր մէչ տեղան եր կացալ, վէչ պուճուրն ա պուճուր, վէչ մէծը՝ մէծ, վէչ հաքեվէրը՝ հաքեվէր, վէչ մարմնաւէրը՝ մարմնաւէր։ Բա ըտրանց արարքնէն մին մին փչելաւ՝ զուռնա կտիմանմ, հեալա վէր խռխռոցն էլ տիւս ա կեամ, էլհա մէծ ալէն ա։

1

Ախր հո՛ւնց չի խուխուցն ընգնի հեալա կրիվլխոտին ուլխին էլ բուլղի կտրի, քանի վէր բու՛նհան աւալա մին քիլլամա տան պէնը հարուստի լինար թա քեասիբի, տանը կնանէքը, ըխճըկէքը կնին, տանը մէծը չարխու նման կլխներին շու կտար, ամէն պէն իւրան տեղը կինար, կարքին, սարքին, վէր տանոլին քէֆը կըկեար։

Մհէգ այամը փխըրնալին եբա մին տանը օխտը գեաղան ու քոծն էլ չըն հերիք անըմ, հեալա էն տէնը տինինք, վէր ամէն մին խուխի մ՛նար մին՝ զուվըրնանկա եա զորնիչնի ըն պահըմ ու մէր նեանամ սեանամ խանըմնէն լայեղ չըն անըմ իւրանց անալան զողմա խուխոցը ծէծ տան, ծծմեարնիրին ըն թափչուր անըմ, վէր ընգրանք ծէծ տան, կոլի, էծի, խողի կաթնաւ մըծըցնին՝ մարթ չինին, աշխարք քցին։ Դեարդ հէ՛նչ, հեալա կէնդատվըմ էյ ըն թա խօխէքը մըծընալուց էտ անասունքին խսեաթնըն ստանըմ եա չէ դուռուակ եա բուռլակ ըն տիւս կեամ ու վէչ մինը իւրան հօրը եա մօրը չի քաշըմ…

2

Ախր զուռնաս հո՛ւնց չի խուխուցն ընգնի, քանի վէր բուննան աւալա մին փխյի չամու մին տօն տնըհաւա կըկտուավարուխն, տնացէք չըու կէս քշեր նստած՝ ճըըրլխսաւ իւրանց պէնին կըկէնին չաման խլացածն էլ տանը պառաւը էքսը եօր կօնար եա չխրակին անդուճնէն քսար, վէր խլիգը մէչին լեաւ շու տայ, եա սանդերքին



ճագեըը կըքսար, վէր ընջոտին վէչ, մալանչնէն խաբար տեռնան. ամմա մհէգուան ազաթը Աստուած կտրի, դըվազան կցած չըու բալխնը, բալխնան չըու օթախնէն վէր ճոխտ ճոխտ ջարգըլամա լամպէր չինըմ վառած՝ ժամու ճառերը ութախան կախ տուած, օխտը ճղնանի չամդաննէն էլ քիւնջերըմը մարթարօյ ստոլների եբայ պըպըգցրած, մէր խանըմներին պկաւը հացը կոլ չի բինըմ։ Հեալա էտ վէչլինչ, մհէգ էլ իրեքտրեկան լուսնըն մօդ քցալ, վէր օթախնէն լափ չըադուան տեռնա։ Ես գիդըմ չըմ մհէգվան կնանոց աչքին լուսն ա պկճաալ խոփ զուբաւեր լուսի կարօտ ըն, թա պէն ու կօրծընէն հանց շտացալ ա ու խուրդացալ, վէր էլ ճըըբալխսը պէն չի տամ։ Ամմա ես իմ աստուծ, վէչ էն ա, վէչ էն։ Էս այամի կնանէքը վէչ պխուրթ ըն կիզըմ, վէչ չխարակ եա իլիգ մանըմ, վէչ զայթան եա փուխկաքօլ չինըմ, վէչ վէստան հինըմ գեարա, կարպետ, մաֆրաշ ու խուրջին կեօրծըմ, վէչ իւրանց գլուբան ու չուլկին անըմ, վէչ խփըմ, վէչ թխըմ, վէչ լաւշը անըմ, վէչ ծխըմ, վէչ կարըմ եա խըծըպըմ եա լհա մին շլալ քինըմ։ Էն մնացած պէները ասըմ չըմ, վէր ղազիմի կնանէքը կընին—մէչքաւ ճիւր կըկրին չափթանը մին իւրանց սկեսուրը տաշտակըմ կտինին՝ լըըցնին, պատրունին, տեալքեալցը եա տանը մըծերին վէննեըը ամէն իրիկվա կլընին, հեալա ճկըտներին էլ տինին եանի թա իմ իրեսըս քու վէտանը տակը չըու մահ մունք հնազանդ ընք։ Մհէգ հօր ըն խոփ շուզումքուր հարսները. լոխ խանըմնէ տեռած՝ իւրանց մարթօցը կլխին նստած՝ ճղուպուր ըն կտրըմ, էս պէր, էն

տա՛ր, ըստրան հաւան չը՛մ, էս օտէլ չը՛մ, էս կէնալ չը՛մ, էտ ինձ հինչ լայեղ ա, մին խօսքաւ քըԹընէն եր քաշած՝ պէն, կօրծ, տոն, տեղ քոծի, գեազի ումուզի Թօղած սաղ ցիրեկը քիւչէքը չափ ըն ընգնըմ հերիք չի, հեալա քչերնէն էլ վէչերներըմ եա ըստեղ ընգեղ լիւսըցնըմ ըն, ջահիլ ջհուլի նհետ զոփի տամ։

Ամա էտ ազիզ բզուզ խանըմնէն աԹարարա խոփ ըն մըծացալ, իւրանց հեարանց տներըմը խոփ կաքաւերիշի ման եկալ, մհէգ էլ սըվօրուԹք ա իւրանց մհար, այ Թօրմ. շատ շատերը մին չոր կուտա՛նա ըլնալուց՝ օխտը հետ ամծու փառք ըն տւալ՝ եանան կտրալ, մին չիԹի գերեա կէնալուց՝ ուրխընալան գիգացալ չըն Թա հինչ անին։ Մհէգ վա՜յ ա, վէր մինը մին խաս գերեան էրկու հետ կեցաւ, մըԹամէչ տիւս եկաւ, պետմա տէնը շպրտի եա քոծին աէխը քցի, Թեազան առնի, վէր խալխը երան մաԹ ինին, Թեարիֆ անին, ամին ֆըլանքեամին կնէգը հինչ լեաւ կէնիլըմ ա. վա՜յ ա, վէր մինը պարիժըմ տիւս եկած մօղնի շլեապան աաշ ինքը չի տիրաւ, եա չաքաւեր պալտոն ու բոտոնգը աաշ ինքը չկեցաւ. սաղ աշխարքը կլխին փոլ կըկեա, ներվէննի ազարան ընգնի, տոնը իլալըմ քցի։

Իմ գեարդս էն չի, վէր էտ պտկան ծաղկած Թեազա արշա ընգած, հիւրԹմիշ իլած, մէյդան տիւս եկածնէն իւրանց փողին, ապրուստին քոռ աչքաւ ըն եշըմ. գեարդըս էնա, վէր մին փարա ախմախ քեասիբ քիւսուբ էլ ընդրանց եշած ա պէն փռնըմ, ընդրանցա չէշնա եօր օնըմ ու մին քանէ տռնըմը իւրանց մարԹոց արևն քրտնընքաւ ըշխատած փողերը քամու տամ։

Վա՜յ ա, վէր էտ խանըմներին մինին կլօխը ցաւից եա բաշմակին քէԹը ծռուից, էլ հեաքիմ չի մնալ կլխըներին կը հւաքին, օխտն օր օխտը քշեր տնքա՜ն, ճռա՜ն, երգիր ըշխարքու իմաց անին, վէր իւրանց կլօխը ցաւըմ ա, եա բաշմակին քէԹը ծռվալա։

Վա՜յ ա, վէր մինին աքրակէնը եա սկեսուրը հզերանց մին պերանը պենա Թա Սեանամ, Նախշուն եա Օֆէլիա, պէնին Թեահրը ըստըհենց չի, ըստըհենց ա, եա աչքիտ երա օնք կա, էլ կարէլ չըն ռխան պրծնին, հանց կնդիչը կպցընի ծլվա ծկլԹա, վէնները տափը Թակի, հեարբա կեա, վէրչն էլ նստի զռզռայ, վէր տոն տնըհաւա քաղրխար կտեռնան ու իրանց աքուռը չոլը չքցելու մհար Թի՜ւ կուրկուփ կանին նստին։

Էհ, քանէ մինն ասիմ, էս այամին կնանէքը օզգեաբարաԹ զատեր ըն, ըտրանց նստել եր կէնալին, օտել խմէլին, կեցուածքին, անտոլկ խարջերին վէչ փող կտիմանա, վէչ ջան, ես իմ ասուծը ըտրանց մարԹէքը, վէր կրիզլիտաւ էլ պրծընըմ ըն, էլհա մէծ բախտաւորուԹիւն ա։

## ԽՈՒՐԴԱՑԱՐԱ ՊԷՆԵՐ

### 1

Զուռնիս փչըմ ըմ Բաքուա իրեքտրեկան լիւսին զաւօդին յունվարի 15-ին կրակ ընգնելին երա գեարդ անողներին հսկըցնըմ, վէր շատ էլ գեարդ չանին, մէր

չհարներին ջահիլ ջհուլնէն, ավիրքրսւղ դամերն ու ըմճըլկերքը էս մինքանէ տանըմը հանց լիսաւէրսւալ ըն իրանց գորնիչնոցն ու կուխարկոցն անա, վէր ընդրանց լիսան էլ հերիք ա օխտը Բաքուի մհար։

Ասըմ ըն իրեքտրեկան լիսին կամպանիան չրու իւրան պաւօդին պէն քցելը, օղըմ ա էտ լիսը փողրաթու եօր օնի, ամմա մէր խանըմնէն ու ջահիլ ջհուլնէն կինըմը բըրըշըմ չըն։

2

Ջուռնիս փչըմ ըմ երգիր ըշխարքու խմըցնըմ, վէր հուվեր օղըմ ա ալան թալան ապրելը ավերի, մեռելոց եա տնօրհնէնք օրերին կեայ Բաքու, մէր հօքեվէր մին փարա գէրէրա մի քանէ տեաս առնի։ Էտ հօքեվեր գերերը հանց օրը քիսրին թալանչոյթիւն ըն անըմ, մին մինու ծոխ խըլըմ, քիւչոցըմն էլ ռաստ կեալուց մին մինու պկա կէնըմ, վէր Մաշադի Մէջիդը եա Աբդուլ Քեարիմը ղալաթ կանին իտի տիւրիւր կեան։ Ես գիդըմ չըմ, ամմա աստղնէ կա, վէր համին էտ գերերը իւրանց նհետ ման եկող տիրացուներան էլ ըն փող եա անըմ, վէր բիրդանը բիրգ հարստանան վէչ ընդրանք էլ գերեր տեառնան, իւրանց հայը կտրցնին։

3

Ջուռնիս փչըմ ըմ Բաքուցուց աչքալիսանք ասըմ, վէր դուման 200.000 ա իւիլ արշինսւկէսանոց պախողնի սապոկնէ ա կարէլ տալ, վէր ցեխ օրերը վէննաւ մանեկողներին պըժէնի, էլ մըռնըշոթուն չանին՝ թա



ցխոտ ըն ինըմ։ Փայտոնաւ մանեկողներին մհար էլ կարքատրալ ա, վէր ամէն մին փայտոնչի մին փալանած համբալ եօր օնի նհետը, վէր փայտոնը ցխերըմը քաթմիշ իլած վախտը, դամերը ընդրանց օսերը եր ինին՝ սաղ սալամաթ տան հանին։

Էտ կարքատրութինան ասըմ ըն գլասնիքը շատ պաւակըն ըն. տռաչինը, վէր փողրաթու ցեխ սրփէլ տալը համ ջեանջալ ղատ ա, համ էլ մինամին թեանգ ա նստըմ. երկուինջինը՝ ցեխը լէը սրփէլ տալուց՝ քարերը պէնվըմ ըն՝ քիւչէքը եարաշըղա ընգնըմ. իրեքինջինը՝ կէս արշինաչափ ցեխերը եր կնալուց՝ փայտոններին ու արաբաներին չըրխըրխկոցան, ղաղռոցան գլասնէքը վէչ ցիրեկը կը կարին վէր էլ քշերը մին գինջ քուն ինին, չհարին խէր ու շառին երա արադ տեանան։

## ՋՈԽՈՆԻՆ ԹԼՂՐԱՄՆԷՆ

*Լոնդոն.* Ձեմբերլաքեանդլին.—ամմա քէթըտ իրգընանըմ ա հա՜ ա՜ ա՜...

*Տրանսվալ.* Կրիկէր դայուն. դայի, սաղմուս կարթի, տէր ողորմիա քցի, շները կպտի, խուխոցը ինգլիզի ջանին քցի տեսնանք հշտեկ ա մըժնելու. էլ ասըմ չըս Բաքու կրիգլիստ ա էս հինչու երայըմ։

*Ֆրանցիստան.* Դրէյֆուսին. լոթի, ամմա լեաւ պըրծիր հա՜, պատառ ար մնացալ փուստիտ ցրեւ տան։

*Պարիժ.* Վիտտւկա սարքողներին։ Մէր Բաքուայ դամերը խնթըրըմ ըն, վէր իւրանց մհար էլ մին պիծի

վխտաւկա պէնաք, հ՛ինչ ջուռա մօղնի մօղնի չորեր ասխ լօխ էլ պադրաստ ա։ Վխտաւկի մէչին թա խծընակին դաշա ինի, էտ դաշէքն էլ ընդրանց մ՛ար պ՛հեցէք, ըստարի լօխ ըտեղ ըն դաշա կեալու։ Պէնա, թա վէր ֆռանգնէն զուռնա ղաւալաւ պար կըկեան, ես էլ վխտաւկա կեամ. համէլ էն տանին նման ըֆըլեանին կլխին նստիմ՝ սեարինլամիշ ինիմ, մէր երգըան եկած խանըմներին թմաշա անիմ, մըխթարուիմ։

*Եցմիածին.* Հաջիլարին, քա տուք վխտաւկա չըք տխւս կեալմ՞ւ։ Ծէզ ն՛հետ չատ պէն օնիմ, ամմա ծեռքերըս կապւած ա հ՛ինչ անիմ։ Սէրտըս օղըմա մին կեամ կուպըլաթակ տամ, ծէզ գխուխգխուխ խըղըցնիմ, ամմա վախըմ ըմ ընըծքաչոր անիք ետ խռէգ տաք. լեաւն էնա ես իմ տեղը, տուք ծէր տեղը ծանդր նստինք, մին մինու նի չի կեանք, դայմա մեանի, դայմիլըմ սեանի աւինք, բարաբարի պըծընինք։

*Տոշխա-ղաշաճ.* Կնդըստորու անթամնէրին. վա՛յ քեզ քորագին, վա՛յ քեզ բեթամյլտա. որ զուղտս կլանէք և զմժղուկս քամէք...

Քամեցէք, քամեցէք, օղտերն էլ երա կուլ տւէք, հեալբաթ մին օր էլ ծէզ կըքամին, քթըծըկընեըաւըտ էտ օղտերին անմարս մնացած կճխպնէն տխւս պիրին։

*Խմբ.-հրըպըակիչ*

**Տմբլաչի Խաչան։**

# ՁՈՒՌՆԱ-ՏՄԲԼԱ

№ 2.

## ԻՄ ՄԵՂԸ ՀԻՆՉԸ՞ՄՆ Ա

Իմ աչքի լիւս կըթեցող. ես գիդըմ չըմ հ՛ինչ ըմ ըրալ, վէր Բաքուայ նեանամ սեանամ խանըմնէն մին էլ մին խիլա ջահիլ ջհուլ ինձ երա ըթըլպոշ ըն ըրալ, վէր իւրանց թանին թըթոյ ըմ ասալ, փեարդին մին գլադը պէց ըրալ՝ իւրանց արարմունքներան մի փարա պէներ զուռնին ուլխին տիրալ, փչալ։ Էտ խանըմներան ու ջահիլներան մին քանէն աւըմ ըն հանց կգնըլվալ ըն երաս, վէր օղըմ ըն խնթիլըքակործ ինին, զուռնա-տմբլաս ծեռքաս խլել տան, մին տոն տնըըհաւա խուխոցս ռուզին մին հետան կտըցնին։

1

Ախր ես գիդըմ չըմ իմ մեղը հ՛ինչըմն ա եա ես իւրանց հ՛ինչ փոթուն ըմ ըրալ, վէր տանըս օղըմ ըն կլխխս քանդըն. խէ ես եր ըմ կացալ զուռնխս փչալ, տրուտխտուն նի քցալ, թա հա՛յ հարմ՛յ Բաքուայ խանըմներան չատ չատերը, վէր առաջ իւրանց մարթոց ու սկեսրոց ունքըմէչին կըեչին, ամեն հ՛ինչ ծնդըր թխթև կը-

նին, ետնան կլխընէն քաշ բցած, պռըշներին հոփ տալու՝ տասը խօսքան օթը կոլ տալու՝ ջողաբ տին, մհէգ հանց լուսաւերուալ ըն, հանց ճոխտ ճոխտ տըըք տըըքալի խօսըմ, խօսած վախտն էլ վըննըծեւըրին անըմ, գըղըճ գէղաճ եշըմ, եա ափաթը տասը ջուտա փոխ տամ, վէր հեռուցան հեռու եշողը ասմա՝ եարար էս խանըմնէն տեմնաս վէր օնվերատան ըն տիւս եկալ, իւրանց ուսումը վըշըցրալ ու հինչ երևելի պէներ ա ըն խօսըմ, ամմա վէր մուտանըմ չըս մին պատառ անգուճ տինըմ, տեմնըմ ըս ըտրանց խօսք ու զրուցին սիլը սաթխըջամը իւրանց քըծերին, պոմըրներին ու ու նեանկոցը թարխփլամէըն ա ու կարած եա կարել տալի շորերին չափն ու ծևը, լէնտերին ու կրուժվոցը նայըն ու մոլըհաթը եա չէ հըսնընքտներըմ եա գոնագըղներըմ իւրանց կերած խորագներին մննըհաշիւը եա քաշած խարջին ծնգըր թիթև անելը։

2.

Ես ասալ չըմ, խըկի ասելու էլ մէտք չունիմ, վէր մէր մըծատան խանըմներան շատերը իւրանց խուխոց հանց լեաւ թալիմ ըն ուսալ, հանց փռանգվանչի եա լեմսվանչի ազիզ բըւզուգ պահալ մըծըցրալ, վէր սօր էտ խուխոցան շատերը առանց մին բանէ մանէթ ջուրխաշըկի տանան տիւս չըն կեամ եա սումարան չըն քինըմ հերիք չի, հեալա փողներին քեասադած վախտը՝ իրիկոըվէրը ջուըրներան հանըմ ըն, լուլան պերաննէն կոխըմ եա ճկըտմէշին փունըմ, իւրանց մօրանցը հըթեթա տամ, թա վէր փող շտաք, մեզ խսարաթ կանինք ումըրընէտ սըվըցնինք (հա



ասխտ խտի բեգարըլ սանդերին կուտուրվէլալը ադկին կըխին մէծ անբաղտութիւն կըկեայ), էտ շուցումքուր մեալերն էլ ճարըկտրի օղածնէն ուըմներան ըն տամ, պահի բեթար սըթըղցնըմ, հուալամիշ անըմ, մէյդան քցըմ։

3.

Ես ասալ չըմ, ախր հի՞նչ պէն օնիմ, վէր ասիմ, բունան ուալա ադաթ ար, վէր փեսան հանօրանց տանը տնըփեսայ կտեւնար, եա շատ շատ թիփլիզի գէգէրը իւրանց ըխճըկորանց նհետ պրիգեան կըքինին, մհէգ այամը փոխուելին երայ՝ հանց մէծ սէրոթըն ա ընգալ փաոց ու հանկրլարին մէչը, վէր էլ մին մինու անա խըկի կարըմ չըն հռանան, նեաֆաս քաշին. ըտրա մհար էլ շատ հանկրլար իւրանց հեաճխճ մեաճխճներաւը փաոց կլխին նստըմ ըն հերիք չի, հեալա տանը ըխտըեարն էլ ծեռք ըն քցըմ, օտըմ, խմըմ, քմակի էլ ուշունց տամ։

4.

Ես ասալ չըմ, խէ՞ կլխխս ծի ա քացի ուալ վէր ասիմ, Բաքուայ տատմարնէն, արևն ըրտասունք ըն թափըմ, թա հացընէն կտրուալ ա, էլ ապըուստի տեռնը չի կայ, չիւն մհէգ այամը փոխուելին երա, ճարի տրաքի խանըմնէն, վէր իւրանց խեկքը կռուղնուցնելին տեղը՝ անջախ իւրանց մադերն ըն մաշին քցըմ՝ բուխարա մորթու նման կռուղնուցնըմ, կիր կիրակըս, խօխա ըրախա նախշ նիգեար թըղած՝ իւրանց շուրերին նախշին երա օրը քշեր մէտք անըմ, նաղու քեօղու հցերանցը մին խօխա պիրեւուց՝ (վէր կարին հուտաս էտ խօխա պիրելն էլ քածի ու զորնիշնի թափշուր կանին, վէր իւրանք էտ

ջանջալան էլ ըզատուլին) էլ լայեղ չըն անըմ տատմար կանչլին, մազու մըքու տատմար հեաքիմնէն ըն մօդքցալ, ըտրանք էլ աջալ աման չըն տամ, բշեր ցիրեկ համ տատմարութուն ըն անըմ, համ սրտըմնա եր քաղըմ, համ պորտ քաշըմ, համ թիքա փչըմ, համ էլ էտ խանըմներին կաւալերոթին անըմ, ընդրանից մարթոց սէրտն ան ջուրը ճըըմըու տակ քցըմ։

5

Ես ասալ չըմ, ախր հի՞նչ կսազի վէր ասիմ, բունիանն աւալս վէր հղերանից մին ջահիլի եա ահիլի կէւէք կյաւար, թուշ գալլաքխանեան կըքինար, ընդեղ քեարփաթխւնին ռէխը կըքցին՝ գեասաի հնին, մին էրկու կըտըմ ճիւր կում կանար, ցաւը անից կըկէնար. մհէգ Բաքուա թեադա արշած ընգած ջահիլնէն քսորհացա եա իրիգնըհացա եռքը, վէր կռքըներին տակին մէս ա մնըմ եա բաղամի քչի, կանիխտեկէնաւ, բուկեռներաւ թուշ վազըն տամ նեժնի մարօժնի գանտխտկոցը կոշտը, ըդրանք էլ, վա՜յ հախին, վա՜յ նհախին, սայմ ըն հանց պէրակ սրտանի ըն, վէր էտ կռքացաւ ընգնողներին մաշին քցելուց՝ իւրանք էլ ընդրանից նհետ թիւլանըմ ըն, օշըներան քինըմ, խուէտ խուէտ իլած եր տեւնըմ, չըու քոծերը կեամ չըն ճիւր շաղ տամ, էրկուքանուց օյամիշ անըմ։

6

Ասողնէ կայ, էլհա վա՜յ հախին, վա՜յ նհախին, վէր էտ դանտխտկէքը մին փարա հեաքիմներին նհէտ կամպանի տեւած՝ մինակ էտ ջահիլներին կռքընէն չըն մաշին քցըմ, թմըզցնըմ, ընդրանից ջուբընէն էլ ըն թմըդ-



ցնըմ լեաւ խըթու տամ, սրտըներին եղն էլ քաշըմ, վէր վախտ բէյվախտ եօխուշաւ քինալիս՝ ծնդրթիւնան թեահնեաֆասը չընգնին, վերջն էլ խարջու տակ ընգնին Պիտիզորսկ եա Եսէնտուք վազ տան։

7

Ես ասըմ չըմ, արադուլլա սուկ էլ չըմ, լիւզւաս էլ կրակ ընգնիմ—թա մհէգվա ջահիլնէն օզգեա բաքալթ զատեր ըն, կարսէտ կէնող ջահիլնէ կան շահի բիստի քթած՝ էն էլ զուխաւ, ադեկոլոնաւ պերանը ուզող սւող ջահիլ ջհիւլնէ, վէր սազ քշերը կարտի տալաւ ըն լիսըցնըմ. ջահիլնէ կան՝ վէր քիչ ու պուճախըմ լէփըմ ըն, լակըմ, լիւլ կտրըմ, բաշմակաւ կենացնէ խըմըմ, էքսն էլ մըթըմէչի գեօվամիշ ինըմ։ Ջահիլնէ կան, վէր իւրանից կլխաւն ընգած հարստութունը նշանից տալու մհար՝ հարիւրանուցը կանեակըմ թըշըմ ըն, ճրաք չինըմ, արտխտկոցն ու արփիանկոցը վնըտակին վառըմ, ծոնդր տինըմ...

Էհ, քանէ մինն ասիմ...

Մհէգ քեզ ըմ հրցընըմ, վէր էս պէները ես ասալ չըմ, մտկաւս էլ անց չի կացալ, վէր ասիմ, ես գիդըմ չըմ խէյըն ինձ չաւաւ տամ, ինձանա էլ նղանըմ։

Ջուռնա-տմբլիս արեաւը խըթըմնըմ օտըմ, վէր մհէգսատէնը էլ մէր խանըմներին եա ջահիլներին մհար պերան չըմ պենալ, թեաք թօղին զուռնաս ծեռքիս կենա, էս պարեկենթաններին մին էրկու հետ էլ սհարի փչիմ, էրված գալուած սէրտս հւանա։

## Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

*(Նեանի թա պոլիտիչեսկի պեհեռ):*

ա. *Ֆռանգիստան* հերու ու մէկալ տարին Դրէյֆուստին կործին երա շնըհաշուց ար ընգալ ու օղտերը խըռնալ ին՝ գեօղաւկներին օղըմին տակընէրաւը անին, գէջգանը գէջ շնըհաշուցը կտրուից, չոնը իւրան տեղը ճնանչից. մհէգ հանցա սաղ երգիրը քիչուած տարած, մին զատ կուրցրած ինի: Տատերը փուշմանըմ ըն վէր գըմըզալ, տըրըթմփոց եա շնըհաշոց չի կայ, ըտըա մհար էլ մին չոփ երկալած, ըխպըհարերն ընգած՝ խռնըխառնի ըն անըմ թա տեսնան վէսկուռա զատա տիւս կըկեայ, վէր էլհա շները կավըցնին, թմաշա սարքին: Էս մուտերքըմը ասըմ ըն իտի մին վէսկուռ աքթուալ իւրանց հուքեմուր գերերին տապաժխանըմը ու մէծ շնըհաշուց կընգնի, թա վէր հուքեմուր գերերը էտ վէսկուռը ծեռքա տան, մէյդան տիւս պըրին:

բ. *Ինգլիզ*: Հանի Չեամբերաքէնգլին եօղուրաւը ինգլիզը իւրան ղոշունը Տրանցվալ ղարկից, վէր Կրիւկէր դայուն փռնէին, մրօքը վէր անին, պոխը քեանդիր քցած Լոնդոն պիրին. չիւն Կրիւկէր դային թողալ չի վէր Ինգլիզի հաւերն ու վերցակնէն իւրան հըյաթըմը քթոլթ անին հերիք չի, հեալա փռնոտալ ա հեարինէն քանդալ, պեց թողալ: Էտ ղոշունը էս ա քանէ ամէս ա կռեվս ա տամ, կռեվս ա տամ, ամմա կարըմ չի մոտ թակի, չիւն եա կէտերն ըն վրարըմ առաշնէն կտըըմ, եա ճորէքն ըն խըռ-



նըմ խնդուցի տամ իւրանց վէր ածըմ, թուշ Կրիւկէր դայուն թովլան փախչըմ, եա ղոշունն ա բիրդանըրբիրդ եր հմբարցվըմ, էլ հետն ու թեփուռը իրեըմ չի. մախլաս Կրիւկէր դային իւրան թռնէրաւը հանց ճարթ ու փշուր արալ Ինգլիզի ղոշունը, հանց օյին տիրալ Բուլեր փաշին կլխին, վէր չանը կլօխը չի կեայ: Մհէգ Չեամբէրլաքենգը հանց ա տեռալ թան ընգած մոկնը, չարալաշմիշ ա կեամ վէր մին տեղաւ տիւս ծլկի, դահի բեխթար ա թանըմը խրվըմ:

Ախր հախն էլ ա, հինչ պէն ծնի կարմունջըմը, վէր պտատուի եափընջըմը. խէ՞ քթոլթ ընէլի ըխպըհարերը կլխան կտրուալ ար, վէր Կրիւկէր դայուն հայաթն ար մնացալ իւրան հաւը-ճաւը բշի: Հունց վէր փըթայ ա, ընդըհենց էլ պետմա օտի: Մունք էլ կասինք՝ պարով մարսի:

գ. *Լեռմաղստան* սուս ու փուս պէներ ա տեսնըմ. էս ա մին տարի կա, վէր ըստեղ ընդեղ մարթէք ա քցալ, քեօք խողու ա ման կեամ, վէր մորթի, կալբասի շինի: Էտ մարթէքը Օսմանլուին վէցըմը, Չինմաչին ու օրիշ տեղեր լեաւ իժընակին խողու տեղ ըն ըրալ ու հունց վէր ասըմ ըն, ըստարի համ բուլամա սխտորած կալբասի կշինին, համ լեաւ բաստըրմա:

դ. *Աւստրիան* մին քանէ ճիլտա խաշլամու թիքէք ըռաշին տիրած՝ ծմծամըմ ա, ծմծամըմ, կէռէքը զատ չի կտրըմ, ճարը կտրի պիրանան մին մին հանըմ ա, թող անըմ սուփրին բշտին պըլըզած շան ու կատուին առաշը բցըմ: Թա էտ թիքեան շներն ըն չանթը՛մ, կատուէքն

ըն հեաքինէն կըլցնըմ՝ մլաւսցը կցըմ. թա կատուներին ուէխն ա ընգնըմ, չներն ըն կունձ կոնձըմ, քալոլ կէնըմ։ Աւստրիան մնացալ ա էրկու կրակին մէչտեղը, վէչ կարըմ ա մին հետան խաչլաման ինքն օտի պրծնի, վէչ էլ հանց թիրէք ա ըցըմ, վէր համ կատուներին մլաւսցը կտրուի, համ չներին չըլհաչօցը։

Աստուած փորչը պահի անի։

ե. *Իտալիան* պարկապզով ա փչըմ, հայրենիք սրփազան երգըմ։

զ. *Ռուսիա* պապը տարին իրեք հետ մէռնըմ ա, չորս հետ սղանըմ, մին խիլա պարգինալ-մարգինալու իշտահ էլ պատ տռնալու մհար պեցուխուփ անել տամ,

է. *Օսմանցուն* բերդէններին թիքան փչեղան եար, օրը մէչ չարրեաթա խմըմ, թախտին երա պըռըեր թէք ընգնըմ, ղալեանին ծխք տամ, մաքըմը Եւրոպու հեաքիմըհաքներին հերն անիծըմ, թա վէր կարին ըէցէպտներին կէրած հեաքերը զոռու եա խօշու խըրան կոլ տալ տան։

ը. *Իրան, թուրան, ղզըլբաշ* ըրեգիւնաշի ըն տամ, քթե անըմ, մին քանէ էլ գեալլաք բըրչներին կալնած՝ կլխընէն սապըն ըն տամ, քոռ ծիլու վէր անըմ։

թ. Մին փարա տէրութիւննէ էլ վէրսկան չան նման մարալ կացած, աչքնէն տուղ տւած՝ եչըմ ըն, թա հշտղան ա վէրալ տիւս կեալու, վէր երա պըծնին չանթին, ճիլամըրթ անին, փոըընէն քցին։

Հային պօլիտիչեսկի պէնը մինակ ըրազի եա ըռըկեոճի փայն ա, էն էլ եր ա խըլ չէյրանին պօզերին կըռխը ու ծեաքընի չի հանըմ, վէր եօր օնի գեարգին գեար-



ման անի. ծեաքընի հօնեըուց էլ հանց թանթխուլու թխըմ ըն կլխին, վէր վայ նանի կանչելու փախչըմ ա քիւնջը նի պըծընըմ։

Թա էս պօլիտիչեսկի պէները հունց կիսրչանեան, մունք հեալալկըտա գիդըմ չընք. գիդանք էլ կարեն չընք զուռնին ախին տինինք փչինք, չիւն վախըմ ընք ծէնան Ինգլիզի ճորէքը մին էլ խըտնին, խնդըլկին տան էլհա Կրիկէր պայուն թօվլան փախչին։

## ՋՈԽՈՆԱ-ՏՄԲԼԻ ԹԼՂՐԱՄՆԷՆ

*Տրանցվալ.* Բուրեր փաշին։ Պէն ա թա վէր մին էլ ճորէքըտ խըտնին, գիդա վէր Կրիկէր պային Թիֆլիսըմ պրալ գիժվըցրալ, կիրի վէր Բաքու, Գեանջա, եա Ղարաբաղ փալչու եա ջինգարու ասինք, կա Թիֆլիսմը քանդել տանք, թա չէ պէնները պխըրթ ա, Թիւքըտ ցրել կտան, քոշա տեւած տան կըքինաա։

*Ղարաբաղ ու Թիֆլիզ.* Սուրփ քեցօղներին. ասըմ ըք տարին իրեք հետ սուրփ ըք քինըմ, մատաղ մորթում, ամմա ծէր գլխեն խելի կգարվըմ չի եա սուրփ տարած նաշաղը մին բաբաթ օյամիշ չինըմ, սէրոընէտ կտրուած էլհա տան ըք կեամ։

Բալամ հինչ ասիմ. բունեան ուսալա քանի վէր մէր հայերըմը հիւքի հաւատ կար, մէր աչեր-խաչերն էլ շատ զօրաւոր ին, շատ հետ մէր աչքաւ տեսալ ընք եա մէր մըծերան հսկացալ, թա մին տան, վէր նաշաղը կծնըլրանար ծեաք եօր կուռնին, սուրփին անըմը կտին, իրեններին խշըհնին, վընընալէպէգ տակը քինին, նշանին անին, մին

օխտը ծռնդր տընին, խնոթինան հօր ունին, լիզ տին, մըրգացու վէչխարը մուրթին պըժին պէժին ընին, կըռաջան նաչաղը օյամիչ կինար, սաղ սալամաթ իւրան վէտուքը տոն կեար, լոխ էլ սածու փառք կտին, սուրփին զօրութինին մատաղ քինին, վէր խափ պարհխօս ա իլալ։

Մհէգ, մհէգ հինչ ասիմ, ա քմատաղ, էն ա հինչ սուրփեր փողրաթ տալը մօդայ ա ընգալ, վէչ սուրփերըմն ա զօրութին մնացալ, վէչ ժըղովուրթըմը հաւատ։

Ախր մին ասի տեսնամ. մին սուրփ վէր հօր օնին տօրգու տակ քցին, տարին 10 մանէթ, քիմ եուխարի ասին, փողրաթաւ տան, փողրաթչին էլ մէչին նստի գիւքան բազար պէնա, ժըղովուրթն էլ սուրփը թողրու չէն չինի մէչին վրքիզի տայ, բէֆ ու զող անի, էլ էն սուրփը իւրան տեղը կմնայ, իլած չիլած զօրութինն էլ հօր չօնէլ մին փախչել ու նշալին ալըցնելին տեղը՝ գեահի բեթար ցաւու տիրըցնէ՜լ....

Աստուած, ինքը ռահմ անի, հինչ ասիմ, սուրփերան խէյ՚րը նըպանըմ։

**Տմբլաչի Խաչան։**

# ՋՈՒՌՆԱ-ՏՄԲԼԱ.

*№ 3.*

## ՄԻՆ ՔԱՆԷ ԱՆՔՆՆԵԼԻ ՊԵՆԵՐ

Իմ աչքի լիս կըթեցող, զորթ ա ես մին տմբլաչի մարթ ըմ, մէր վըթըբըգներին եա օնվերսատըմ վըչըցրած ջահիլ-ջհիլներին մչանք կըթիցած չըմ, վէր կիրին տական էլ խըբար տամ, կլխան էլ ու խօսած վախտըս հանց լիւզվաթակ անիմ, լօխճու ռէխ ցեաքիմ, վէր մնան ցմաքուած, տաւար կտրած, եա մէծ գեռվլաթ չօնիմ, վէր տերտակ ու ցանցառ խօսած վախտս էլ կզակիս եչին, ֆեահ-ֆեահ անին ու պիրանիս շաղած սաղունձը իւրանք ռէխնէն քցին ծամին, հեալա գեռվամիչ էլ ինին խալխին մէչին թա ֆլանքեասին պրանին սաղունձն ա, ամմա մին ֆարմ անքննելի պեներ կայ, վէր տոնալու եա լուէլու մնըմ ըմ հիւլլա կտրած։

Ա՜.. քմատաղ, ախր հմնց չի մարթ հիւլլա կտրի, ցմաքուի, քանի վէր աչքընէս պեցալ ընք տեսալ՝ վէր ըշխարքըմըս սևը-սև ա, սիպտակը՝ սիպտակ. մհէգ այամը փոխուելին եղայ, նոր հաւեր ըն տիւս եկալ ըրկաթէ ծիւանքըն ածըմ, էրկու վէնը մին չըմըչքըմ տիրած՝ սըռըմ, թա լհա սևը սև չի, սիպտակն էլ՝ սիպտակ։ Ըրընակաւ ասիմ վէր հըկանաս։

1

Բուննան աւալա գոշշայ, ռաշիդ տղա կըսին էն տղին, վէր գուլգուրու բախս ընգած վախտը՝ ննհետը կռէյս կտար, կխուղայած ապրանքը ծեռքան կխլէր ետ պիրար, ետ էտ գուլգուրին արխնը կըկապար, քաշ.քշեղակու փայ անար։ Խոր գոշշայ տղին յոխ էյ թարիֆ կընէին, ա՜յ, իգիթ մարթ, քու մօր ծեծը քեզ հալալ ինի, անըմը չրու երգինքը կըհացընէին. ալաֆ ըխճըկերքն էլ գիւլիւմ հայ տալիս, իրանց մաքըմր կուրկուտ կըքցին, ընգրա անըմին էլ գիւլում եօր օնին, ընգրա լըսին խնթին։

Մհէգ էս այամին ուրէնքաւը գոշշայ ու իգիթ մարթը էն ա, վէր գուլգուր տեսած վախտը, թոր ու թրֆանգ, ջուբին իլած չիլած տայ, ինքը տեսաը ուէրտակ ծվանըը կտրած, ըրթըրթալի տան փախչի ու խալխը հրա մաթ ինի թա փլանքեաը եւ փլանքեասին տղան հանց գոշշայ մարթ ա, հանց գոշշայ մարթ, վէր գուլգուրին ըռըխան պըծալ ա, սաղ սալամաթ տան փախալ։

2

Բուննան աւալա գոշշայ կըսին էն տղին, վէր օխտը տարու խազայինի միւհտա մուտալա գուլլուղ կանար, օրը չըրու իրիւգինը չիշի տար, չիշի պեր բղարան տոն, տանան բաղար վազ կտար, խազայինէն սաղ օրը չանը քթան ճիւր կխմըցնին, օխտը տռնան ետը օխտը տարու էլ տարին մին քսան մանէթ գոլլուղ կտին, վէրչն էլ մին թուլուփայի ըռէխը կըքցին պեց թուղին։ Էտ չանը քթան ճիւր խմած գիւքանի տղան վէր կըպըկ կալէկ փող եա քցեյու, գարիբօթունըմ գեանք մշելու՝ մին քանէ չահի



բիստու տեար կտեռնար՝ մըթամէչ ընգնար, սաղ աշխարքը թարիֆ կանար, ա՜յ գոշշայ գուլլուղտար տղայ, լեաւ կըոխ տիւս պերաւ, ա՜յ աֆֆարիմ մարթ, լեաւ անըմ հանից, հալալ հացու էլ տեար տեռաւ։

Մհէգ այամը փոխուելին եա՝ գոշշայ, էն էլ մէծ գոշշայ ըն գիւքաններըմը, գաւօղներըմը եւ կանտորներըմը էն գուլլուղ անողնէն, էն մեղալը գեօշան ուած, օնվերստը վրշըցրած ինչինարնէն, օքնականնէն, գախըրգարնէն, հաշուապահնէն, վէր չանը ըթան ճիւր խմէլին տեղ՝ անջախ իրանց խազայիններին ըն չանը քթան ճիւր խմըցնըմ, արիւն քրտնոնք թփելի, նամուս գէյրաթ ընելի տեղ, գինքնէն ալեամ-գալեամութիւնի ուած՝ հանց պեներ ըն անըմ, վէր մարթ մնըմ ա շուարած։ Մին տեղ տեսնըմ ըս խազայինին գախըրն ըն կտրըմ քեասպար-պուք անըմ, մին տեղ օրը ցերեկաւ արկաթ-ըրկութ կիւզանըմ, օրիշի ծախս անըմ, փողը թըղզուցք անըմ, մին տեղ տափը ծակըմ, թաղ տամ, աըննու ֆեանդ ու ֆլաւ տրուքէք անցկըցնըմ՝ հըրվանին ըմբարին նոթը «Բարեկործական Ընկերակաւ» իրանց ամբարը հաքըմ, վէր համ իրանք խէրւին, համ խազայինը, համ էլ քեասիբ քիւսուք նեստա մին մաննը լըզտին, նոթու իչեգի հասրաթ չմնան. շատերը մին առնըմ ըն՝ էրկու կիրըմ, էրկու տալիս՝ մին հեսաբ անըմ, սև օրվա մհար ջուբ խաշըլըղի թուփ անըմ. շատ շատերը խազայինին մհար էրկու կպէկի պէն ըռնելուց եւ ծխելուց՝ գիշքիրահիսի ըն ինք օնըմ, եա մին պէն գիւզմիշ ընելի մհար ըրկլիսաւ եւ ճրըքլիսաւ հարկաւէր տեղը տեսնըմ. մախլաս էս այամին գոշշայ

տղան էն ա, վէր սոտ ասի, կեօղոթուն անի, փող կոլ տայ աչքեր կապի, խաղալինի ըռաշին կլըսնդրէգի տայ, քեալ-լամլալլախ կաղնի, կատու տեռնայ, դըրայ տեղը հեարը գեօռ բա գեօռ անի, օխտը պորտը տիւս տայ, հալալ ըշ-խատանք թողած՝ հինչ փեանդ ու փիլ ասիս պնըցնի, վէր բուլամա փող թուփ անի, մին քանէ տռնըմը էտ հարամ փուղերաւը ինքն էլ խաղալին տեռնա, ինքն էլ աշխարքը իւրան կերի չինի…

Ամմա տու եկ Ամու պէնին եշի, վէր հէնց իտի նոթ կխեղանող, դախըլը կտրող, ջուրգիր, գիշերահեփ առնող, աֆաշկարա մօրը ծծան կտրող մարթոց պէնն ա օնզատ, էս այամըմը իտի մարթոցն ա ժողովուրթը պա-տիւ տամ, ընդրանց անըմաւր իւրթիւմնը օտըմ, իւրան խուխոցը ընդրանց թուշ անըմ, չըու խաղալինէն իւ-րանք իւրանց քոռ աչքաւը ընդրանց ըրարմունքը տես-նըմ ըն, ամմա էլհա փիս՜ըմ, փիս՜ըմ ըն անըմ, սղալըմ, ղոշչաղ, ըշքապեց տղայ ա, լթարիփ անըմ, դահի մէծ պատուի արժանացնըմ…

3

Բուննեան աւալա ղոչչաղ կըսին էն գերին եա վրթը-բեգին, վէր իւրան ժամին, պադարաքին հաստատ կըկէ-նար, վէտուք եա ծխաւ չոխըը կընդնար, ժողովարարու-թիւն կանար, իւրան ժամին վանքին պայծառութեան մհար ջան կտար․ եա գեալի Մեահրասին նման կխապերցը չար քարը կշինար, եօրղան գեօշակը ծմըկներին խաշէմնը ու խատը ու կլօխը ագկի եօղուրին տիրած՝ թողել չար թուք,



չոն, կխուլ հային մին մաղին էլ ա նի կեան, ընդրա ի-լածին քոռ աչքաւ եշին։

Մհէգ այամը փոխուէլին եըայ՝ ղոչչաղ ըն մէր էն պորտը եղըկալած գերերն ու վրթըըրդնէն, վէր խան խանդաղա տեռած՝ խուցերը մտած՝ ըշըհամփիւրին ըն զօռ տամ, իւրանց ըրարմունքին եըայ լեաց ինէլին տեղ, աղ-կին մհար ըն կխլու ըրտասունք թափըմ, եա կապընէն կտրած՝ իւրանց ջուրին պայծառութեան մհար ըն ջան տալիս․ կխլու, չղալու ըռեխ ճղելի տեղ, մին մինու ռէխ ճղոտըմ, մնատակ քանդըմ․ քրօղաւ, չըըկնաւ ժըղո-վուրթին խրատէլի, սէրտը կըկըղցնելի տեղ՝ անջախ իւ-րանք մէջլիսներըմը եա քինջ ու պուճախըմ քշերնէն լու-սըցնըմ, օտըմ, խմըմ, քէֆ անըմ, չխքասար եօր օնըմ, կարտի տըըքցնըմ, եա չէ դամերին կակուղ դամարը քթած՝ նհեռնէն խօշ բեշ անըմ—Օսաննա՜, օրհնեա՜լ, եկեա՜լ-կան-չըմ… ամմա տու եկ ասծու պէնին եշի, վէր էլհա իտի գերերին, վրթըըրդներին անըմն ա պեցուր, ընդրանք ըն ըշխարքիս ղոչչաղնէն։

4

Էս այամին ուրէնքաւը պակաս ղոչչաղ չըն մէր ա-գլիղ մեագլիղ պահած ըխճըկերըը—էն աւալքի տառոնու ճը-տերը, վէր մայա-տվայան սվըրէլան եար, հանց հաւալա միշ ըն իլալ, կասիս ըշխարքիս գիդութինը լոխ կոլ ըն տուալ ընդեղ նստալ․ հեալա ըշխարքիս խէրին չառին բէյ-խաբար՝ կապընէն կտրըմ ըն, մէյդան ընդնըմ, ջահիլ ջհու-լու նհեռ սիլիբիլի անըմ, ռանդէվու սարքըմ, կլոխ եղըմ, փեսայ ճարըմ, մարթի քինըմ, մարթան տիւս կեամ ճոկ

մարթ ճարըմ, ու իրանց հարերն ու մարերը մնըմ ըն գինաքար, կարըմ չըն օհտանեըան կեան, տանեւ անըն։

5

Դուշշաղ ըն, էն էլ շատ դուշշաղ իւրանց մարթոց խէլքըն փուչի անող՝ օրիշ մարթոց քմակյան ընգած գեօղալ խանըմնէն։

Դուշշաղ ըն, խակի այիբ չօնի նշային զուր տեղան էն գինեան զարկող հեպքիմնէն, նա սանալաննի տակոյ-սեակոյ ստատեաւ խօսող սեր սխալըկյնող. սխլտակը սըրըյնող սալակատնէն, այիփ-ժէ-ճէ-ւայաւ պեներ դեւղմիշ անող փոցեր կոլ տուող զամի չըննէն, կնդըստորու անթամնէն, չհարլին ըխտըեարը ծեռ.քին՝ գէրը եօ ըմ գեցն, տասղնէն։

6

Դուշշաղ ըն էն էլ թեամիւղ դուշշաղ սեըքաշա շտացած մէր մալլերնէն, էն մալլէրնէն, վէր ըռըվատան չըու խուխուլինը, անդուճնէն խըրշած, աչքընէն տուղ տւած՝ ման ըն կեամ, մին առուծախսի վէտ եր իլած վախտը նի հնըմ, խաղայիններին աչքին իշեղը կորըմ. դեարվիշու նման «եա հախկ ասըմ» նաջաղը վէր թողըմ, չըու եաւաշ եաւաշ աֆսունըմ, խօսքաւ վէսկի կարմունջնէ չինըմ, էտ խաղայիններին տանըմ կարմունջին կլխան թուլ տամ, իւրանք իւրանց ջաֆահալսկին ինք օնըմ եա տեւնըմ, մհէգ էլ օրիշ խաղայինու կարմունջան թուլ տալու փողրաթը եօր օնըմ։

7

Էհ, քանէ մինն ասիմ. էս այամին ուրէնքաւը զարմանալի դուշշաղ ըն իւրանց հեան ու թեփուռը կուրցնող



տան կորողնէն, մարթասպաննէն, զումարբազնէն, կարտոժնիգնէն, մէծ կինի եա աղայ խմողնէն, օթ ածան բողբաշ, վեց ճոխտ քիփթա ուտողնէն, կնէգ եա ախճիգ փխշըցնողնէն, ըսթի, փաթի, անիրեա, սիլեթա, բիարուռ մարթէք. վէր վէչ ըստուծանայ ըն վախըմ, վէչ մարթա հմանչըմ, ու սոր Բաքուն եա սաղ կաւկազը լըւալ ըն ու մինը կա վէչ ընդրանց ընդուճներան՝ փուշի հըտի, եա ըրեանիրին թքի, կողընէն քաշի, յոլ նշանց տա։

Ախր իմ դեարդըս էն չի, վէր խափ ընգասըլ մարթկանցաւ. շաւլատաննեըաւ երգիր աշխարք լցըլըմ ա, պատիւ, ոէր էլթիրար մէշ տեղան եր կէնըմ, մէծ գեարդս էնա, վէր պուճուրն էլ աչքը պէնըմ ա, մէծին յըլցաւը քինըմ ու հալալ աշխատանքաւ ապրող. նամուս զէյրաթ անող արուան իրեանն մարթէքը վընըտակի կորչըմ ըն, տան տնաքանդ տեւնըմ, կէճն էլ չօլին արալըմը էրվըմ։

Մհէգ ծէգ ըմ հըցնըմ, ա կիրին տակն էլ գիգող. կոխն էլ օսանեա կանչող հաւքեւոր գերեր, ծնվերաշը վըշըցըած եա անիրշըցնելի Շիլլէր, Շէքսպիր, Գէօթէ, Սալէնսէր, Բոկըլ, Դարվին, Մոնթէսքաց, Ադամսմիթ եւ հինչ գիդամ Լեգի Սմիտ անկիր ըրած ժըժըպապա անող աղկի պարծանքս լուսըթափթախ ջահիլ ջհուլնէ, էս անքննիկի պեները տեսած՝ հօ՞նց չի Տմբլաշի Խաչանը հիլըա կորի, մաքին զոնն ընկնի, հեալա ծէր լեռաւորութիւնն էլ ընէծի, ծէր կիրն էլ, ծէր կարթմունքն էլ։

## ՀԱՅՈՑ ԹԻԱՏՐՐԸ

«Ախճի, Հուռի, տու էլ էն օրը թիատր քեցի՞ր։

—Վե՞ր օր։

«Էն օրն է, վէր ասմին Սիրանուշին պէնը-ֆիս ար։

—Հա ընդեղ ի, էնքան մարթ ար հուաքուալ, վէր ասեղ քցելու տեղ չի կար. ասըմ ըն Ալէքսանդրին պէնը-ֆիս վախտը խիկի էնքան խալխ չիլալ։

«Հեւ վէր հուաքուալ ին, պէնը լացմու։

—Հըտեղ լացալ, մէր Բաքուա խանըմնէն տեսին վէր պէնը-ֆիս ա, ինքը նաչար, խօխան հետան լեաց ինըմ, գեաստի խրանից մէչ փող հըքեցին, կանվերտ կանվերտ գրկեցին։ Աստուած էրգեան ումրը տայ մէր ջահի ջհուլին, մին խիլա պաղարկէք էլ ընդրանք ուլին. զորթ ա ընդրա երա մին խիլա վախտ Սիրանուշին ունքամէչը եռ քինից, ամմա վերչը էն գեահրըմար ազարը թիւնդվից, խօխան քվարը թախշուր ըլաւ, ինքը թէք ընդաւ գեաստի մէռաւ։

«Հո՞ւնց թա մէռաւ-րա մէր անամերն ասմա էրէգ կոլտանը պէց սարքուած, գրեհուած էն ար հայոց վեչել ըըմը, նհեան էլ խօսալ ա։

—Ղո՞րթ։

«Քու ալիղ արևը. խէ ես քեղ սոտ ըմ ասըմ։

—Վա՜յ քու ծամը կտրուի, ախճի հինչ եռ եկած կնէգ ա իլալ էտ Սիրանուշը. ախր ես էլ ասիմ համին էտ օրը անըմը խէ ար փոխալ Զաֆառ տիրալ, տու մէ ասէլ մուկըմը օրիշ պէն ա իլալ. թա չէ հինչ ասէլ ա աֆիշկաներըմը տիպիլ, չաւ քցիլ, թա պէնը-ֆիս ա, խալխը



քինան տեսնան հեալը խարաբ, փող հաւքին տան, վէր քինա տաք ճիւր, հեաքիմ ընդնի, ինքը ընդեղ ոտըստ մէռնի, ըհա վէր խալխը հռանան, փողերը տինի ջուբըմը, փայտոն նստի, մին պուքի, էքսն էլ իրես ինի կլոխ քինա, հայոց վէչերին մեազըրա ընդնի։

«Վո՜յ քու աչքերը քուռանայ, ախճի ժմընակիս կնանէքն էլ ըն ալամ գալամ տեռալ, ըհա տըըմարթոց անըմն ա բեղնամ։

Էհ, էլ հօրը՞ս ասըմ է...

## ՀԱՅՈՑ ՎԵՉԵՐԸ

«Ախճի Սալբինազ, ասըմ ըն տու էլ ըս հայոց վեչեր քեցալ, ղո՞րթ ա։

—Հա՛. պլակէն, քեցալի, վէչ պիտի քեցած։

«Խէ՞։

—Հունց թա խէ՞. ըս մարթ աչքերը պեց իրեք մանէթ կտայ, թա քինըմ ըմ օխտը սհաթաւ վէննիս երա մեխուիմ, բափ ու բռտընքըմ կորչիմ, թա հինչ ա մին քանէ դեօշն ու խըզատաինէն պեց հայասդեր ընդեղ խտետ խտետ իլած՝ պար ըն կեալու, թմաշա անէ՜մ։

«Հունց թա դեօշն ու խըզատակնէն պեց, խէ՞ ցիրկ ին պար ածըմ։

—Է՜հ, հու ա գիդըմ է մէր ղըմիչ իլած մըծմըծոնաց աղաթը, ասըմ ըն մհէգ մօղան ընդըհենց ա, վէր բալերըմը եա վեչերներըմը դամերը կէսանը երը պեց բեզմա տիւս կեան։ Հեալա էտ քարը կլոխ, տու էն չըս ասըմ, վէր մին քանէն խրանից ջանաթը ռանդ ին տւալ,

վէր սիպտակ վլլամաղ իրեան, եա չէ մէչքներին վէսկու նման մին թող ին չաղ տւալ, վէր փլոտրատի տան, թմաշա անողնէն գիղան հունց վէր տխտ կուսն ա, ընգհենց էլ նեսկուսն ա չափալը։ Հեալա էտ էլ տէնը տինինք պլակէն, վէր էտ վէչեր եկողներին կեցուածքին եշիր, մաթ կմնիր. էլ մագաղիններըմը ալի ալան խաս կտորնէ, կրուժվէք, զառեղէն չար մնացալ. ըլե երայ ին տւալ, քար քրեզանին, գինեաթին մհար հ՞ինչ ասիմ.—գեօշըրներին, ծեռքըններին, կեօլընէրին, կլխին երայ, մազերին արալըներըմը կոխելու էլ տեղ չին քթալ՝ չըռւ կճիպներին երայ էլ ին պնդըցրալ…

«Վա՜յ տուք իմ ցւըս քաղիք հա՛. էտ ա ըռլհենց ըն անըմ, վէր իւրանց մարթէքը կրկլխտու ըռէխ ըն ընգնըմ, Է. եանա՜ն։

—Եանան կն՝ վէր էտ խզատակը պեցերը մին թեռգա հաւա էլ պար եկին, խեկի խէլըս գտա չի կտրից նեստա։ Մին գամա մին կաւալէր կռնըփռնուկ նի ին մննըմ, մին էրկու վէննը քինըմ, մին մինու ըռաչի կաղնըմ, քըլմտըլմ, մին մինու ըռըխի եշըմ, ծնգըռնըմ, եանան բիրդանը բիրդ գաման կռանըմ ա՝ կասիս օղըմ ա էն գահըրմար կտրած պէնը գիւղըցնի, եա չէ վէննը ճմալա՝ վա՜յ վա՜յ անըմ կռանըմ էլհա գիւզվըմ, մին պատռւ քինըմ, մհէգ էլ ճլըռըմ, ըհա մինը օսկրան փռնած երա հարըմ ինի, եա չէ պցրանըմ, գերկան փռնըմ եր քաշըմ, վէնները նշանց տամ, մէչքին երայ ուրօրվըմ, տրըրվըմ, էլհա կաւալէրին ըռխին եշըմ ծնգըռնըմ։

«Ախճի, էնքան մարթին մէչի՜ն։



—Բա հչտե՞ղ։

«Բա՛ րա՛, րա՛, նեռը ծնվալ ա. էսքան տարվա պռշըս սիպտակ կնէգ ըմ, հո՞ւ ա խտի պէն տեսալ եա հոկացալ։

—Պլակէն, եանան գիդըմ ըս հ՞ինչ իլաւ։

«Հ՞ինչ։

—Մին քանէ կապը կտրած ջահիլնէ, ջուբըներան կանանչ կեարմուր ծիպծիպ թըլթու պտըռնէն հավուռ հավուռ հանըմ ին, էս գամին ըռըխաւը տամ, էն գամին խզատակնը վէր ածըմ, եա փչեչներին չաղ տամ։

«Բա էտ գամերն էլ թողըմ ի՞ն։

—Հունց թա թողըմ ին, ըհա իւրանք չին կլխընէն տէմ անըմ, վէր հինչա խալխին մէչին գեովամիշ ինին, թա տեսէք տեսէք հինչքան կաւալերնէ ունիմ ու հինչքան ինձ սիրըմ ըն, վէր իրեք կպէկու թըլթու պտըռնէ ըն կլխիս զուրբան անըմ։

«Վերչ՞ը։

—Վերչը էն, վէր տեսի էտ հայասզերը օրիշ պեներ էլ ըն ընելու, անսէս ըռըհելըս բշեցի, սըված ծարաւ, վէնները փշըրվըմ տան եկի։ Էքսը հոկացի վէր ինձանա եար էտ կաւալերներան ու գամերան շատերը խըրխը երա հանց թքացալ ըն, հանց խփ եկալ, բուզմիշ իլալ, վէր պատառ ա մնացալ զալին մին քինչըմը չինած կանանչ կեարմիր պատերանի սանըրխանան հեալ ընգնի, լոխճու ճրախեխտ անի։

## ՂԱՐԱԲԱՂՑՈՒ ԱՂՕԹՔԸ

Ա., հռնային Սահըծող,
Բեանդիտ հաց տո ուտելու,
Առանց քեզ էլ գործ ա մունք
Իլլաչ օնինք ապրելու։

Շատերան մունք խափըլըմ ընք,
Շատերին էլ մունք խափըմ.
Ամընան օր փեանդ-փիլաւ
Սոխւր ընդիւր պըռկըմ։

Քեզ յայտնի ա ըստըհենց ա
Մէր ըշխարքին ադաթը,
Թա վէր մին օր սոտ չասինք,
Հո՛ւնց կապրի մէր քիւլփաթը։

Կարճն ասիմ մէր կործըմ,
Թա վէր ծիք պուք չի անինք,
Մէր փաթիրի ապրանքը,
Խալխի տեղ չծախինք,
Հալալ ջաֆան տէն տիրած՝
Հարամ թիքայ չխառնինք,
Սև կտեռնա մէր օրը
Հազարներ էլ ըշխատինք։

Ինձ ըղագի փուրցանքայ,
Թա տան լինիմ թա տռան,
Կուրցրու վէննը էն մարթոց՝
Վէրունց ես ըմ պըտական։



Ամմա կեանք տուր էն մարթոց,
Վէր պարտ ըն ինձ վէրսիլաւ,
Վէր իմ գեօզալ փողերը
Ես ստանամ իւր չահաւ։

Ընդըրանց եախան ծեռըըս տո,
Թա վէր պէն ա չիւտ մէռնին,
Վէր էն գիւնիըմ ռեաստ կեալուց,
Պկան փռնիմ ինք առնիմ։

Թա վէր Աստուած էս մինն էլ
Պարեհաջիս կտարիս,
Համարեա թա ոժոխկան
Արքայութիւն կհանիս,

Հեարխւր տարի գեանք տո ինձ,
Շատ չի պահանջըըս մին միլիոն
Կեարմիւր թեազա տասանուց,
Մին ապրուստ էլ իմ վէրթուց։

Իսկ էն կեալիք ըշխարքըմ
Քու արքայութիւնը օզըմ չըմ,
Ինձ հրաման տո մէն մինակ
Վէր ծախս անիմ պիւրթ, պէմբակ։

Մին էլ պէն ա էն գիւնիըմ
Նոթի վէգերը կին քինան,
Սաղ ըշխարքիս վէգերը
Հրամմայի վէր ինձ տան։

Թուրուզ տինիմ քու քէֆի,
Ֆանտաններըս փափուան,
Սև ու սիպտակ նօթերըս,
Ախմիշ իլած՝ ծով տեւնան։
Պարախողնէս գաւօղնէս
Քշեր ցիրեկ պէն քցիմ,
Քեասիբութեան իմ քարը
Մին թուլուլ տամ, տէն քցիմ։
Էն վախտը հա՛, ես կասիմ,
Աստուած ինձ էլ ազօրմից,
Ու մին կուտուր կակուղ հայ
Իմ քիւլֆաթին պարքեից։




Ծախւում է Բագու՝ Տ. Ղ.ոնդաղսազեանցի խանութում։
Թիֆլիզ՝ Կեդրոնական գրավաճառանոցում:

2013

13593